Վ.Բ.ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

(Համառոտ տարեգրություն)

Գիրքը ներառում է ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի 60-ամյա տարեգրությունը: Այստեղ պատմվում է ինստիտուտի հիմնադրման, երկարամյա ուսումնադաստիարակչական, գիտամեթոդական, մարզական, կազմակերպչական, հասարակական գործունեության մասին:

Երևան, 2005

© Առաքելյան Վ.Բ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԱՀՐԱՄ ԲԱԶՄԱՍԵՐԻ

Ֆիզիկական կուլտուրայի հայկական
պետական ինստիտուտի ռեկտոր,
Հայաստանի Հանրապետության
ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի
վաստակավոր գործիչ,
մանկավարժական
գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՄԱՌՈՏ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ 1945-1990 ԹԹ.

Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը 60 տարեկան է: Այդ հոբելյանը տոն է ոչ միայն ինստիտուտի ողջ կոլեկտիվի և ուսանողության համար, այլև ինստիտուտի բազմահազար շրջանավարտների համար, որոնք աշխատում են մեր հանրապետության բոլոր քաղաքներում և շրջաններում, ինչպես նաև արտասահմանում: Իր երկարամյա գործունեության ընթացքում ինստիտուտը վերածվել է բարձր որակավորում ունեցող մասնագետների և բարձրակարգ մարզիկների խոշոր ուսումնական, գիտական ու մեթոդական կենտրոնի և կարևոր դեր խաղացել հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման գործում:

Ինստիտուտի պատմությունը սկսվում է 1930 թվականից, երբ Երևանում կազմավորվեց ֆիզիկական կուլտուրայի տեխնիկումը՝ եռամյա ուսուցման ժամկետով: Փաստորեն դա առաջին մասնագիտական ուսումնական հաստատությունն էր հանրապետությունում, որը պատրաստում էր հանրակրթական դպրոցներում ֆիզիկական դաստիարակություն դասավանդող կադրեր: Տեխնիկումի առաջին դիրեկտոր նշանակվեց ֆիզկուլտուրային շարժման հայտնի գործիչ Ա.Չարչողլյանը: Իր առաջին շրջանավարտները, թվով քսաներկու մարդ, տեխնիկումը տվեց 1933 թվականին: Գոյության ութ տարիների ընթացքում Երևանի ֆիզիկական կուլտուրայի տեխնիկումը պատրաստել է հարյուր վաթսունհինգ մասնագետ: Բնականաբար, այս փոքր ուսումնական հաստատությունը, նրա շրջանավարտների որակական մակարդակը չէին կարող լուծել հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի մասնագետների խնդիրը: Առաջացավ սովորողների քանակակազմը ավելացնելու, հատուկ բարձրա-

գույն ֆիզկուլտուրային ուսումնական հաստատություն ստեղծելու հարցը:

1940 թ. ապրիլին հանրապետության Նախարարների խորհրդին կից Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի կոմիտեն և Լուսավորության ժողովրդական կոմիսարիատը դիմեցին Հայաստանի կառավարությանը խնդրանքով՝ ստեղծել ֆիզկուլտուրային բարձրագույն կրթությամբ ազգային կադրերի պատրաստման ուսումնական հաստատություն: Տվյալ պահին հանրապետությունում արդեն գործում էին 62 բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ, 96 միջնակարգ և թերի միջնակարգ դպրոցներ, 70 շրջանային ֆիզկուլտուրային կազմակերպություններ և կամավոր մարզական ընկերություններ, 768 արտադրական և գյուղական ֆիզկուլտուրային կոլեկտիվներ, սպորտով զբաղվողների ընդհանուր քանակը հասնում էր 382 հազար մարդու: Այսպիսով, մասնագետ կադրերի պահանջը շատ մեծ էր: Միայն հանրապետության դպրոցների համար պահանջվում էր ֆիզկուլտուրայի 900 դասատու: Առաջարկությունը հավանության արժանացավ: 1940 թ. հունիսին հանրապետության Ժողովրդական կոմիսարների խորհուրդը որոշում ընդունեց մանկավարժական ինստիտուտին կից ստեղծել ֆիզիկական դաստիարակության ֆակուլտետ:

Ֆիզիկական դաստիարակության ֆակուլտետն իր աշխատանքները սկսեց 1940-1941 ուսումնական տարուց՝ առաջին կուրս ընդունելով 50 մարդ:

1941-1942 ուսումնական տարում առաջին կուրս ընդունվեցին 150 մարդ: Սակայն երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ֆակուլտետի ուսանողներից շատերը մեկնեցին գործող բանակ և 1942-43 ուստարում ֆակուլտետն ավարտեցին ընդամենը 17 մարդ:

1943 թ. Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտին կից ֆիզիկական դաստիարակության երկամյա ֆակուլտետը վերակազմավորվեց քառամյայի:

Պատերազմից հետո նորից առաջացավ ֆիզիկական կուլտուրայի ինքնուրույն բարձրագույն ուսումնական հաստատություն ունենալու անհրաժեշտության հարցը:

Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Ժողովրդական կոմիսարների խորհրդի 1945 թ. հուլիսի 21-ի

N 557 որոշման համաձայն՝ Հանրապետական սպորտկոմիտեի համակարգում ստեղծվեց Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը՝ քառամյա ուսուցման ժամկետով: Առաջին կուրս ընդունվեց 60 մարդ:

Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի հիմնադրումը ունեցավ կարևոր պատմական նշանակություն հայ ժողովրդի կյանքում:

Առաջին անգամ Հայաստանում ստեղծվեց հատուկ բարձրագույն ուսումնական հաստատություն, որը կոչված էր պատրաստելու բարձր որակավորում ունեցող ազգային կադրեր՝ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի համար: Ինստիտուտի առաջին տնօրեն նշանակվեց ֆիզիկական դաստիարակության բնագավառի խոշոր մասնագետ, Մոսկվայի ֆիզիկական կուլտուրայի կենտրոնական ինստիտուտի շրջանավարտ Հայկ Եսայու Փարսադանյանը, որն աշխատում էր հանրապետության Ժողովրդական լուսավորության կոմիսարիատում՝ ֆիզիկական դաստիարակության բաժնի վարիչի պաշտոնում:

Նա ինստիտուտի տնօրենի պաշտոնը զբաղեցրեց մինչև 1953 թ. հուլիսը: Հ.Փարսադանյանի ղեկավարությամբ ստեղծվեցին բոլոր հիմնական ամբիոնները, կարգավորվեց տեսական և մարզամանկավարժական առարկաների դասավանդումը:

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ նշանակվեց Բաքվի ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի շրջանավարտ Ա.Ն.Օհանովը, իսկ 1947 թ.-ից մինչև 1951 թ. այդ պաշտոնը զբաղեցրեց Մոսկվայի ինստիտուտի շրջանավարտ, ապա դասախոս, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի հայազգի առաջին մանկավարժական գիտությունների թեկնածու՝ Ա.Օ.Գալուստյանը:

Արդեն 1945 թ. սեպտեմբերի 14-ին ինստիտուտի տնօրենի հրամանով ստեղծվեց ընդունող հանձնաժողով հետևյալ կազմով՝ Հ.Ե.Փարսադանյան (նախագահ), Մ.Մ.Առաքելյան՝ Սպորտկոմիտեի ներկայացուցիչ (անդամ), Գ.Ա.Մինասյան՝ բժշկական գիտությունների թեկնածու (անդամ):

1945 թ. սեպտեմբերի 25-ին N 10 հրամանով ստեղծվեց քննական հանձնաժողով՝ քիմիա, ֆիզիկա, հայոց լեզու և գրականություն առարկաներից:

Սեպտեմբերի 17-ից 30-ը կայացան ընդունելության քննությունները: 120 դիմորդներից ընդունվեցին 84-ը: Բացի այդ, Հայկական մանկավարժական ինստիտուտի ֆիզիկական դաստիարակության ֆակուլտետից երկրորդ կուրս փոխադրվեցին 36 ուսանող: 1945 թ. հոկտեմբերի 1-ին ինստիտուտում սկսվեցին ուսումնական պարապմունքները:

Դասախոսական կազմը, որը բաղկացած էր 26 մարդուց, լրացվեց ֆիզիկական կուլտուրայի բնագավառի աշխատողներով, որոնք ունեին մանկավարժական և մարզչական աշխատանքի փորձ, ինչպես նաև Մոսկվայի, Լենինգրադի և Անդրկովկասի ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտների շրջանավարտներով, բարձրորակ մանկավարժներով:

Առաջին դասախոսների թվում էին Մ.Գուտովը, Գ.Սաֆարովը, Պ.Բոյախչյանը (մարմնամարզություն), Մ.Մամիկոնյանը, Կ.Վարդանյանը (սպորտային խաղեր), Ա.Աղյանը, Հ.Գասպարյանը (սուսերամարտ), Ա.Նազարյանը, Ա.Կարապետյանը (ծանրամարտ), Ս.Սավելևը (լող), Ա.Մովսիսյանը (մանկավարժություն), Է.Բաղդասարյանը, Ա.Մակինյանը (ռուսաց լեզու) և ուրիշներ: 1945 թ. դեկտեմբերի 8-ին բացվեցին 13 ամբիոններ. սպորտային խաղերի (ամբիոնի վարիչ Ա.Ն.Օհանով), աթլետիկայի (ամբիոնի վարիչ Ա.Ա.Տեր-Հովհաննիսյան), լողի (ամբիոնի վարիչ Ս.Վ.Սավելև), անատոմիայի (ամբիոնի վարիչ Հ.Մ.Հակոբյան), ֆիզիոլոգիայի (ամբիոնի վարիչ Գ.Պ.Մուշեղյան), հոգեբանության (ամբիոնի վարիչ Մ.Օ.Մուրադյան), լեզուների (ամբիոնի վարիչ Գ.Գ.Մակարյան), բուժական ֆիզկուլտուրայի (ամբիոնի վարիչ Ա.Տ.Տիգրանյան), ֆիզիկական կուլտուրայի պատմության և մեթոդիկայի (ամբիոնի վարիչ Հ.Ե.Փարսադանյան) հիգիենայի և բժշկական վերահսկողության (ամբիոնի վարիչ Գ.Ա.Մինասյան), ձեռնամարտի և սուսերամարտի (ամբիոնի վարիչ Հ.Գ.Գասպարյան), մարքսիզմ-լենինիզմի հիմունքների (ամբիոնի վարիչ Վ.Կ.Հարությունյան), զինվորական գործի (պետ Օ.Ա.Մինասյան):

Վարչատնտեսական աշխատակիցների թիվը 1946 թ. հունվարին կազմում էր 21 մարդ: Տնտեսական մասի առաջին վարիչ նշանակվեց Մ.Ի.Ծովիկյանը, որն աշխատանքին վերաբերվում էր առանձնակի պատասխանատվությամբ և մեծ ներդրում ունի ինստիտուտի նյութատեխնիկական բազայի ամրապնդման գործում: Ուսումնա-

կան գործունեությունը սկսվեց մեկ՝ մանկավարժական ֆակուլտետի ստեղծումով, որը նախատեսում էր հանրակրթական դպրոցների, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների համար «ֆիզիկական կուլտուրա» առարկա դասավանդող մանկավարժների պատրաստում:

Ինստիտուտում հաստատվեց մարզական մասնագիտացում հետևյալ մարզաձևերից՝ մարմնամարզություն (սպորտային և գեղարվեստական), դահուկասպորտ, ֆուտբոլ, թենիս, ձեռքի գնդակ, բասկետբոլ, վոլեյբոլ, սուսերամարտ, ծանրամարտ, ըմբշամարտ, բռնցքամարտ, լող: Բոլոր ուսանողները, բացի ընտրած մարզաձևի ուսուցումից և կատարելագործումից, 4 տարիների ընթացքում յուրացնում էին նաև բազմաթիվ այլ մարզաձևեր, ուսումնասիրում էին հասարակական-քաղաքական, բժշկակենսաբանական, հոգեբանամանկավարժական, մարզամանկավարժական առարկաներ և լեզուներ:

Մանկավարժական պրակտիկան ինստիտուտի ուսանողներն անցկացնում էին դպրոցներում: Պրակտիկայի ժամանակ ուսանողները ստանում էին ոչ միայն դասերն անցկացնելու հմտություններ և իմացություն, այլև օգնում էին դպրոցական կոլեկտիվին մարզական մրցումներ և տոնախմբություններ կազմակերպելու գործում:

Ինստիտուտի կայացումը անցնում էր դժվար պայմաններում: Երիտասարդ ինստիտուտը կանգնած էր բազմաթիվ հիմնահարցերի լուծման անհրաժեշտության առաջ: Ուսումնական պարապմունքները սկսվեցին Աբովյան փողոցի վրա գտնվող Հանրապետական սպորտկոմիտեի շենքում: Ինստիտուտին հատկացվեց 11 սենյակ, մեկ մարմնամարզական դահլիճ և լողավազան: Սա, բնականաբար, չէր կարող բավարարել ներկայացվող պահանջները: Բացի այդ, մի շարք կարևոր տեսական և մարզամանկավարժական առարկաներ ապահովված չէին դասախոսներով: Մեծ թվով առարկաներից բացակայում էր ուսումնական գրականությունը, հատկապես հայերեն լեզվով: Չնայած եղած դժվարություններին՝ երիտասարդ կոլեկտիվի համար առաջին՝ 1945-1946 ուստարին, անցավ կազմակերպչական և ուսումնական լարված աշխատանքի պայմաններում, որի արդյունքում հաջողվեց ամբողջությամբ կատարել ուսումնական պլանը և ստեղծել որոշակի պայմաններ ուսումնադաստիարակչական և զագվածային մարզական աշխատանքների համար:

Ինստիտուտի աշխատանքային պայմանները զգալիորեն բարելավվեցին 1946 թ., երբ նրան հատկացվեց «Դինամո» մարզադաշտի մոտ գտնվող դպրոցի շենքի մի մասը: Այստեղ դասախոսների և ուսանողների ակտիվ մասնակցությամբ կահավորվեցին 8 լսարան, 4 կաբինետ, գրադարան՝ ընթերցասրահով: Կառուցվեցին մի քանի անհրաժեշտ մարզական բազաներ (մարմնամարզական դահլիճ, բասկետբոլի և վոլեյբոլի հրապարակներ, թենիսի 2 կորտ, ֆուտբոլի խաղադաշտ): 1947 թ. մարտի 3-ին հաստատվեց ինստիտուտի Գիտական խորհրդի առաջին կազմը, որը բաղկացած էր 19 մարդուց: Խորհրդի նախագահ ընտրվեց ինստիտուտի ռեկտոր Հ.Ե.Փարսադանյանը, գիտքարտուղար՝ մանկավարժական գիտությունների թեկնածու Ա.Ա.Տեր-Հովհաննիսյանը: 1948 թ. ինստիտուտի համար անչափ պատասխանատու տարի էր. ինստիտուտը տվեց իր առաջին շրջանավարտները: 42 շրջանավարտ ստացան ֆիզիկական դաստիարակության մասնագետի դիպլոմներ: Նրանցից շատերը մնացին ինստիտուտում՝դասախոսական աշխատանքի: Այդ շրջանավարտներից էին Մ.Մ.Մամիկոնյանը, Մ.Մ.Վեքիլյանը, Ռ.Յա.Ջուղանյանը, Ա.Վ.Սոկրյուկովը, Բ.Ա.Մելիքյանը, Ա.Մ.Մինասյանը, Ն.Վ.Հովհաննիսյանը և ուրիշներ:

1949 թ. ինստիտուտի երկրորդ շրջանավարտների թիվը կազմեց 28 մարդ: 1950 թ. ինստիտուտն ավարտեցին 55, 1951 թ.՝58, 1952-ին՝ 62, 1953-ին և 1954-ին՝ 77-ական, 1955-ին՝ 85, 1956-ին՝ 109 մարդ:

Հայաստանի կառավարությունը ամեն տարի ավելացնում էր ինստիտուտի ընդունելության պլանը: Եթե 1946-47 թթ. ուստարում ինստիտուտի առկա բաժին ընդունվեցին 75 մարդ, 1952-53 ուստարում՝ 150 մարդ: Բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստման նպատակով 1954 թ. ինստիտուտում ստեղծվեց հեռակա բաժին: 1957 թ. հեռակա բաժնում արդեն իսկ սովորում էին 246 մարդ: Հեռակա բաժնի առաջին շրջանավարտներից էին ֆիզկուլտուրայի և սպորտի բնագավառի անվանի մասնագետներ Ա.Գարգալոյանը, Գ.Դուրգարյանը, Ե.Գալինսկին, Յ.Մաթևոսյանը, Գ.Մարգարյանը, Ա.Ստեփանյանը, Ա.Կոստանյանը, Ա.Հակոբյանը և ուրիշներ:

Առաջին 15 տարիների ընթացքում ինստիտուտն ավարտել են 1240 մարդ, որոնցից 204-ը՝ հեռակա բաժինը:

1959-60 թթ. ուստարում ինստիտուտի առկա բաժնում սովորում էին 356 ուսանող, հեռակա բաժնում՝ 165: 13 ամբիոններում աշխատում էին 77 դասախոս և 34 լաբորանտ:

Ինստիտուտի գործունեության առաջին օրերից դասախոսական անձնակազմի և ուսանողների կողմից ծավալվեց մարզական, կազմակերպչական մեծ աշխատանք: Ստեղծվեցին ուսանողական մարզական թիմեր, որոնք հանդես եկան տարբեր մրցումներում: Առաջին մրցումները, որոնց մասնակցեցին ինստիտուտի ուսանողները, կայացան 1945 թ. դեկտեմբերին:

1946 թ. հունվարին Ծաղկաձորում տեղի ունեցան ներինստիտուտային առաջին մրցումները դահուկասպորտ մարզաձևից: Նույն տարվա ապրիլին տեղի ունեցան ներինստիտուտային մրցումներ աթլետիկայից, մարմնամարզությունից, լողից, ծանրամարտից և մարզախաղերից:

Ինստիտուտում մարզական աշխատանքը հատկապես աշխուժացավ 1946 թ. մայիսից՝ մարզական ակումբի (ՖԻՄԱ) ստեղծումից հետո: Մարզական ակումբի առաջին նախագահ ընտրվեց Կ.Ն.Վարդանյանը: Ակումբ ստեղծելուց հետո ինստիտուտի կոլեկտիվն իրավունք ստացավ որպես ինքնուրույն կազմակերպություն մասնակցելու բոլոր քաղաքային և հանրապետական մրցումներին՝ կամավոր մարզական ընկերության իրավունքներով:

Առաջին 15 տարիների ընթացքում Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի մարզական ակումբը գործնական ամբիոնների հետ միասին նշանակալի աշխատանք ծավալեց բարձրակարգ մարզիկների պատրաստման, մարզիկ-ուսանողների և մարզական թիմերի սպորտային վարպետության բարձրացման գործում: Համամիութենական ուսանողական խաղերում, ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադաներում, ԽՍՀՄ առաջնություններում բարձր մարզական արդյունքների հասան աթլետներ Վ.Հովսեփյանը, Ա.Կոնովը, մարմնամարզիկներ Ա.Ազնավուրյանը, Լ.Զաքարյանը, Վ.Հակոբյանը, Զ.Մաթևոսյանը, սեղանի թենիսիստներ Ա.Հակոբյանը, Ս.Զաքարյանը, ըմբիշներ Ռ.Վարդանյանը, Ն.Մուշեղյանը, բասկետբոլիստներ Ա.Ալաջաջյանը, Ս.Ծառուկյանը, Կ.Մանուկյանը, Ռ.Մարգարյանը, ֆուտբոլիստներ Գ.Նարինջյանը, Գ.Նալբանդյանը, Գ.Ստեփանյանը, Լ.Հովսեփյանը, լողորդներ Ա.Սոկրյուկովը, Շ.Կարապետյանը, սուսերամարտիկներ Յու. Խաչատրյանը,

Մ.Մելքոնյանը, բռնցքամարտիկներ Գ.Սարգսյանը, Ա.Փափազյանը, Ա.Գևորգյանը և ուրիշներ:

Աշխարհի և Եվրոպայի չեմպիոնատներում և օլիմպիական խաղերում 1946 թ.-ից մինչև 1960 թ. ոսկե, արծաթե և բրոնզե մեդալներով պարգևատրվել են ծանրորդ Ս.Համբարձումյանը, մարմնամարզիկներ Հ.Շահինյանը, Ա.Ազարյանը, հնգամարտիկ Ի.Նովիկովը, բռնցքամարտիկներ Վ.Ենգիբարյանը, Կ.Ջաներյանը, ըմբիշ Ն.Մուշեղյանը, սուսերամարտիկ Վ.Չերնիկովը և ուրիշներ: Բարձրակարգ մարզիկների դասախոս-մարզիչներից էին Ա.Տեր-Հովհաննիսյանը, Ա.Միրզոյանը, Հ.Գասպարյանը, Կ.Վարդանյանը, Ա.Նազարյանը, Ա.Կարապետյանը, Գ.Թումանյանը, Վ.Գալուստովը, Գ.Ալիխանյանը, Գ.Անդրեասյանը, Ի.Ալեքսանյանը, Ն.Խաչիյանը, Շ.Երթևցյանը և ուրիշներ:

Մարզական ակումբի և գործնական ամբիոնների կողմից այդ տարիներին պատրաստվել են հազարից ավելի մարզիկներ, որոնցից 43 սպորտի վարպետ, 600-ը՝ առաջին կարգային, 1310-ը՝ երկրորդ կարգային մարզիկներ և այլն:

Երկարամյա ավանդույթի համաձայն 1954 թ.-ից ամեն տարի, հանդիսավոր պայմաններում, հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին տեղի է ունենում ինստիտուտի սպարտակիադան աթլետիկայից, լողից, ջրագնդակից, մարզախաղերից, մարմնամարզությունից, սուսերամարտից, ըմբշամարտից և այլ մարզաձևերից: 1945 թ.-ից ինստիտուտը սկիզբ դրեց զանգվածային մարմնամարզական ելույթներին, որոնց նախապատրաստման գործում իրենց ավանդն ունեին մարմնամարզության ամբիոնի դասախոսներ Գ.Վ.Ալիխանյանը, Մ.Ա.Բաբասյանը, Ա.Վ.Ղուկասյանը և ուրիշներ:

Չնայած մեծ դժվարություններին ինստիտուտի ամբիոնները ուսումնամեթոդական աշխատանքները զուգակցում էին գիտահետազոտական աշխատանքների հետ:

Ինստիտուտում գիտության կայացումը շաղկապված է ֆիզիկական դաստիարակության, մարզական պարապմունքների, ֆիզիկական կուլտուրայի պատմության, մարզական բժշկության, մանկավարժական վերահսկման տեսական և մեթոդական մի շարք հարցերի մշակման հետ: ԲՈՒՀ-ի գիտության ակունքներում են եղել գիտնականներ Ա.Օ.Գալուստյանը, Հ.Ե.Փարսադանյանը, Ա.Ա.Տեր-Հովհաննիսյանը, Հ.Մ.Հակոբյանը, Գ.Ա.Մինասյանը, Ռ.Ա. Ջուղա-

նյանը, Գ.Ա.Բուտանը, Հ.Գ.Թոփալյանը, Լ.Ա.Գևորգյանը: 1948 տեղի ունեցավ ինստիտուտի դասախոսների առաջին գիտաժողովը: Այն ցույց տվեց, որ կան որոշակի հնարավորություններ և ցանկություններ գիտական աշխատանքի ծավալման համար: Այնուհետև ամեն տարի սկսեցին անցկացնել գիտամեթոդական կոնֆերանսներ: Ինստիտուտի աշխատակիցների և դասախոսների գիտական աշխատանքները հրատարակելու նպատակով 1955 թ.-ից լույս է տեսնում ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքների ամենամյա ժողովածու:

Այդ տարիներին ինստիտուտի ողջ դասախոսական կոլեկտիվի և հասարակական կազմակերպությունների ուշադրությունը կենտրոնացված էր դաստիարակչական և կուլտուրմասսայական աշխատանքների կազմակերպմանը, որը կրում էր պլանաչափ ու նպատակաուղղված բնույթ:

Հետևողականորեն կիրառվում էին դաստիարակության այնպիսի ձևեր, ինչպիսիք էին հանգստի երեկոները, գեղարվեստական ինքնագործունեության ելույթները, ֆեստիվալները, ուսանողական գարունը, էքսկուրսիաները, սպարտակիադաները, աթլետիկական կրոսավազքերը և փոխանցավազքերը, տուրիստական արշավները հանրապետության տարբեր շրջաններ: Հանրապետությունում մեծ հռչակ էր վայելում ինստիտուտի էստրադային նվագախումբը: Դաստիարակչական խոշոր նշանակություն ուներ ուսանողներին հանրօգուտ աշխատանքում ներգրավելը: Ուսանողները և դասախոսները ակտիվ մասնակցություն էին ցուցաբերում քաղաքի բարեկարգման նպատակով անցկացվող բոլոր շաբաթօրյակներին: 1956 թ. ինստիտուտի ուսանողների զգալի մասը աշխատանքային երրորդ կիսամյակը անց է կացրել հնգամյակի շինարարական հրապարակներում: Ուսանողները մասնակցում էին Արխանգելսկ, Մուրմանսկ, Սախալին, Պերմ հեռավոր մարզերի, Ղրղզստանի, Էստոնիայի, Մարիական ինքնավար հանրապետությունների շինարարություններին: XI հնգամյակի տարիներին աշխատանքային երրորդ կիսամյակը անցել են 250 ուսանող, որոնք կատարել են շինարարական աշխատանքներ:

Կոլտնտեսային դաշտերից հավաքվել էր 150 տ. ավելի կանաչ զանգված:

Շինջոկատներում ակտիվ աշխատանքի համար ինստիտուտի

շատ ուսանողներ և դասախոսներ պարգևատրվել են, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության պատվոգրերով, ՀԼԿԵՄ պատվոգրերով, «Աշխատանքային գերազանցիկ» շքանշաններով: Նրանց մեջ էին Լիպարիտ Մկրտչյանը, Գագիկ Մարկոսյանը, Կոլյա Սարգսյանը, Կորյուն Սարգսյանը, Ռուդոլֆ Միրզոյանը, Էդուարդ Գևորգյանը, Վարազդատ Մխիթարյանը և ուրիշներ:

1953 թ. ինստիտուտի տնօրեն նշանակվեց Ա.Ե.Չարչօղլյանը, որը Մոսկվայի ֆիզիկական կուլտուրայի կենտրոնական ինստիտուտի շրջանավարտ էր և աշխատել էր կուսակցական և պետական ղեկավար պաշտոններում: Նա որոշակի հետք թողեց ինստիտուտի պատմության մեջ: Հատկապես նրա անվան հետ է կապված ինստիտուտի նոր շենքի շինարարությունը, ինստիտուտի նյութատեխնիկական բազայի բարելավումը և կադրերի պատրաստումը:

Ինստիտուտի կյանքում կարևոր իրադարձություն էր 1959 թ. նոր եռահարկ շենք տեղափոխվելը, որի կառուցմանը մասնակցեցին ինստիտուտի դասախոսները, աշխատողները և ուսանողները: Նոր շենքում կային բոլոր անհրաժեշտ պայմանները տեսական և մարզամանկավարժական պարապմունքները, ինչպես նաև կուլտուրմասսայական միջոցառումները ժամանակակից մակարդակով կազմակերպելու և անցկացնելու համար:

Ուսումնական մասնաշենքերը ունեին ժամանակակից լսարաններ, սպորտային և գեղարվեստական մարմնամարզության, մարզախաղերի, բռնցքամարտի, ծանրամարտի, սուսերամարտի մասնագիտացված դահլիճներ, լողավազան, թենիսի կորտեր, մարզահրապարակ, ֆուտբոլի դաշտ, գրադարան, ընթերցասրահ:

Ինստիտուտի հետագա զարգացումը, նյութական բազայի ընդլայնումը, գիտամեթոդական, մարզական, ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավումը, վերաբերում են 60-80-ական թվականներին: 1961-ից մինչև 1969 թ. ինստիտուտի ռեկտորն էր փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Լ.Խ.Քալաշյանը, որը մեծ ավանդ ունի ինստիտուտի ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործման, նյութատեխնիկական բազայի բարելավման գործում: 1969 թ.-ին Լ.Խ.Քալաշյանն աշխատանքի անցավ հանրապետության Սպորտկոմիտեի նախագահի պաշտոնում, իսկ ինստիտուտի ռեկտոր նորից նշանակվեց

Ա.Ե.Չարչօղլյանը, որը գբաղեցրեց այդ պաշտոնը մինչև 1975 թ.: 1975 թ.-ից մինչև 1994 թ. հոկտեմբերը ինստիտուտի ռեկտորն էր պրոֆեսոր Հ.Գ.Թոփալյանը, որը մինչ այդ 20 տարի շարունակ հանդիսանում էր ինստիտուտի պրոռեկտոր:

1975 թ.-ից մինչև 1995 թ. ինստիտուտի ուսումնական աշխատանքը գլխավորում էր ուսումնական մասի հարցերով պրոռեկտոր, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ֆ.Գ.Ղազարյանը: Ինստիտուտի կայացման և հետագա զարգացման գործում մեծ ջանք ու եռանդ են ներդրել ինստիտուտի գիտական աշխատանքի գծով պրոռեկտորներ Ս.Մ.Հարությունյանը, Տ.Վ.Մանուկյանը, Հ.Մ.Ավանեսյանը, Մ.Իսպիրյանը, ֆակուլտետների դեկաններ Ա.Ն.Օհանովը, Գ.Բ.Սաֆարովը, Ն.Ս.Խաչիյանը, Կ.Ն.Վարդանյանը, Ա.Մ.Ստեփանյանը, Ռ.Յ.Հակոբյանը, Կ.Ղ. Մանուկյանը, Հ.Գ.Գասպարյանը, Վ.Բ.Առաքելյանը, Գ.Ն. Ազիզյանը, Վ.Գ.Եղիգարյանը, Շ.Ն.Ջանյանը, Յու.Ե.Կուպալյանը և ուրիշներ:

Երկար տարիներ իրենց գիտելիքները և հարուստ փորձը ուսանողներին են փոխանցել պրոֆեսորներ Ա.Ա.Լալայանը, Ա.Օ.Կոստանյանը, Ֆ.Գ.Ղազարյանը, Ռ.Գ.Վարդանյանը, Կ.Պ.Աթոյանը, Ռ.Կ.Հարությունյանը, Գ.Ա.Բուտանը, Մ.Ա.Բաբասյանը, Ռ.Տ.Մելիքսեթյանը, Է.Ե.Սահակյանը, Վ.Բ.Առաքելյանը, Մ.Ս.Իսպիրյանը, Ա.Դ.Եղիազարյանը, Բ.Զ.Սաղյանը, Ի.Գ.Սաֆարյանը, Ս.Մ.Թորոյանը, Ս.Գ.Միքայելյանը, Ա.Ա.Չատինյանը, Ա.Բ.Արարատյանը և ուրիշներ:

Ուսումնադաստիարակչական աշխատանքի հետագա բարելավմանը նպաստել է ինստիտուտի նյութատեխնիկական բազայի ընդլայնումը:

1963 թ. ավարտվեց ինստիտուտի լողավազանի շինարարությունը:

1964 թ. ինստիտուտի ուսումնական շենքի կողքին ավարտվեց նոր հինգհարկանի ուսանողական հանրակացարանի շինարարությունը: 1972 թ. ինստիտուտի բակում կառուցվեց մարզական համալիր դահլիճ:

1976 թ. ինստիտուտն ստացավ հինգհարկանի հրաշալի հանրակացարան Ծաղկաձորում, ուր կազմակերպվեցին ուսանողների ամառային և ձմեռային ուսումնամարզական հավաքները:

1980 թ. ինստիտուտի բակում կառուցվեց նոր ութհարկանի ու-

սումնական մասնաշենքը: Դրա շահագործումը հնարավորություն տվեց արդյունավետ տեղաբաշխել բոլոր ամբիոններն ու ստորաբաժանումները հին և նոր մասնաշենքերում, ստեղծել նոր լաբորատորիաներ և կաբինետներ, որոնք հագեցված էին ժամանակակից ուսումնական և գիտական սարքավորումներով:

1961 թ. ինստիտուտի կառուցվածքում տեղի ունեցան զգալի փոփոխություններ: Մանկավարժական ֆակուլտետին զուգահեռ բացվեց մարզչական ֆակուլտետը, որը պատրաստում էր բարձր որակավորում ունեցող մարզիչներ համարյա բոլոր մարզաձևերից:

Նույն տարում՝ գիտահետազոտական աշխատանքների թեմատիկայի և ծավալի ընդլայնման նպատակով, ստեղծվեց սպորտային մարզումների տեսության և մեթոդիկայի պրոբլեմային լաբորատորիան, որի առաջին վարիչը դարձավ հոգեբանության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ա.Ա.Լալայանը:

Հետագայում պրոբլեմային լաբորատորիայի վարիչ են աշխատել պրոֆեսոր Ա.Օ.Կոստանյանը, դոցենտներ Գ.Ա.Բուտաևը, Ռ.Ա.Ջուղանյանը, Հ.Մանուկյանը, Ռ.Մ.Թորոյանը, Հ.Մ.Ավանեսյանը: Լաբորատորիայի երիտասարդ կոլեկտիվը առաջին իսկ օրից մեծ եռանդով սկսեց բազմակողմանի ուսումնասիրություններ կատարել ֆիզիկական դաստիարակության և սպորտային մարզումների առանձին հիմնահարցերի վերաբերյալ:

1966 թ. կազմավորվեց ինստիտուտի կատարելագործման ֆակուլտետը, սկզբում հանրակրթական դպրոցների ֆիզիկական կուլտուրայի դասատուների համար, իսկ հետագայում՝ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների դասախոսների և մարզիչների համար, ինչպես նաև ֆիզկուլտուրայի և սպորտի բնագավառի ղեկավար աշխատողների համար: Ամեն տարի երեքամսյա դասընթացներ էին անցնում 100-ից ավելի ֆիզկուլտուրայի ուսուցիչներ, մարզիչներ, ոլորտի ղեկավար աշխատողներ: 1972 թ. բանվորների և գյուղական երիտասարդության համար բացվեց նախապատրաստական բաժին՝ ինստիտուտ ընդունվելու արտոնություններով: 1974 թ. հումանիտար գիտությունների ոլորտում ուսանողների գիտելիքների բարձրացման նպատակով կազմավորվեց հասարակագիտական մասնագիտությունների ֆակուլտետ:

1950-1980 թթ. ստեղծվեցին ֆիզիկական կուլտուրայի պատմու-

թյան և կազմակերպման, ծանրամարտի և բռնցքամարտի, սուսերամարտի և հեծանվասպորտի, ֆուտբոլի և թենիսի, բազկամարտի և ՊԱՊ համալիրի ամբիոնները, իսկ մարքսիզմ-լենինիզմի ամբիոնից առանձնացվեցին ՍՄԿԿ պատմության և քաղաքատնտեսության, փիլիսոփայության և գիտական կոմունիզմի ամբիոնները:

Ինստիտուտի հետագա կայունացումն ու զարգացումը անխզելիորեն կապված էր գիտամանկավարժական կադրերի քանակական և որակական աճի հետ: 1960 թ. 80 դասախոսներից միայն 14-ն ունեին գիտական աստիճան կամ կոչում:

1961-1981 թթ. ընթացքում ինստիտուտից Մոսկվայի ֆիզիկական կուլտուրայի կենտրոնական պետական ինստիտուտի նպատակային ասպիրանտուրա են ընդունվել շուրջ 40 մարդ: Նրանցից շատերը պաշտպանել են թեկնածուական ատենախոսությունները: Հաջողությամբ էին ընթանում երիտասարդ գիտնականների հետ տարվող նախապատրաստական աշխատանքները ինստիտուտի ամբիոններում և պրոբլեմային լաբորատորիայում՝ հայցորդության միջոցով: Դրա արդյունքում ամեն տարի զգալիորեն ավելանում էր գիտական աստիճան և կոչում ունեցող դասախոսների քանակը: 1960-1985թթ-ի ընթացքում 72 դասախոս և ասպիրանտ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություն և 7 մարդ՝ դոկտորական ատենախոսություն: Գիտությունների դոկտորի գիտական աստիճանի են արժանացել Ա.Օ.Կոստանտյանը, Ա.Ա.Լալայանը, Կ.Պ.Աթոյանը, Ռ.Կ.Հարությունյանը: Գիտական կադրերի պատրաստման գործում ինստիտուտին անգնահատելի օգնություն են ցուցաբերել այդ տարիներին Մոսկվայի և Սանկտ-Պետերբուրգի ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի պրոֆեսորներ Ն.Գ.Օզոլինը, Լ.Պ.Մատվեևը, Ա.Դ. Նովիկովը, Դ.Ի.Սամուկովը, Վ.Վ.Ստոլբովը, Պ.Ա.Ռուդիկը, Վ.Ս. Ֆարֆելը, Վ.Մ.Զացիորսկին, Գ.Ս.Թումանյանը, Ն.Վ.Զիմկինը և ուրիշներ: Նրանք իրականացնում էին ատենախոսությունների գիտական ղեկավարությունը և անմիջական մասնակցություն էին ցուցաբերում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի կարևորագույն հիմնահարցերի մշակմանը:

Ինստիտուտում տարեցտարի լայն թափ է ստանում գիտահետազոտական աշխատանքը: Եթե նախկին տարիներին կատարվում էին, հիմնականում, մեթոդական աշխատանքներ և առանձին հարցերի հետազոտություններ, ապա հետագա տարիներին ամ-

բիոնների և պրոբլեմային լաբորատորիայի աշխատակիցները սկսեցին հետազոտել մի շարք լուրջ գիտական հիմնահարցեր՝ որոշակի ավանդ ներդնելով մարզական գիտության զարգացման գործում: Կարևորագույն գիտական հետազոտություններից կարելի է հիշատակել այնպիսի հրատապ հիմնահարցերի մշակումը, ինչպիսիք են՝ «Մարզիչի հոգեբանությունը», «Մարզիկների հոգեբանությունը», «Մարզիկների կլիմայավարժեցումը միջին լեռնային շրջաններում», «Մարզումների հետազոտությունը լեռնային պայմաններում՝ մարզիկների աշխատունակության բարձրացման նպատակով», «Մարզիկների ուժային նախապատրաստության կատարելագործման ուղիները», «Ֆիզիկական կուլտուրայի պատմությունը Հայաստանում», «Բարձրորակ մարզիկների պատրաստման համակարգի կատարելագործումը օլիմպիական մարզաձևերից» և այլն: Բացի այս թեմաներից, ինստիտուտի գիտական գործունեությունը բնորոշում էին այն հետազոտությունները, որոնք նվիրված էին մասսայական ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը, մարզումային գործընթացի ղեկավարման կատարելագործմանը, շարժողական ունակությունների դաստիարակմանը, ինչպես նաև մարզիկների աշխատունակությունը վերականգնող մեթոդներին և միջոցներին: Հաջողությամբ էին իրականացվում նաև հետազոտությունները հանրապետության հավաքական թիմերի գիտամեթոդական սպասարկման տեսանկյունից, որոնք նպաստում էին մարզումների ժամանակակից մեթոդների ներդրմանը և առաջատար մարզիկների մարզական գործընթացի անհրաժեշտ գիտական վերահսկողության իրականացմանը: Մի շարք գիտական հետազոտությունների արդյունքներ նպաստեցին մարզական գործընթացում մարզումների ժամանակակից մեթոդների ներդրմանը դպրոցներում, ձեռնարկություններում, բնակավայրերում, մանկապարտեզներում և այլուր՝ զանգվածային ֆիզկուլտուրային-մարզական աշխատանքի բարելավմանը: Միայն 1976-1982 թթ. ընթացքում հրապարակվել է 5 մենագրություն, 18 ձեռնարկ, 102 մեթոդական նամակ և հանձնարարական, 47 հոդված, 717 թեզիս և 30 սեղմագիր:

Բնութագրելով ինստիտուտի գիտական նվաճումների մակարդակը՝ բավական է նշել, որ համաշխարհային գիտական կոնֆերանսներում՝ «Սպորտը ժամանակակից հասարակարգում», 1974 - 1980 թթ. ինստիսուտը ներկայացրել է 30 զեկուցում: 1960-1980

թվականներին ինստիտուտի բազայի վրա գումարվել են խոշոր միջազգային, համամիութենական և անդրկովկասյան գիտաժողովներ: Դրանցից են «Ֆիզիկական կուլտուրայի եվ սպորտի պատմության անդրկովկասյան կոնֆերանսը», «Դպրոցում ֆիզիկական դաստիարակության և պատանեկական սպորտի զարգացման հարցերի շուրջ գիտամեթոդական կոնֆերանսը», «Անդրկովկասի հոգեբանների 5-րդ գիտամեթոդական կոնֆերանսը», «Անդրկովկասի հանրապետությունների ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտների գիտամեթոդական կոնֆերանսը», «Անդրկովկասի հանրապետությունների գիտամեթոդական կոնֆերանսը ըմբշամարտից», «Սպորտում անատոմոանտրոպոլոգիական վերահսկողության չափանիշները համամիութենական կոնֆերանսը» և այլն:

Համամիութենական և միջազգային կոնֆերանսներում սպորտային գիտությունը բազմիցս ներկայացրել են պրոֆեսորներ Ա.Ա.Լալայանը, Ա.Օ.Կոստանյանը, Ֆ.Գ.Ղազարյանը, Հ.Գ.Թոփալյանը, Ռ.Ա.Ջուղանյանը, Վ.Բ.Առաքելյանը, Ս.Մ.Հարությունյանը, Գ.Ա.Բուտաևը, Մ.Ս.Իսպիրյանը, Է.Ե.Սահակյանը, Ռ.Տ.Մելիքսեթյանը, Հ.Մ.Ավանեսյանը, դոցենտներ Հ.Ա.Բաբայանը, Ռ.Մ.Թորոյանը, Ֆ.Գ. Բուրյակինը և ուրիշներ:

Գիտական աշխատանքի մեջ լայնորեն ընդգրկվել են նաև ուսանողները:

Ուսանողական աշխատանքների թեմատիկան բնորոշվում էր ամբիոնի գիտական ուղղվածությամբ: Ուսանողների գիտական աշխատանքների ամփոփումը անցնում էր ուսանողական գիտական կոնֆերանսներում, ինչպես նաև կուրսային և դիպլոմային աշխատանքների պաշտպանության ժամանակ: Լավագույն աշխատանքները առաջադրվում են հանրապետական և համամիութենական ուսանողական կոնֆերանսներում: Համամիութենական գիտական կոնֆերանսներին բարձր գնահատական են ստացել 13 աշխատանք:

Անցած տարիներին ինստիտուտի կոլեկտիվը բեղմնավոր աշխատանք է տարել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերով գրականության ստեղծման համար: 1960-1980 ական թվականների ընթացքում հրատարակվել են 38 դասագիրք և ուսումնական ձեռնարկ, 138 մեթոդական ձեռնարկ և նամակ, 132 հանրամատչելի գիրք և բրոշյուր, բազմաթիվ գիտական հոդվածներ և նյութեր:

Բարձր գնահատականի են արժանի Ի.Լ.Շաքարյանի և Ա.Մ.Հակոբյանի աշխատանքները անատոմիայից, Ա.Կ.Ստեփանյանի, Գ.Պ.Բաղդոյանի աշխատանքները կենսաբանությունից, Ս.Ա.Ղազարյանինը՝ կենսամեխանիկայից, Ց.Սիմոնյանի, Ա.Ե.Չարչօղլյանի, Գ.Ա.Բուտաևի, Մ.Ս.Իսպիրյանի, Է.Ե.Սահակյանի, Կ.Պ.Աթոյանի, Լ.Ա.Ակոպովի աշխատանքները ֆիզիկական կուլտուրայի պատմությունից, Ֆ.Գ.Ղազարյանի, Ռ.Տ.Մելիքսեթյանի, Ա.Ա.Գրիգորյանի, Յու.Ե.Կուպալյանի՝ ֆիզիկական դաստիարակության տեսությունից և մեթոդիկայից, Ա.Ա.Լալայանի՝ սպորտի հոգեբանությունից, Լ.Ա.Գևորգյանի՝ սպորտային բժշկությունից, Մ.Ա.Բաբայանի՝ մարմնամարզությունից, Հ.Գ.Թոփալյանի՝ աթլետիկայից, Ա.Ա.Մելքոնյանի՝ ծանրամարտից, Հ.Գ.Գասպարյանի՝ սուսերամարտից, Գ.Ա.Պետրոսյանի՝ դահուկասպորտից, Մ.Մ.Մամիկոնյանի, Հ.Հ.Մելքոնյանի՝ մարզախաղերից, Ա.Օ. Կոստանյանի, Ի.Գ.Սաֆարյանի և Վ.Վ.Մկրտչյանի՝ լողից, Բ.Ա.Մելիքյանի՝ թենիսից, Գ.Նարինջյանի՝ ֆուտբոլից, Վ.Ս.Բաբայանի՝ սպորտի փիլիսոփայությունից և այլն:

1985թ-ին բացվեց ինստիտուտի թանգարանը, ուր արտացոլված են ինստիտուտի կյանքի և գործունեության հիմնական շրջաններ՝ նրա ստեղծման օրից մինչև ներկա ժամանակները: Թանգարանի ստեղծման և զարգացման գործում մեծ է պրոֆեսոր Է.Ե.Սահակյանի ավանդը: Տարբեր տարիներին թանգարանի նյութերը հավաքելու, ֆոնդերի համալրման գործում օգտակար աշխատանք են կատարել թանգարանի վարիչներ Մ.Մխիթարյանը և Ա.Գրիգորյանը:

Ինստիտուտի նյութատեխնիկական բազայի բարելավումով տարեց տարի ավելանում էր ուսանողների քանակը:

Եթե 1945 թ. ինստիտուտի առաջին կուրս ընդունվել էին ընդամենը 84 մարդ, 1960 թ. սովորում էին 530, 1980 թ.՝ 1398, ապա 1990 թ.՝ 1715, իսկ 2005 թ.՝ շուրջ 2000 մարդ:

1945-2005 թթ. ընթացքում ինստիտուտի կողմից պատրաստվել է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի շուրջ 12 հազար մասնագետ:

Սկսած 1970 թվականից՝ ինստիտուտն սկսեց պատրաստել մասնագետներ արտասահմանյան հայկական գաղթօջախների և արտասահմանյան երկրների համար: 1970-1990-ական թվականների ընթացքում ինստիտուտն ավարտել են 30 սփյուռքահայ: Վերադառնալով հայկական գաղթօջախներ՝ նրանցից շատերը սկսեցին

դասավանդել և դասավանդում են «ֆիզիկական կուլտուրա» առարկան դպրոցներում, դարձել են մարզիչներ, իրենց փորձն ու գիտելիքները փոխանցում են արտասահմանցի հայ սերունդներին:

Հատուկ ուշադրություն է դարձվում ուսանողների մասնագիտացմանը, նրանց արտադրական և մանկավարժական պրակտիկային: 1970 թ. ուսանողները սկսեցին մանկավարժական պրակտիկան անցկացնել ոչ միայն դպրոցներում, այլև բարձրագույն ուսումնական հաստատություններում, մանկապատանեկան մարզական դպրոցներում, գործարաններում և ֆաբրիկաներում, կամավոր մարզական ընկերություններում՝ ձեռք բերելով ֆիզիկական կուլտուրայի դասատուի, ընտրած մարզաձևի մարզիչի, մասսայական ֆիզկուլտուրայի և տուրիզմի կազմակերպչի հմտություններ:

Ինստիտուտի դասախոսները այդ տարիներին արդյունավետորեն են աշխատել աշխարհի մի շարք երկրներում, օգնել դպրոցներին,ուսումնական հաստատություններին և մարզական կազմակերպություններին ֆիզիկական կուլտուրան և սպորտը զարգացնելու համար: Կուբայում և Կոլումբիայում աշխատել են Ս.Մ. Հարությունյանը, Ռ.Տ. Մելիքսեթյանը, Սիրիայում, Ալժիրում և Լիբանանում՝ Ե.Լ. Դավթյանը, Եգիպտոսում՝ Շ.Ն. Ջանյանը, Ա.Դ. Եղիազարյանը, Իսլանդիայում և Բուլղարիայում՝ Լ.Ա. Զաքարյանը, Կիպրոսում՝ Ա.Բ. Արարատյանը, Հարավսլավիայում՝ Ի.Գ. Սաֆարյանը, Հնդկաստանում՝ Հ.Ա. Բաբայանը, Լիբանանում և Իրանում՝ Հ.Գ.Թոփալյանը, Թաիլանդում՝ Ս.Գ. Մելքոնյանը, Թունիսում՝ Ս.Գ. Թումանյանը: Ինստիտուտի մարզիկները հաջողությամբ են հանդես եկել հանրապետության առաջնություններում, համամիութենական և միջազգային մրցումներում:

Օլիմպիական խաղերում, Եվրոպայի և աշխարհի առաջնություններում հաղթանակներ են տարել Ֆաինա Մելնիկը (աթլետիկա), Հոգսեն Միրզոյանը, Յուրի Սարգսյանը, Արսեն Մելիքյանը (ծանրամարտ), Էդուարդ Ազարյանը, Էդուարդ Միքայելյանը, Արթուր Հակոբյանը (մարմնամարզությունը), Հրաչյա Պետիկյանը, Զինաիդա Սիմոնյանը, Երջանիկ Ավետիսյանը (հրաձգություն), Նորայր Մուշեղյանը, Արմեն Նազարյանը, Արմեն Մկրտչյանը, Ստեփան Սարգսյանը, Բենուր Փաշայանը, Գառնիկ Հովհաննիսյանը, Վաղինակ Գալստյանը, Ռոբերտ Ներսիսյանը, Արշակ Սանոյանը, Գուրգեն Բաղդասարյանը, Անուշավան Սահակյանը, Քրիստինե

Նաջարյանը (ըմբշամարտ), Աշոտ Կարագյանը, Վալենտին Չերնիկովը (սուսերամարտ), Դավիթ Համբարձումյանը, Միլվա Էմիրզյանը (ջրացատկ), Դավիթ Թորոսյանը, Իսրայել Հակոբկոխյանը, Նշան Մունչյանը, Ալբերտ Նիկոլյանը (բռնցքամարտ), Էլմիրա Անտոնյանը, Նարինե Անտոնյանը, Անիտա Զաքարյանը (սեղանի թենիս), Ա. Ալաջաջյանը, Վիտալի Զաստուխովը (բասկետբոլ), Հովհաննես Զանազանյանը, Արկադի Անդրեասյանը, Խորեն Հովհաննիսյանը, (ֆուտբոլ), Վլադիմիր Հակոբյանը, Սմբատ Լպուտյանը, Լևոն Արոնյանը, Գաբրիել Սարգսյանը, Աշոտ Անաստասյանը, Արտաշես Մինասյանը, Լիլիթ Մկրտչյանը, Կարեն Ասրյանը, Տիգրան Պետրոսյանը (շախմատ) և ուրիշներ:

Ինստիտուտի շրջանավարտներից մի քանիսը ընտրվել են միջազգային մարզական կազմակերպությունների անդամ. նրանց թվում են՝ Ս. Խաչատրյանը, Ա. Գրիգորյանը, Յու. Վարդանյանը, Դ. Գաբրիելյանը, Ս. Գևորգյանը, Ն. Մունչյանը և ուրիշներ:

1990 թվականին՝ ԽՍՀՄ-ի փլուզման նախօրեին, Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտն արդեն դարձել էր ֆիզկուլտուրային մասնագիտական խոշոր բարձրագույն ուսումնական հաստատություն՝ հարուստ կենսափորձով և կայուն ավանդույթներով: ՈՒսումնական գործընթացը ղեկավարում էին 16 ամբիոնները, ուր աշխատում էին 159 դասախոսներ: Նրանց կեսից ավելին ուներ գիտական աստիճան և կոչում: Ամեն տարի ինստիտուտ էին ընդունվում շուրջ 350 ուսանող:

1990 թվականին ինստիտուտում աշխատում էին հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ութ վաստակավոր գործիչ և 30 վաստակավոր մարզիչ:

***1991** թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանը հռչակվեց անկախ հանրապետություն՝ կանգնելով ազգային պետականության ստեղծման, տնտեսական և հասարակական հարաբերությունների արմատական վերափոխությունների ուղու վրա: Սկսվեց իրավական պետության կառուցումը և ազատ շուկայական տնտեսությանը անցումը: Սակայն նշված վերափոխությունները իրագործվում էին տնտեսական խոր ճգնաժամի պայմաններում, որոնք հետևանք էին 1988 թ. ավերիչ երկրաշարժի, ԽՍՀՄ փլուզումից հետո միութենական հանրապետությունների միջև գոյություն ունեցող տնտեսական կապերի քայքայման, հայ-ադրբեջանական կոնֆլիկտի, սահմանային բլոկադայի, էներգետիկ ճգնաժամի և այլն:*

ՎԱՀԲԱՄ ԱՌԱՔԵԼՅԱՆ

1991-1994 թթ. ինստիտուտի ամբողջ պատմության ընթացքում, ամենաածանր տարիներն էին: Չնայած դժվարություններին, ծանր պայմաններում հայտնված կոլեկտիվը շարունակում էր հաղթահարել բոլոր խոչընդոտները և լուծել իր առջև դրված խնդիրները: Այդ տարիների ինստիտուտի ռեկտոր Հ.Գ.Թուփալյանի ողջ գործունեությունը արժանի է բարձր գնահատականի: 1994-1998 թթ. ինստիտուտի ռեկտոր է աշխատել Ռ.Ա.Գալստյանը:

1998 թվականի օգոստոսից ինստիտուտը ղեկավարում է կոլեկտիվի կողմից ընտրված, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ.Բ.Առաքելյանը, որը մինչ այդ երկար տարիներ աշխատել է մարզչական ֆակուլտետի դեկան և ըմբշամարտի ամբիոնի վարիչ: Նա ոչ միայն կարողացավ ինստիտուտը դուրս բերել ծանր վիճակից, այլև կատարել արմատական բարեփոխումներ ինստիտուտի գործունեության բոլոր ոլորտներում:

Ինստիտուտի նյութական վիճակը բարելավելու համար կարևոր

նշանակություն ունեցավ առանձին հովանավորների կողմից ցուցաբերած աջակցությունը:

1998-2004 թթ. ընթացքում հովանավորչական առաջակցություն են ցուցաբերել ինստիտուտի շրջանավարտ, Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի նախագահ, ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Գագիկ Ծառուկյանը, Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը, Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ, Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի գործադիր կոմիտեի անդամ, ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Ռուբեն Հայրապետյանը, «Հրազդան» մարզադաշտի տնօրեն, ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Աշոտ Աղաբաբյանը, Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի գործադիր կոմիտեի անդամ, ՀՀ ըմբշամարտի ֆեդերացիայի նախագահ, ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Սամվել Ալեքսանյանը և գործարար Կարեն Շահինյանը:

Ձեռնարկած միջոցառումների արդյունքում ինստիտուտի ֆինանսական միջոցները 1998 թ. մինչև 2004 թ. ավելացան 1,5 անգամ: Ընդ որում, եթե բյուջետային ծախսերը ավելացան ընդամենը 1,3 անգամ, ապա արտաբյուջետային միջոցները՝ 1,7 անգամ: Լրացուցիչ ֆինանսական միջոցների ստացումը հնարավորություններ ընձեռեցին իրականացնելու լայնածավալ շինարարական և վերանորոգման աշխատանքներ: Մասնավորապես կապիտալ վերանորոգման ենթարկվեցին բոլոր մարզական բազաները, ամբիոններն ու օժանդակ շինությունները, ինֆորմացիոն-վիճակագրական կենտրոնը, գրադարանը, տպարանը, բուժկենտրոնը: Ամբողջությամբ նորոգվեց ինստիտուտի տանիքը և ջեռուցման համակարգը: Ավարտված են լողավազանի, ֆուտբոլային դաշտի և աթլետիկական մանեժի շինարարության նախագծերը: Նկատելիորեն բարձրացվեց աշխատավարձը, որը 1998-2004 թթ. ընթացքում աճեց 1,6 անգամ: Բոլոր ամբիոնները և ստորաբաժանումները ապահովվեցին համակարգչային տեխնիկայով: 2002-2004 թթ.-ի ընթացքում ինստիտուտի կարիքների համար ձեռք բերվեց 46 համակարգիչ: Արդյունքում ստեղծվեցին համակարգչային լսարան, վիճակագրական կենտրոն: Որոշակի թվով համակարգիչներ միացվեցին ինտերնետին:

1991-1992 ուսումնական տարվանից, նոր ժամանակներին համապատասխան, սկսվեց ողջ ուսումնական գործունեության վերակազմակերպումը: 1991-2004 թթ. ընթացքում որոշակի փոփոխությունների են ենթարկվել ուսումնական պլաններն ու ծրագրերը: Դրանք վերա-

փոխվել են ելնելով հանրապետության քաղաքական, տնտեսական և հոգևոր կյանքում տեղի ունեցած փոփոխություններից:

ՖՐՈՒՆԶ ՂԱԶԱՐՅԱՆ

ՄԻՔԱՅԵԼ ԻՍՊԻՐՅԱՆ

Թվարկված աշխատանքների կազմակերպման գործում մեծ ավանդ ունեն ինստիտուտի պրոռեկտորներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ.Իսպիրյանը և մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ֆ.Ղազարյանը:

ԱՆԱՀԻՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Բացի այդ, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի որոշ բնագավառներում մասնագիտական կադրերի պակասը բերեց նրան, որ ինստիտուտն սկսեց պատրաստել մասնագետներ կինեզիոլոգիայից, առապտիվ ֆիզիկական կուլտուրայից, սպորտային լրագրությունից և սպորտային պարերից: Ինստիտուտի ուսումնական ծրագրում նման նոր մասնագիտությունների ներառումը առաջ բերեց մարզաառողջարարական ֆակուլտետի ստեղծման պահանջ, որը դրական լուծում ստացավ 2003 թվականի սեպտեմբերին: Ֆակուլ տետի դեկան ընտրվեց կենսաբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր, ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր աշխատող Անահիտ Հարությունյանը: Ցուցաբերելով մեծ պատասխանատվություն և իր գոր-

ծին նվիրվածություն՝ նա չափազանց կարճ ժամանակում կարողացավ ֆակուլտետի ուսումնական գործընթացը դնել ամուր հիմքերի վրա:

ԿՈԼՅԱ ԲԱԲԱՅԱՆ

Հաջողությամբ է գործում մարզական լրագրության ամբիոնը, որը ղեկավարում է լրագրության ոլորտի խոշոր մասնագետ, հայտնի գրող և հրապարակախոս, ՀՀ մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի նախկին նախարար Ռոլանդ Շառոյանը:

2000 թ. իննամյա ընդմիջումից հետո վերաբացվեց հեռակա ուսուցման բաժինը, որի դեկան ընտրվեց աթլետիկայի ամբիոնի դոցենտ Կ.Բաբայանը: Ներկայումս հեռակա բաժնում 20 մասնագիտությունների գծով սովորում են 400 ուսանող:

2004-2005 ուստարում ֆիզիկական կուլտուրայի մասնագետների պատրաստման կառուցվածքում կատարվեցին էական փոփոխություններ: Ինստիտուտն անցավ կադրերի պատրաստման բազմաստիճան, նոր, ժամանակակից համակարգի, որը համապատասխանում է միջազգային չափանիշներին: Սրան համապատասխան՝ ինստիտուտի կողմից մշակվել է նոր ուսումնական պլան, որի համաձայն նախատեսվում է մասնագետների ընթացավարտը բակալավրի աստիճանով՝ քառամյա ուսուցումից հետո: Ապագա բակալավրերը ուսումնասիրում են չորս ցիկլեր. հումանիտար և սոցիալ-տնտեսական առարկաներ (պատմաքաղաքական, մշակութաբանական, ինչպես նաև հեղինակային կուրսեր՝ ուսանողների ընտրությամբ), ընդհանուր բնագիտական առարկաներ (կենսաբանություն՝ էկոլոգիայի հիմունքներով), ուղղվածության առարկաներ (մարզամանկավարժական, տեսական-մանկավարժական և բժշկակենսաբանական), ինչպես նաև հատուկ կուրսեր՝ ուսանողների ընտրությամբ: Կադրերի պատրաստման նոր ուղղությունների որոնումը շարունակվում է: Կադրերի պատրաստման նոր համակարգին անցնելը պահանջեց ֆակուլտետների կառուցվածքային կատարելագործում:

ՀՈՄԲԵՐՏ ԳԱԼՍՏՅԱՆ

Երկու ֆակուլտետների փոխարեն՝ մանկավարժական և մարզչական, 2004 թվականի սեպտեմբերին բացվեց նոր ֆակուլտետ՝ մարզչամանկավարժական, որի դեկան ընտրվեց մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր մարզիչ և վաստակավոր աշխատող Հ.Գալստյանը:

Կառուցվածքային նման փոփոխությունների ավարտից հետո կատարվեց մեծածավալ աշխատանք ուսումնական գործընթացի վերակառուցման համար:

Բոլոր առարկաներից կազմվեցին նոր ուսումնական պլաններ, որոնք հաստատվեցին Գիտական խորհրդի կողմից: Նոր ուսումնական պլանի նախապատրաստման գործում մեծ ավանդ ունի ուսումնական մասի վարիչ, պրոֆեսոր Յու.Կուպալյանը: Ամբիոնները սկսեցին ավելի մեծ ուշադրություն դարձնել ուսումնամեթոդական աշխատանքի կատարելագործմանը: Այս նպատակով վերանայվեցին բոլոր ուսումնական ծրագրերը տեսական և գործնական առարկաների գծով և մշակվեցին նոր դասախոսություններ: Ուսումնական աշխատանքում սիստեմատիկաբար կազմակերպվում են բաց դասախոսություններ, սեմինար և գործնական պարապմունքներ, կիրառվում են դասախոսություններ վարելու նորագույն մեթոդներ, ուսուցման տեխնիկական միջոցներ, անց են կացվում բանավեճեր, գիտական վեճեր: Մեծ ուշադրություն է դարձվում ուսանողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպմանը: Այս շրջանում կարևոր հիմնահարց դարձավ հայերեն լեզվով դասագրքերի և ձեռնարկների ապահովումը: Ամբիոնների դասախոսների ջանքերով և ինստիտուտի ղեկավարության օժանդակությամբ 1991 թ.-ից 2004 թ.-ը լույս են տեսել 40-ից ավելի դասագիրք և ուսումնական ձեռնարկ: Դրանցից հարկ է նշել պրոֆեսոր Ռ.Հարությունյանի «Ֆիզիոլոգիա» (1991), պրոֆեսոր Ֆ.Ղազարյանի «Մարզական նախապատրաստման ըմբռնումները» (1991), պրոֆեսոր Ռ.Մելիքսեթյանի «Ֆիզկուլտուրայի դասերին տեսական գիտելիքների ուսուցումը» (1991), պրոֆեսոր Ռ.Հարությունյանի և դոցենտ Թ.Մանուկյանի «Ֆիզիոլոգիա» (1991), պրոֆեսոր Ֆ.Ղազարյանի «Սպոր-

տային նախապատրաստման հիմունքները» (1993), պրոֆեսոր Է.Սահակյանի «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի պատմություն» (1993), պրոֆեսոր Մ.Իսպիրյանի «Օլիմպիական շարժման պատմություն» և «Իրավունքի հիմունքներ» (1995), պրոֆեսոր Վ.Առաքելյանի «Մարզման առանձնահատկություններն ըմբշամարտում» (1996), դոցենտ Անահիտ Հարությունյանի «Մասնագիտական կողմնորոշման կազմաբանական, կենսաքիմիական և հոգեֆիզիոլոգիական չափանիշները սպորտում» (2000), պրոֆեսոր Չատինյանի «Հոկեյը խոտի վրա» (2000), դոցենտ Ս.Ալավերդյանի «Ռուսաց լեզվի ձեռնարկ» (2000), պրոֆեսոր Հ.Ավանեսյանի «Կիրառական մարզական հոգեբանություն» (2001), դոցենտ Ռ.Ղազարյանի «Շնչառական ֆիզիոլոգիա» (2002), պրոֆեսոր Գ.Ազիզյանի և դոցենտ Ա.Վանեսյանի «Ֆիզիկական նախապատրաստություն» (2002), դոցենտ Լ.Մանուկյանի «Նևրոլոգիան» («Նյարդաբանություն») (2001), պրոֆեսոր Մ.Իսպիրյանի «Հայաստանը և հայերը օլիմպիական շարժման ոլորտում» (2000) և «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի պատմություն» (2003) գրքերը, ասիստենտ Վ.Բաբայանի «Սպորտի փիլիսոփայություն» (2003), պրոֆեսոր Ֆ.Ղազարյանի և դոցենտ Ա.Գրիգորյանի «Ֆիզիկական դաստիարակության տեսություն» (2003), դոցենտ Հ.Մելքոնյանի «Հանդբոլ» (2003), դոցենտ Գ.Հակոբյանի, Ա.Չատինյանի, Վ.Գրիգորյանի «Դահուկասպորտ» (2003), դոցենտ Վ.Մամաջանյանի «Աթլետիկա» (2003), պրոֆեսոր Վ.Առաքելյանի «Մարզիկի քաշի կարգավորումը» (2004), դոցենտ Վ.Գևորգյանի «Կարատե դո» (2004), դոցենտ Ե.Դավթյանի «Բասկետբոլ» (2003), պրոֆեսոր Ռ.Հակոբյանի և դոցենտ Ա.Հարությունյանի «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի կառավարումը» (2004), դոցենտներ Ս.Հակոբյանի և Ա.Չատինյանի «Ֆուտբոլ» (2004), դոցենտ Հ.Գալստյանի «Դասակարգումը, համակարգումը և տերմինաբանությունը սպորտային ըմբշամարտում» (2004) ուսումնական ձեռնարկները, գրքերը և այլն: Առաջին անգամ հանրապետությունում լույս տեսավ «Մարզական հանրագիտարան», որի հեղինակներն են պրոֆեսորներ Մ.Իսպիրյանը և Վ.Առաքելյանը: Այս բոլոր ուսումնական ձեռնարկների հրատարակումը կարևոր նշանակություն ունեցավ ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավման համար: Ինստիտուտում սկսեց գործել տպարանը, որը 1998 թ. ստացել էր հիմնավոր վերանորոգված նոր շինություն՝ հագեցած ժամանակակից սարքավորումներով: Սա հնարա-

վորություն տվեց կատարելու բարդ տպագրական աշխատանքներ: Տպարանը ղեկավարում է հմուտ մասնագետ Ս.Գալստյանը: Գրականության նախապատրաստումը և հրատարակումը իրականացվում է ամբիոնների կողմից ներկայացված հայտերի պլանով:

1997 թվականից լույս է տեսնում «Ուսանող-մարզիկ» բազմատիրաժ թերթը, որը լայնորեն լուսաբանում է ինստիտուտի ոստմնադաստիարակչական, գիտական, մարզական և կուլտուր-մասսայական առօրյան: Թերթի խմբագիրն էր ճանաչված մարզական լրագրող Ա.Ս.Սաքանյանը: Նա մեծ աշխատանք կատարեց թերթը հետաքրքիր և կենդանի դարձնելու համար: Թերթը վայելում էր մեծ ճանաչում ինստիտուտի ուսանողների և աշխատակիցների շրջանում: Սկսած 2004 թ. թերթը վերանվանվել է «Հայ արի»:

2002 թ. ուսանողների մանկավարժական պրակտիկան առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով ինստիտուտի կառուցվածքում, որպես առանձին ստորաբաժանում, ստեղծվեց «դեպարտամենտ», որի ղեկավար նշանակվեց պրոֆեսոր Ռ.Մելիքսեթյանը, այնուհետև՝ ֆիզիկական դաստիարակության և տեսության ամբիոնի ասիստենտ Յու.Ա.Գրիգորյանը:

Ներկայումս ուսանողները մանկավարժական պրակտիկան անցկացնում են ոչ միայն հանրակրթական և մարզական դպրոցներում, այլև բուժական հիմնարկություններում (կինեզիոլոգներ) և զանգվածային հաղորդակցության միջոցներում և այլ խմբագրություններում (մարզական լրագրողներ):

1990-ական թվականների կեսերից ինստիտուտի կադրային ներուժը սկսեց ձևավորվել երիտասարդ, շնորհալի շրջանավարտներից՝ պահպանելով բարձր որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական կազմը: Նրանցից են՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ.Գալստյանը, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա.Հարությունյանը, դոցենտ Կ.Բաբայանը, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ.Աղաջանյանը, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ.Փաշիկյանը, բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ Ս.Գրիգորյանը, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ.Բաբայանը, դոցենտ Ա.Հարությունյանը, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռ.Ազարյանը, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Վ.Մամաջանյանը, մանկավարժական գիտությունների

թեկնածու, դոցենտ Ա.Գրիգորյանը, դոցենտ Գ.Հակոբյանը, դոցենտ Կ.Սարաֆյանը և ուրիշներ:

Նոր պայմաններում ինստիտուտը մեծ իրավունքներ ստացավ կադրերի պատրաստման և որակավորման բարձրացման հարցերում, հետազոտական գործունեության թեմատիկայի ընտրության գործում:

1995 թ.-ից գիտական կադրերի նախապատրաստումն իրականացվում է ուսուցման երկու ձևերով՝ ասպիրանտական և հայցորդական: Վերջին տասը տարիների ընթացքում ատենախոսություն են պաշտպանել 28 մարդ, այդ թվում 6-ը՝ դոկտորական ատենախոսություն: Դոկտորական ատենախոսություն պաշտպանածների թվում են Վ.Բ.Առաքելյանը (ըմբշամարտի ամբիոն), Մ.Ս.Իսպիրյանը (ֆիզիկական կուլտուրայի պատմության և կառավարման ամբիոն), Ռ.Տ.Մելիքսեթյանը (ֆիզիկական դաստիարակության մեթոդիկայի և տեսության ամբիոն), Գ.Բ.Աբրահամյանը (հասարակագիտության ամբիոն), Մ.Գ.Աղաջանյանը (սպորտային բժշկության ամբիոն), Հ.Ավանեսյանը (հոգեբանության և մանկավարժության ամբիոն): Ասպիրանտների և հայցորդների գիտական ղեկավարման հարցերով զբաղվել են պրոֆեսորներ Ֆ.Ղազարյանը, Կ.Աթոյանը. Բ.Սաղյանը, Ռ.Ազարյանը, Ս.Հարությունյանը, Է.Սահակյանը, Հ.Ավանեսյանը, դոցենտներ Ա.Գրիգորյանը, Ե.Հակոբյանը և ուրիշներ: Վերջին տարիներին գիտամանկավարժական կադրերի դինամիկ աճը պայմանավորված է գիտական, ապա ուսումնական աշխատանքի գծով պրոռեկտոր Ֆ.Ղազարյանի նպատակաուղղված գործունեությամբ և գիտական մասի վարիչ, պրոֆեսոր Ս.Մ.Հարությունյանի աշխատանքով:

2000-2004 թթ. ընթացքում ինստիտուտի ութ դասախոսների շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում, 4 դասախոսի՝ դոցենտի: Այս գործում գնահատելի է ինստիտուտի գիտական քարտուղար Է.Ե.Սահակյանի ավանդը, որն աշխատում է այդ պաշտոնում 30 տարուց ավելի:

Ինստիտուտի դասախոսների և աշխատակիցների գիտական հետազոտությունները ընդգրկում են ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի բոլոր հիմնական ոլորտները. տեսամեթոդական, բժշկակենսաբանական, հոգեբանամանկավարժական, պատմասոցիոլոգիական, կազմակերպչական-կառավարչական, փիլիսոփայական, տնտեսական: Գիտական հետազոտությունների կարևորագույն ուղղությունների թվին են պատկանում հետևյալ հիմնահարցերը՝ «Հայաստանի Հանրապետության բնակչության ֆիզիկական զարգացու-

մը և ֆիզիկական նախապատրաստումը», «Բարձր որակավորում ունեցող մարզիկների նախապատրաստման համակարգի կատարելագործումը», «Մարզիկների հոգեբանական նախապատրաստումը», «Մանկավարժական, բժշկական և կազմաբանական վերահսկողության կատարելագործումը մարզումների գործընթացում», «Ուսումնական գործընթացի կատարելագործումը»:

Ինստիտուտի գիտնականները շարունակում են կարևոր հետազոտությունները ֆիզիկական դաստիարակության մեթոդիկայի և տեսության ընդհանուր հիմունքներից, հայ ժողովրդի ֆիզիկական կուլտուրայի պատմությունից, ֆիզիկական կուլտուրայի սոցիոլոգիայից և ֆիզկուլտուրային շարժման կառավարումից: Այս բոլոր հետազոտությունները հրապարակված են տարբեր հրատարակություններով, որոնք ունեն մեծ արժեք հանրապետության ֆիզկուլտուրային շարժման տեսության և պրակտիկայի համար:

Վերջին հինգ տարիների ընթացքում հրատարակվել են գիտական աշխատությունների 5 ժողովածու, 17 մենագրություն, շուրջ 50 ուսումնական ձեռնարկ, 160 գիտական հոդված:

Վերջին տարիների գիտական աշխատանքներից հարկ է նշել պրոֆեսորներ Վ.Բ.Առաքելյանի, Ֆ.Գ.Ղազարյանի, Մ.Ս.Իսպիրյանի, Է.Ե.Սահակյանի, Հ.Մ.Ավանեսյանի, Գ.Ն.Ազիզյանի, Գ.Բ.Աբրահամյանի, Գ.Ե.Հակոբյանի, դոցենտներ Ա.Ա.Հարությունյանի և Լ.Ա.Մանուկյանի մենագրությունները, ինչպես նաև երիտասարդ դասախոսների պաշտպանած ատենախոսությունները՝ Ա.Հարությունյան (ֆիզիոլոգիայի և կենսաքիմիայի ամբիոն), Գ.Սարգսյան (ֆիզիկական կուլտուրայի պատմության և կառավարման ամբիոն), Տ.Սիմոնյան (աթլետիկայի ամբիոն), Ս.Դանիելյան (կիրառական մարզաձևերի ամբիոն), Ս.Աբրահամյան (ծանրամարտի ամբիոն), Ռ.Ջիլավյան (լողի ամբիոն), Գ.Ղազարյան (մարզախաղերի ամբիոն) և այլն:

Դասախոսական կադրերի տեսական նախապատրաստման բարձրացումը և գիտական նոր ուղղությունների զարգացումը ինստիտուտում նպաստեցին առավել շնորհալի ուսանողների ներգրավմանը հետազոտական աշխատանքներում: Այդ աշխատանքը գլխավորապես իրականացվում է ուսանողական գիտական խմբակներում, որոնք կազմակերպված են համապատասխան ամբիոններին կից, և անցկացվում են կուրսային և դիպլոմային աշխատանքների կատարման ձևով, ուսանողական գիտաժողովներին նրանց մասնակցու-

թյամբ: Ուսանողների գիտական աշխատանքները, որպես կանոն, սերտորեն կապված են գիտական թեմատիկայի հետ, որը մշակվում է ամբիոններում: Վերջին հինգ տարիների ընթացքում ուսանողների կողմից կարդացվել է 306 զեկուցում՝ ուսանողական գիտաժողովներին: ՈՒԳԸ-ն անդամների շարքերում քիչ չեն ուսանողները, որոնք ինստիտուտում են ստացել գիտական աշխատանքի առաջին հմտությունները, շարունակում են գիտական գործունեությունը, զբաղվում են մանկավարժական ստեղծագործ աշխատանքով: Տարբեր տարիներին ՈՒԳԸ ղեկավարել են պրոֆեսորներ Ֆ.Գ.Ղազարյանը, Ս.Մ.Հարությունյանը, Ա.Դ.Եղիազարյանը, Ի.Գ.Սաֆարյանը, դոցենտ Ա.Լ.Հակոբյանը և ուրիշներ:

Ուսումնական և գիտական աշխատանքի կազմակերպման գործում կարևոր է ինստիտուտի գրադարանի դերը: Անցած տարիների ընթացքում ինստիտուտի գրադարանը դարձել է խոշոր գրապահոց, որի ֆոնդերում հաշվվում են շուրջ 180000 գիրք, այդ թվում՝ եզակի գրականություն, հազվագյուտ գրքեր, ձեռագրեր և արխիվային նյութեր, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի առանձին գործիչների և աշխատողների անձնական ֆոնդեր, ատենախոսություններ և սեղմագրեր, մարզական պարբերական մամուլ: Գրադարանն ունի լավ կահավորված ընթերցասրահ, աշխատանքային սենյակներ՝ քարտագրացուցակների և քարտարանների համար, տեղեկատու-մատենագիտական բաժին և կաբինետներ: Գրադարանի աշխատակիցները պարբերաբար տեղեկացնում են գրականության նորույթների մասին, կազմակերպում են գրքերի թեմատիկ ցուցահանդեսներ: Բոլոր ուսանողները ապահովվում են ուսումնական գրականությամբ: Երկար տարիներ գրադարանային գործին են նվիրվել Մ.Ա.Սողոմոնյանը, Լ.Ն.Մաթևոսյանը, Ե.Գ.Աղամիրյանը, Ա.Վ.Ռանյանը, գրադարանի վարիչ Ն.Սաֆարյանը և ուրիշներ:

Ինստիտուտի կարևոր ստորաբաժանումներից է բուժական մասը, որը ղեկավարում է հանրաճանաչ մարզական վիրաբույժ Գ.Ա.Սարգսյանը: Բաժանմունքի բոլոր աշխատակիցները մեծ ուշադրությամբ են հետևում ինստիտուտի աշխատողների և ուսանողների առողջությանը և ցուցաբերում են անհրաժեշտ օգնություն:

Ինստիտուտի կյանքում կարևոր դեր է խաղում ուսանողական կազմակերպությունը, որը հաջողությամբ շարունակում է իր նախորդների ավանդույթները:

Ուսանողական կազմակերպությունը ղեկավարում է ուսանողական խորհուրդը, որի նախագահը ինստիտուտի շրջանավարտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Գ.Սարգսյանն է: Ուսանողական խորհրդին կից գործում է ակումբների մի ամբողջ համակարգ, ուր կատարվում է մեծ և բազմակողմանի աշխատանք՝ հայրենասիրական, գեղագիտական, բարոյական, իրավական, աշխատանքային, ֆիզիկական և ինտերնացիոնալ դաստիարակության գծով: Ինստիտուտի նիստերի դահլիճում անցկացվում են համաինստիտուտային հիմնական միջոցառումները, թեմատիկ երեկոները, համերգները, կինոնկարների ցուցադրումը, հանգստի երեկոները: Ուսանողական խորհուրդը ինստիտուտի ղեկավարության հետ միասին կատարում է մեծ աշխատանք ուսանողների առաջադիմության և կարգապահության բարելավման համար: Ավանդույթ են դարձել էքսկուրսիաները, տուրիստական արշավները, կոլեկտիվ համերգներ և թատրոններ, թանգարաններ և ցուցահանդեսներ հաճախելը:

Ուսումնառության առաջին իսկ օրերին կազմակերպվում են հանդիպումներ առաջին կուրսեցիների և ինստիտուտի ղեկավարության՝ ֆակուլտետների ղեկանների, ամբիոնի վարիչների, հասարակական կազմակերպությունների ղեկավարների հետ: Այդ հանդիպումների ժամանակ ուսանողներին ծանոթացնում են ուսումնական աշխատանքի ծրագրերին, իրենց իրավունքներին և պարտականություններին:

Ինստիտուտում մեծ ուշադրություն է դարձվում աշխատանքային և հայրենասիրական դաստիարակությանը: Ինստիտուտի ուսանողները և դասախոսները ակտիվորեն մասնակցել են Վ. Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտի շինարարական աշխատանքներին, Երևան քաղաքի բարեկարգման նպատակով կազմակերպվող շաբաթօրյակներին, ցուցաբերել են օգնություն ԼՂՀ-ի քաղաքների և գյուղերի վերականգնողական աշխատանքներին; 1990-1994 թ.թ ինստիտուտի տասնյակ ուսանողներ և շրջանավարտներ, կատարելով իրենց քաղաքացիական պարտքը, պատերազմի առաջին օրվանից մինչև վերջ մարտնչեցին կամավորական ջոկատներում՝ Արցախի անկախության և ազատության համար: Նրանցից 23-ը զոհվեցին հերոսի մահով: Ինստիտուտը սրբությամբ է պահում նրանց հիշատակը: Նրանց հիշատակը հավերժացնելու նպատակով ինստիտուտի բակում կանգնեցվել է խաչքար-հուշարձան, իսկ թանգարա-

նում՝ նրանց մասին կա ցուցափեղկ: Զոհվածների մեջ էին հրաշալի մարզիկներ՝ նետաձիգ Նունե Աբրահամյանը, ըմբիշներ Ա.Ա. Գասպարյանը, Է.Լ. Զորաբյանը, Մ.Գ. Մարգարյանը, Ա.Ա. Մուրադյանը, Վ.Ս. Պողոսյանը, Ա.Վ. ՈՒդումյանը, Ա.Ռ. Քարամյանը, բռնցքամարտիկ Վ.Գ. Բաղդասարյանը, ծանրորդ Ա.Ա. Բարսեղեյանը, Մ.Գ. Մելիքյանը, աթլետներ Կ.Մ. Գաբրիելյանը, Գ.Վ. Ղուկասյանը, Ս.Վ. Ստեփանյանը, լողորդներ Ա.Ս. Յաքանյանը, Ա.Գ. Մանուկյանը, Կ.Ա. Դելեյանը, վոլեյբոլիստներ Ա.Ի. Ասլանյանը, Մ.Ս. Գիգորյանը, ֆուտբոլիստ Ն.Ա. Գասպարյանը, հեծանվորդներ Ս.Ա. Ջավադյանը, Ս.Պ. Գևորգյանը, ձեռնագնդորդ Կ.Ա. Գեվորգյանը: Որպես սուրբ մասունք՝ ինստիտուտի թանգարանում պահվում են մեր շրջանավարտ, արցախյան պատերազմի հերոս, հանրապետության նախկին վարչապետ Վազգեն Սարգսյանի փաստաթղթերը և ուսանողական տարիների գրավոր աշխատանքները: Ինստիտուտի շրջանավարտներ Այբերտ Բազեյանը և Վահան Զատիկյանը, արցախյան պատերազմի ժամանակ եղել են կամավորական ինքնապաշտպանական ջոկատների հրամանատարներ:

Ինստիտուտը շարունակում է միջոցներ ձեռնարկել ուսանողների սպորտային վարպետության բարձրացման ուղղությամբ: Այս աշխատանքներին անմիջական մասնակցություն են ունենում 8 ամբիոնների դասախոսներ, ուր աշխատում են 80 մասնագետ, ինչպես նաև ինստիտուտի մարզական ակումբը, որի աշխատանքները երկար տարիներ ղեկավարում էր Հ.Մելքոնյանը, իսկ 1998թ.-ից՝ Կ.Կարապետյանը: Ինստիտուտի բազայի վրա դասախոսների ղեկավարությամբ շարունակում են գործել մանկական մարզական խմբեր բասկետբոլից, ֆուտբոլից, թենիսից, ըմբշամարտի տարբեր ձևերից, ինչպես նաև մեծահասակների խմբեր՝ աթլետիզմից և առողջարարական մարմնամարզությունից:

Ուսանողների համար ամեն տարի կազմակերպում են բազմաթիվ մրցումներ բոլոր մարզաձևերից: Ավանդական են դարձել առանձին մարզաձևերի հուշամրցումները՝ նվիրված ինստիտուտի վաստակաշատ դասախոս-մարզիչներ Կ.Վարդանյանի, Բ. Մելիքյանի, Գ. Սիմոնյանի, Ս. Թումանյանի, Ա. Աբրահամյանի, Ս. Գևորգյանի հիշատակին, որոնք մեծ ավանդ ունեն մեր հանրապետությունում սպորտի զարգացման գործում:

Ինստիտուտի կյանքում հատուկ տեղ են գրավում ամենամյա հա-

մալիր մրցումները՝ սպարտակիադաները: Դրանց մասնակցում են ուսանողների 60%-ից ավելին:

Շարունակելով իրենց նախորդների ավանդույթները՝ դասախոսների և ուսանողների այսօրվա սերունդը արժանավայել է ներկայացնում Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը տարբեր մրցումներում: Ինչպես նախկին տարիներին, ինստիտուտի մարզիկները հաջողությամբ են հանդես գալիս հանրապետության առաջնություններում: Միայն 2003թ.-ին հանրապետական տարբեր մրցումների մասնակցել են 699 մարզիկ, նրանցից 435-ը գրավել են մրցանակային տեղեր: Ինստիտուտի կյանքում կարևոր իրադարձություն էր ուսանողների մասնակցությունը 1999, 2001 և 2003 թթ. Երևանում կազմակերպված Համահայկական խաղերին: Ինստիտուտի մարզիկները հաջողության են հասել միջազգային մրցումներում: Նրանց մարզական նվաճումների մասին է խոսում այն փաստը, որ միայն վերջին 12 տարիների (1992-2004թթ.) ընթացքում 30 ուսանող-մարզիկները հաղթանակ են տոնել աշխարհի, Եվրոպայի չեմպիոնատներում և օլիպիական խաղերում:

Նրանց թվում են օլիմպիական խաղերի չեմպիոններ Է.Ազարյանը, Հ.Միրզոյանը, Ֆ.Մելնիկը, Հ.Պետիկյանը, Ա.Նազարյանը, աշխարհի չեմպիոններ Ա.Հակոբյանը, Բ.Փաշայանը, Շ.Կարապետյանը, Վ.Գալստյանը, Ի.Հակոբկոխյանը, Ն.Մունչյանը, Ա.Գևորգյանը, Ա.Տեր-Սկրտչյանը, Յու.Սարգսյանը, Ք.Նաջարյանը, Եվրոպայի չեմպիոններ Կ.Մնացականյանը, Մ.Բերբերյանը, Դ.Համբարձումյանը, շախմատի ձևով գրոսմայստերներ, Եվրոպայի չեմպիոններ և համաշխարհային օլիմպիադաների մրցանակակիրներ Ս.Լպուտյանը, Ա.Մինասյանը, Վ.Հակոբյանը, Լ.Արոյանը, Ա.Անաստասյանը, Կ.Ասրյանը, Լ.Սկրտչյանը, Գ.Սարգսյանը և ուրիշներ:

Բարձրակարգ մարզիկների պատրաստման գործում մեծ լումա ունեն այնպիսի դասախոս-մարզիչներ, ինչպիսիք են Գ.Ազիզյանը (ծանրամարտ), Ա.Անտոնյանը (բռնցքամարտ), Շ.Ջանյանը, Հ.Գալստյանը, Վ.Թովմասյանը (ազատ ըմբշամարտ), Է.Կարապետյանը, Ա.Եղիազարյանը, Կ.Կիրակոսյանը (հունահռոմեական ըմբշամարտ), Դ.Խիթարյանը և Ա.Անտիկյանը (ճյուդո), Ս.Ծառուկյանը (հանդբոլ), Կ.Մսնուկյանը (բասկետբոլ), Ն.Յասակովան (վոլեյբոլ), Ֆ.Սարգսյանը (սեղանի թենիս), Ի.Սաֆարյանը, Ռ.Ջիլավյանը (լող) Գ.Դավթյանը (ջրագնդակ), Վ.Մամաջանյանը, Կ.Բաբայանը, Մ.Հայրապետյանը

(աթլետիկա), Գ.Գյոզալյանը և Մ.Սահակյանը (հեծանվասպորտ), Կ.Կարապետյանը և Ա.Տիրացույանը (դահուկասպորտ), Կ.Մարգարյանը (մարմնամարզություն):

Սկսած 1991 թ. ինստիտուտը զգալի չափով ընդլայնեց իր միջազգային կապերը: Հատկապես այդ կապերը լայն թափ ստացան երբ 1997թ ինստիտուտում ստեղծվեց միջազգային բաժին, որը մինչև 2004թ ղեկավարում էր հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ.Բաբայանը: Այժմ այդ աշխատանքը գլխավորում է ըմբշամարտի ամբիոնի ասիստենտ Ա.Մարտիրոսյանը:

Ինչպես նախկին տարիներին, ներկայումս նույնպես ինստիտուտ սովորելու են գալիս արտասահմանցի հայ երիտասարդներ, որոնք ձգտում են ստանալ բարձրագույն ֆիզկուլտուրային կրթություն հայրենիքում: 2000թ. ինստիտուտն ավարտեց արտասահմանցի հայ երիտասարդների առաջին խումբը:

1996թ. մինչև 2004 թ. ինստիտուտում բարձրագույն կրթություն են ստացել 60-ից ավելի արտասահմանցի հայեր՝ Ռուսաստանից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Արգենտինայից, Հունաստանից, Սիրիայից, Կիպրոսից, Լիբանանից, Իրանից և Վրաստանից: Բացի այդ, վերջին տարիներին միջպետական համաձայնության հիման վրա ինստիտուտում սովորել են 3 ասպիրանտ՝ Սիրիական Արաբական Հանրապետությունից, որոնք հաջողությամբ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություններ, երկուսը՝ սպորտի մանկավարժությունից, մեկը՝ սպորտի հոգեբանությունից:

Ինստիտուտը բարեկամական կապեր է հաստատել Ռուսաստանի, ԱՊՀ երկրների, Մերձբալթյան հանրապետությունների ֆիզկուլտուրային բարձրագույն ուսումնական հաստատությունների, ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Չինաստանի, Ավստրիայի, Իրանի, Սիրիայի, Եգիպտոսի ուսումնական հաստատությունների և մարզական կազմակերպությունների հետ, ինչպես նաև միջազգային մարզական կազմակերպությունների, մարզաձևերի ֆեդերացիաների և ազգային օլիմպիական կոմիտեների հետ: Գիտահետազոտական փորձի փոխանակման և դասախոսություններ կարդալու նպատակով ԱՊՀ և արտասահմանյան երկրների ֆիզիկական կուլտուրայի բուհեր են հրավիրվել պրոֆեսոր Ֆ.Գ.Ղազարյանը (Բուլղարիա, Բելոռուսիա, Ռուսաստան), Ռ.Տ.Մելիքսեթյանը (Իրան), Հ.Մ.Ավանեսյանը (ԱՄՆ, Ֆրանսիա, Գերմանիա, Ռուսաստան, Լիտվա, Ավստրիա), Վ.Բ.Առա-

քելյանը (Կիպրոս), դոցենտ Ա.Ա.Բաբայանը (Նեպալ, Սինգապուր): Իրենց հերթին գիտական փորձի փոխանակման նպատակով Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի Հայկական պետական ինստիտուտ են եկել արտասահմանյան երկրներից գիտնականներ. Ֆրանսիայից՝ Գերալդ Ավանեսյանը, Ռաշո Հովհաննեսը, ԱՄՆ-ից՝ Ջոան Ինգալսը, Լեհաստանից՝ Կրոկիդե Միրենը, Մոսկվայից՝ Գ.Ս.Թումանյանը, Վրաստանից՝ Ապցիաուրի Լելյան և ուրիշներ: Ինստիտուտի պրոֆեսորներ Վ.Բ.Առաքելյանը, Ֆ.Գ.Ղազարյանը, Ռ.Տ.Մելիքսեթյանը, Հ.Մ.Ավանեսյանը, Մ.Ս.Իսպիրյանը, Մ.Գ.Աղաջանյանը, Յու.Ե.Կուպալյանը, դոցենտ Հ.Բաբայանը ակտիվ մասնակցություն են ունեցել միջազգային գիտական կոնգրեսներին, սիմպոզիումներին և սեմինարներին՝ տարբեր երկրներում (Հունաստան, Լեհաստան, Գերմանիա, Չեխիա, Ռուսաստան, Բուլղարիա, Կանադա, ԱՄՆ, Ավստրիա, Ֆրանսիա, Իտալիա և այլն):

Արտասահմանյան մամուլի էջերում, միջազգային և գիտական կոնֆերանսների ժողովածուներում տպագրվել են պրոֆեսորներ Վ.Բ.Առաքելյանի, Ֆ.Գ.Ղազարյանի, Մ.Ս.Իսպիրյանի, Է.Ե.Սահակյանի, Հ.Մ.Ավանեսյանի, դոցենտներ Հ.Գալստյանի, Ա.Գ.Հարությունյանի, Յու.Գ.Գրիգորյանի և ուրիշների հոդվածները և զեկուցումները:

Գիտության բնագավառում ինստիտուտի ծանրակշիռ վաստակի ճանաչումը հանդիսացավ նրա՝ համաշխարհային և եվրոպական մի շարք գիտական կազմակերպությունների անդամ դառնալը: Դրանցից են՝ «Մարզական գիտությունների եվրոպական կոնֆեդերացիան» Բրյուսելում, «Առողջ ապրելակերպ» եվրոպական ասոցիացիան, «Առողջարարական ֆիզիկական կուլտուրան» Բարսելոնայում, «Եվրոպական ասոցիացիան», «Սպորտը բոլորի համար» Սլովակիայում, «Առողջության շեղումներ ունեցող մարդկանց օժանդակության միջազգային ասոցիացիան» Ֆրանսիայում, «Եվրասիական ասոցիացիան», «Մտավոր արատներ ունեցող մարդկանց ադապտիվ ֆիզիկական դաստիարակությունը» Լեհաստանում, «Միջազգային օլիմպիական ակադեմիան» Աթենքում և ուրիշներ:

Ինստիտուտում զգալի աշխատանք է տարվում «Օլիմպիական համերաշխություն» ծրագրի սահմաններում: 1993 թ. ինստիտուտի բազայի վրա ստեղծվեց Ազգային օլիմպիական ակադեմիան, որի պրեզիդենտն է ինստիտուտի ռեկտոր, պրոֆեսոր Վ.Բ.Առաքելյանը:

Ազգային Օլիմպիական ակադեմիան ամեն տարի անց է կացնում գիտաժողովներ, «Օլիմպիական գաղափարներ յուրաքանչյուրին» թեմայով սեմինարներ, խորհրդակցություններ, ուր հրավիրվում են գիտնականներ և մարզական գործիչներ տարբեր միջազգային կազմակերպություններից:

Նշանակալի իրադարձություն էր ՀԱՕԿ-ի և Ազգային օլիմպիական ակադեմիայի նախաձեռնությամբ օլիմպիական խաղերի հայազգի չեմպիոն Վարազդատ Արշակունու մարմարե կիսանդրու տեղադրումը հին Հունաստանի Օլիմպիա ավանում (1998 թ.), որը ցայտուն ապացույց է այն բանի, որ հայ մարզիկները մասնակցել են հին հունական օլիմպիական խաղերին: Բացի այդ, ինստիտուտի ճեմասրահում տեղադրված են ինչպես հին հունական օլիմպիական խաղերի չեմպիոններ Վարազդատի (385 թ.) և Տրդատ երրորդի (281թ.) կիսանդրիները, այնպես էլ ժամանակակից օլիմպիական խաղերի չեմպիոններ Հրանտ Շահինյանի և Ալբերտ Ազարյանի կիսանդրիները: Օլիմպիական գաղափարների ակտիվ պրոպագանդման և միջազգային կապերի զարգացման համար Ազգային օլիմպիական ակադեմիան՝ ի դեմս նրա՝ Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի կոլեկտիվի, 2000 թ. «Օլիմպիական համերաշխություն» միջազգային կազմակերպության կողմից արժանացել է «Սպորտը և հասարակայնությունը» մրցանակին:

Ինստիտուտի գործունեության ղեկավարման գործում կարևոր դեր են խաղում ինստիտուտի խորհուրդը, գիտական խորհուրդը և ռեկտորատը:

Ինստիտուտի խորհուրդը հանդիսանում է ինստիտուտի ղեկավարման բարձրագույն մարմինը, որի կազմի մեջ մտնում են ռեկտորատի անդամները, ամբիոնի վարիչները, մյուս ստորաբաժանումների վարիչները, դասախոսները, ադմինիստրատիվ-տնտեսական աշխատողները և ուսանողները: Խորհուրդը բաղկացած է 67 անդամներից, որոնց 25 % ուսանողներն են: Յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում խորհուրդը լսում է ռեկտորի հաշվետվությունը կատարված աշխատանքի մասին և մշակում նոր ուսումնական տարվա խնդիրները: Կառավարման մյուս մարմինը հանդիսանում է գիտական խորհուրդը: Նրա հիմնական գործունեությունը ուղղված է ուսումնադաստիարակչական, գիտամեթոդական և մարզական աշխատանքների կատարելագործմանը, գիտամանկավարժական

կադրերի ընտրությանն ու որակավորման բարձրացմանը: Գիտական խորհրդի նիստերը հրավիրվում են ամիսը մեկ անգամ: Գիտ-խորհրդի կազմում կա 35 մարդ: Խորհրդի և Գիտական խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում կարևոր ընթացիկ հարցերի քննարկման համար մշտապես գործում է ռեկտորատը, որը բաղկացած է 11 մարդուց:

Գնահատելով ինստիտուտի կայացման և զարգացման վաթսունամյա պատմությունը, ամփոփելով անցած ուղու արդյունքները՝ կարող ենք նշել, որ Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի կոլեկտիվը պատվով է կատարել իր պատմական առաքելությունը՝ բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստման, սպորտային վարպետության մակարդակի բարձրացման և հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման չափազանց կարևոր գործում:

Իր գոյության ընթացքում ինստիտուտը նախապատրաստել է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բարձր որակավորում ունեցող 12 հազարից ավելի մասնագետներ: Ինստիտուտի 109 դասախոսներ և աշխատակիցներ պաշտպանել են թեկնածուական, 13-ը՝ դոկտորական ատենախոսություններ, 30 շրջանավարտներ դարձել են վաստակավոր մարզիչներ, 26-ը՝ սպորտի վաստակավոր վարպետներ, 45-ը՝ ֆիզիկական կուլտուրայի վաստակավոր գործիչներ, 113-ը՝ ֆիզկուլտուրային և սպորտի վաստակավոր աշխատողներ: Բազմաթիվ շրջանավարտներ դարձել են հանրապետության ֆիզկուլտուրայի շարժման խոշոր կազմակերպիչներ: Դրանց թվում են Հ.Շահինյանը, Գ.Ժամհարյանը, Ի.Նովիկովը, Կ.Մալխասյանը, Մ.Իսպիրյանը,, Բ.Հասրաթյանը, Հ.Շանոյանը, Ռ.Թորոյանը, Ա.Ավետիսյանը, Բ.Փաշայանը, Ա.Յավրյանը, Ա.Գրիգորյանը, Դ.Գաբրիելյանը, Գ.Ծառուկյանը և ուրիշներ:

60 տարվա ընթացքում պրոֆեսորադասախոսական կազմի ուժերով հրատարակվել են 66 գիտական մենագրություններ, 762 գիտական հոդվածներ, 477 թեզիսներ, 105 ուսումնական ձեռնարկ և 11 մատենագրական տեղեկատու:

Ինստիտուտի կառուցվածքում գործում են երկու ֆակուլտետներ՝ մարզչամանկավարժական և մարզաառողջարարական, ինչպես նաև հեռակա ուսուցման բաժինը, որոնք միավորում են 17 ամբիոններ:

Մարզչամանկավարժական ֆակուլտետը ներառում է հետևյալ ամբիոնները՝ Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի, մանկավարժության և հոգեբանության, հասարակական գիտությունների, լեզուների, ֆուտբոլի և թենիսի, ըմբշամարտի, ծանրամարտի, բռնցքամարտի և սուսերամարտի, կիրառական մարզաձևերի:

Մարզաառողջարարական ֆակուլտետը կազմված է՝ ֆիզիոլոգիայի և կենսաքիմիայի, անատոմիայի և կենսամեխանիկայի, ֆիզիկական կուլտուրայի պատմության և մեթոդմեթոդի, կինեզիոլոգիայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի, մարզական լրագրության և շախմատի, մարզախաղերի, մարմնամարզության և սպորտային պարերի, լողի, աթլետիկայի ամբիոններից:

Ինստիտուտը պատրաստում է դիպլոմավորված մասնագետներ 26 մասնագիտություններից՝ աթլետիկա, լող, մարմնամարզություն, սպորտային պարեր, ազատ ոճի ըմբշամարտ, հունահռոմեական ըմբշամարտ, սամբո, ձյուդո, կարատեդո, դահուկասպորտ, հեծանվասպորտ, փրկարարական գործ, բասկետբոլ, վոլեյբոլ, հանդբոլ, թենիս, սեղանի թենիս, շախմատ, ֆուտբոլ, բռնցքամարտ, ծանրամարտ, սուսերամարտ, կինեզիոլոգիա, ադապտիվ ֆիզիկական կուլտուրա և մարզական լրագրություն:

Բարձր որակավորում ունեցող մասնագետների նախապատրաստման համար ինստիտուտը իր տրամադրության տակ ունի համապատասխան ուսումնամարզական բազա, այդ թվում՝ աթլետիկական մանեժը, լողավազանը, մարմնամարզական երկու դահլիճները, բռնցքամարտի, սուսերամարտի, ծանրամարտի, աթլետիկական մարմնամարզության, արևելյան մարզաձևերի, ըմբշամարտի դահլիճները, մարզախաղերի երկու դահլիճները, մարզասարքերի դահլիճը, ֆուտբոլի մարզադաշտը, թենիսի չորս կորտերը, հրաձգարանը:

Դասախոսների և ուսանողների տրամադրության տակ են ժամանակակից պահանջներով կահավորված նիստերի դահլիճը, մեթոդական և լինգաֆոնիկ կաբինետները, տեղեկատվական-վիճակագրական կենտրոնը: Բոլոր մյուս կառուցվածքային ստորաբաժանումները (ամբիոններ, դեկանատներ, կադրերի բաժին, ուսումնական մաս, գիտական մաս, գրասենյակներ, տնտեսական մաս, հաշվապահություն) իրենց տրամադրության տակ ունեն ժամանակակից անհատական համակարգիչներ և համապատասխան ծրագրեր:

Ուսանողների հետ ուսումնադաստիարակչական, գիտամեթոդական և մարզական աշխատանք են տանում 171 դասախոս, որոնց մեջ կան 17 գիտությունների դոկտոր և պրոֆեսոր, 43 գիտությունների թեկնածու և դոցենտ: Երկուսն ունեն ֆիզիկական կուլտուրայի վաստակավոր գործչի կոչում, 18-ը՝ ֆիզկուլտուրայի վաստակավոր աշխատողի, 26-ը՝ հանրապետության վաստակավոր մարզչի, 44-ը՝ սպորտի վարպետի կոչում: Ինստիտուտի շատ դասախոսներ կատարում են հասարակական աշխատանքներ հանրապետության հասարակական, մարզական կազմակերպություններում, ղեկավարում են սպորտային ֆեդերացիաներ, մարզչական խորհուրդներ, մրցավարական հանձնաժողովներ:

Հանրապետության կառավարությունը բարձր է գնահատել դասախոսների ուսումնական, գիտական, մարզական և հասարակական գործունեությունը: Նրանցից շատերը անբասիր աշխատանքի, ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացման գործում ունեցած հաջողությունների համար պարգևատրվել են շքանշաններով և մեդալներով, իսկ ինստիտուտի ռեկտորը՝ պրոֆեսոր Վ.Բ.Առաքելյանը, արժանացել է «Մովսես Խորենացի» մեդալի:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թ. սեպտեմբերի 12-ի (N1664-ն) որոշման համաձայն ինստիտուտը ստացավ պետական ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:

2003 թ. հուլիսի 16-ին ինստիտուտը լիցենզավորվեց Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից:

Լիցենզավորմանը համապատասխան ինստիտուտը իրականացնում է բարձրագույն ուսումնական հաստատության կրթական ծրագրեր:

Նշելով հարազատ օջախի վաթսունամյակը, հենվելով կուտակված փորձի, ավանդույթների և նվաճումների վրա՝ ինստիտուտը ուրվագծում է հետագա զարգացման հետևյալ ուղղությունները.

- *մասնագետների պատրաստման որակի բարձրացում, տիրապետելով գիտական և մասնագիտական որակավորման բոլոր մակարդակներին.*
- *նոր մասնագիտությունների ստեղծում.*
- *ուսումնական գործընթացի կառավարման բարելավում, ինքնուրույն աշխատանքի հետագա զարգացում.*

- *դասավանդման մեթոդիկայի կատարելագործում, ուսուցման ակտիվ մեթոդների մշակում և լայն կիրառում.*
- *ուսումնական գործընթացի մեջ հաշվողական տեխնիկայի, ժամանակակից էլեկտրոնային հաշվիչ մեքենաների ներդրում.*
- *բոլոր դասախոսների և աշխատակիցների մասնագիտական մակարդակի բարձրացում, գիտության դոկտորների և թեկնածուների պատրաստման գործի ընդլայնում.*
- *ամբիոնների գիտական հետազոտությունների և ինստիտուտի գիտահետազոտական կենտրոնի թեմատիկայի նորացում և ընդլայնում, ուղղված երեխաների, երիտասարդների և տարեց մարդկանց ֆիզիկական կուլտուրայի և սպորտի արդիական և հեռանկարային պահանջմունքներին.*
- *ատենախոսությունների պաշտպանության հարցերով ատենախոսական խորհրդի ստեղծում.*
- *գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումների հիման վրա ուսանողների մարզատեխնիկական վարպետության մակարդակի բարձրացում.*
- *ուսումնական և ուսումնամարզչական գործընթացների նյութատեխնիկական բազայի հետևողական բարելավում.*
- *առկա կադրային ներուժի պահպանում և երիտասարդ, շնորհալի մասնագետների պատրաստում:*

ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ԱՄԲԻՈՆ

Ըմբշամարտի ամբիոնը իր հիմնադրման օրից (1945թ.) ակտիվ գործունեություն է ծավալել ինստիտուտի կայացման գործում, զգալի ներդրում է ունեցել ուսումնադաստիարակչական, մեթոդական, գիտահետազոտական և մարզական աշխատանքների կազմակերպման բնագավառում: Ինստիտուտի ձևավորման և զարգացման բոլոր փուլերում ամբիոնի կոլեկտիվը հանդես է եկել ավանգարդի դերում և ակտիվ մասնակցություն ունեցել ուսանող-մարզիկների ինչպես ուսումնադաստիարակչական, այնպես էլ մարզական վարպետության բարձրացման գործընթացի կազմակերպման և կատարելագործման գործում:

Որպես թողարկող ամբիոն եղել և մնում է ինստիտուտի և հանրապետության մարզական նվաճումների դարբնոց, ուսումնադաստիարակչական և գիտամեթոդական աշխատանքների իրականացման գլխավոր օղակներից մեկը:

Ըմբշամարտի ամբիոնի ձևավորումը և կայացումը մեծապես պայմանավորված էր հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտային շարժման տեսության և պրակտիկայի առաջընթացով, միջազգային մրցաշարերում ուսանող-մարզիկների ձեռքբերումներով: Ամբիոնը հանդիսանում է ինստիտուտի այն հիմնական ստորաբաժանումներից մեկը, որն ունի բարձր մարզական նվաճումներ: Նրա նախաձեռնությամբ կազմակերպվել են ընկերական և պաշտոնական բազմաթիվ միջազգային մրցաշարեր:

Տարբեր տարիների ամբիոնը ղեկավարել են տեսական և մարզական բարձր պատրաստություն ունեցող մասնագետներ:

Ըմբշամարտի ամբիոնի առաջին վարիչը եղել է 1946թ. ԽՍՀՄ չեմպիոն, ԽՍՀՄ սպորտի վարպետ, ԽՍՀՄ վաստակավոր մարզիչ, Հայաստանի Հանրապետությունում ազատ ըմբշամարտի հիմնադիր Ա.Թ.Նազարյանը (1945-1948թ.թ.):

Նշված ժամանակահատվածում ամբիոնի ուսանողները մասնագիտանում էին ըմբշամարտ, ծանրամարտ և բռնցքամարտ մասնագիտություններով:

1949-1952 թթ. ըմբշամարտի, ծանրամարտի և բռնցքամարտի ամբիոնը ղեկավարել է հայ անվանի ըմբիշ, ԽՍՀՄ քառակի չեմպիոն, ԽՍՀՄ վաստակավոր մարզիչ Ա.Ս.Կարապետյանը:

1953-1954 թթ. ամբիոնի վարիչ է աշխատել ԽՍՀՄ չեմպիոն, Հայաստանի Հանրապետության բազմակի չեմպիոն, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ռուսաստանի Դաշնության ֆիզիկական կուլտուրայի վաստակավոր գործիչ Գ.Ս.Թումանյանը:

1954-1959 թթ. ամբիոնը ղեկավարել է ինստիտուտի շրջանավարտ, ԽՍՀՄ սպորտի վարպետ, հետագայում մանկավարժական գիտությունների թեկնածու, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կ.Պ.Աթոյանը:

1960-1968 թթ. ըմբշամարտի, բռնցքամարտի և ծանրամարտի ամբիոնը համալրվում է սուսերամարտ մասնագիտությամբ, իսկ ամբիոնը ղեկավարում է սուսերամարտի ճանաչված մասնագետ, ԽՍՀՄ սպորտի վարպետ, հանրապետության վաստակավոր մարզիչ, Հայաստանի և Վրաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Հ.Գ.Գասպարյանը:

1968-1975թ.թ. ըմբշամարտի և բռնցքամարտի ամբիոնը նորից ղեկավարել է Կ.Պ.Աթոյանը:

1975-1982 թթ. ամբիոնը վերանվանվում է ըմբշամարտի ամբիոն, որը շարունակում է ղեկավարել Կ.Պ.Աթոյանը, իսկ ամբիոնում ուսանողները մասնագիտանում են չորս մարզաձևերից՝ հունահռոմեական, ազատ, ճյուդո և սամբո ըմբշամարտ մարզաձևերից:

Այդ ժամանակահատվածում ինստիտուտի, այդ թվում և ըմբշամարտի ամբիոնի, պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական ներուժի բարելավումը, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի բարձրակարգ մասնագետների պատրաստումը պահանջում էր

շտապ լուծում: Ամբիոնը գիտամանկավարժական կադրերով ապահովելու հարցը դրվեց առաջին պլանի վրա:

1970-1972թ.թ. ամբիոնը համալրվեց գիտության թեկնածուներով՝ Բ.Սաղյան, Ա.Եղիազարյան: Ամբիոնի երիտասարդ դասախոսներ Վ.Առաքելյանը, Ա.Պեչիկյանը, Մ.Պողոսյանը, Օ.Կիրակոսյանը, Վ.Մուրադյանը և Ա.Դադայանը գործուղվեց Մոսկվա, որպես ասպիրանտներ: Ամբիոնի դասախոսներ Շ.Ջանյանը և Յու.Մկրտչյանը ընտրեցին ատենախոսության թեմաներ:

Այս տարիներին ամբիոնի աշխատակիցներ Հ.Գալստյանը և Յու.Մկրտչյանը պաշտպանեցին ատենախոսություններ:

1983-1995 թթ. ամբիոնը ղեկավարել է մանկավարժական գիտությունների թեկնածու Վ.Առաքելյանը, որի ղեկավարությամբ զգալի առաջընթաց է տեղի ունենում ամբիոնի ուսումնական, գիտահետազոտական և մարզական աշխատանքներում:

Այնուհետև, 1998 թ. ստանձնելով ինստիտուտի ռեկտորի պաշտոնը, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի ազգային օլիմպիական ակադեմիայի տնօրեն Վ.Առաքելյանը հսկայածավալ աշխատանքներ տարավ ինստիտուտի ուսումնական, գիտական, մարզական և տնտեսական գործունեությունը բարելավելու ուղղությամբ: Ամբողջովին փոխվեցին ինստիտուտում դասավանդվող բոլոր առարկաների ուսումնական պլանները և ծրագրերը, առաջին անգամ ինստիտուտում ստեղծվեց դասախոսությունների, գործնական պարապմունքների և սեմինարների բովանդակային ֆոնդը, արմատապես բարելավվեց գիտաժողովների մակարդակը, մարզական հաջողությունները դարձան առավել ակնհայտ, ամբողջովին վերանորոգվեցին և վերակառուցվեցին ինստիտուտի բոլոր մասնաշենքերը, լուծվեց տանիքի, ջեռուցման և տաք ջրի հարցը, ինստիտուտի բոլոր ամբիոնները, կաբինետները, լաբորատորիաները և մարզադահլիճները հագեցվեցին նոր, ժամանակակից սարքավորումներով և մարզագույքով, բացվեց համակարգչային կենտրոնը, հրաձգարանը, նոր տեսք ստացան ինստիտուտի հանդիսասրահը և թանգարանը և այլն: Ինստիտուտի ճեմասրահում բացվեցին հին ու նոր ժամանակների օլիմպիական խաղերի չեմպիոնների արձանները, նոր որակ ստացավ Հայաստանի ազգային օլիմպիական ակադեմիայի գործունեությունը:

Հայրենիքն ըստ արժանվույն է գնահատել պրոֆեսոր Վ.Առաքե-

լյանի ծառայությունները: Նա պարգևատրվել է ՀՀ նախագահի շնորհակալագրով, «Մովսես Խորենացի» մեդալով, արժանացել է Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչի կոչման:

ԲՈՐԻՍ ՍԱՂՅԱՆ

1995 թ.-ից ամբիոնի վարիչի պարտականությունները դրվել են ինստիտուտի ռեկտոր Ռ.Գալստյանի վրա:

1998 թ. մինչ օրս ամբիոնը ղեկավարում է մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի ֆիզկուլտուրայի և սպորտի վաստակավոր աշխատող Բ.Զ.Սաղյանը:

Տարբեր տարիներ ըմբշամարտի ամբիոնում աշխատել են ԽՍՀՄ չեմպիոններ, սպորտի վաստակավոր վարպետներ, վաստակավոր մարզիչներ և վաստակավոր գործիչներ, վաստակավոր աշխատողներ Ա.Նազարյանը, Ա.Կարապետյանը, Կ.Աթոյանը, Հ.Գասպարյանը, Շ.Ջանյանը, Ն.Մուշեղյանը, Վ.Առաքելյանը, Ս.Ղազարյանը, Ա.Եղիազարյանը, Բ.Հասրաթյանը, Պ.Մալյանը, Է.Կարապետյանը, Բ.Սաղյանը, Հ.Գալստյանը:

Ամբիոնն իր գործունեության ընթացքում հրատարակել է 6 մենագրություն, 6 ուսումնական ձեռնարկ, 26 մեթոդական ցուցում, 170 հոդված և թեզիս: Ամբիոնում պատրաստվել են 4 մանկավարժական գիտությունների դոկտոր, 20 գիտության թեկնածու: Ամբիոնի աշխատողներից երկուսը ֆիզկուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչի, յոթը ֆիզկուլտուրայի և սպորտի վաստակավոր աշխատողի, չորսը ԽՍՀՄ վաստակավոր մարզիչի և ՀՀ ավելի քան 30-ը ՀՀ վաստակավոր մարզիչի կոչում:

Ամբիոնի շրջանավարտների թվում են օլիմպիական խաղերի արծաթե մեդալակիր Ա.Մկրտչյանը, աշխարհի չեմպիոններ՝ Ն.Մուշեղյանը, Գ.Հովհաննիսյանը, Բ.Փաշայանը, Ա.Գևորգյան, Վ.Գալստյանը, Եվրոպայի չեմպիոններ՝ Ռ.Ներսիսյանը, Գ.Բաղդասարյանը, Ա.Սանոյանը, Գ.Մեջլումյանը, Ա.Սահակյանը, Կ.Մնացականյանը, Մ.Բերբերյանը:

Այսօր ամբիոնում շարունակում են աշխատել և ստեղծագործել

մանկավարժական գիտությունների դոկտորներ Վ.Առաքելյանը, Բ.Սաղյանը, մանկավարժական գիտությունների թեկնածուներ Հ.Գալստյանը և Դ.Խիթարյանը, դոցենտներ Է.Կարապետյանը, Վ.Գևորգյանը, ասիստենտներ Ա.Անդիկյանը, Վ.Թովմասյանը, Ա.Մարտիրոսյանը, Կ.Կիրակոսյանը, Խ.Հարությունյանը, դասախոսներ Ի. Բաղդասարյանը, լաբորանտներ Է. Միքայելյանը և Կ.Նալբանդյանը, որոնք իրենց ամենօրյա աշխատանքով նպաստում են ամբիոնի ուսումնադաստիարակչական, գիտահետազոտական և մարզական աշխատանքների բարելավմանը:

ԱԹԼԵՏԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի աթլետիկայի ամբիոնը հիմնադրվեց ինստիտուտի ստեղծման հետ մեկտեղ: Աթլետիկայի ամբիոնի վարիչ նշանակվեց ԽՍՀՄ-ում արդեն ճանաչման արժանացած, ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ, սպորտային տեսության հիմնադիրներից մեկը՝ Արամ Ավետիսի Տեր-Հովհաննիսյանը: Այդ մեծ մանկավարժի ջանքերի շնորհիվ ամբիոնը շուտով դարձավ ոչ միայն մասնագետ կադրերի պատրաստման կենտրոն, այլ նաև հանրապետությունում աթլետիկա մարզաձևից բարձրակարգ մարզիկների պատրաստման, գիտամեթոդական և քարոզչական աշխատանքների կազմակերպման կենտրոն: Եվ պատահական չէր, որ ինքը՝ Արամ Տեր-Հովհաննիսյանը, ԽՍՀՄ-ում առաջիններից մեկը պաշտպանեց թեկնածուական թեզ աթլետիկայից: Նրան հետևեցին մի խումբ շնորհալի շրջանավարտներ, որոնք կազմեցին ամբիոնի դասախոսների հիմնական կորիզը և շարունակեցին Արամ Տեր-Հովհաննիսյանի սկսած գործը:

Շատ շուտով ինստիտուտի առաջին շրջանավարտ Հրաչ Գաբրիելի Թովալյանը ամբիոնում ստացած մասնագիտական խորը գիտելիքների շնորհիվ ընդունվեց Մոսկվայի կենտրոնական ինստիտուտի ասպիրանտուրա և 1953 թվականին հաջողությամբ պաշտպանեց թեկնածուական թեզ: Չնայած Մոսկվայի ինստիտուտի ղեկավարության հորդորներին՝ մնալ իրենց ինստիտուտում աշխատելու, գերա-

դասեց վերադառնալ հարազատ ինստիտուտ: Նա 1954 թվականից ղեկավարեց աթլետիկայի ամբիոնը, սակայն շուտով ինստիտուտի ղեկավարությունը ավելի նպատակահարմար գտավ այդ բանիմաց, եռանդուն երիտասարդին օգտագործել ավելի պատասխանատու աշխատանքում՝ նշանակելով ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր: Այդ պաշտոնում Հ.Թոփալյանը աշխատեց մինչև 1978 թվականը, որից հետո դարձավ ինստիտուտի ռեկտոր և աշխատեց մինչ 1994 թվականը: Հ.Թոփալյանը կյանքից հեռացավ 1996 թվականին 70 տարեկան հասակում:

1948 թվականին Արամ Տեր-Հովհաննիսյանին հրավիրեցին Լվով՝ նոր բացված ֆիզկուլտուրայի ինստիտուտ, որպես պրոռեկտոր: Աթլետիկայի ամբիոնի վարիչ նշանակվեց Հայրենական մեծ պատերազմի բովով անցած, խիզախ օդաչու, Լենինգրադի Լեսգաֆտի անվան ինստիտուտի շրջանավարտ Ալեքսանդր Սերգեյի Միրզոյանը: Այդ, հիրավի, մեծ մտավորականը ամեն ինչ արեց, որպեսզի շարունակի իր նախորդի եռանդուն աշխատանքը: Ա.Միրզոյանը այդ պաշտոնում աշխատեց մինչև 1954 թվականը՝ ուսանողներին հաղորդելով իր հարուստ փորձը և գիտելիքները: Այդ տարիներին զգալիորեն բարելավվեց ամբիոնի գիտամեթոդական, մարզական և մանկավարժական աշխատանքների վիճակը: Ամբիոնում աշխատում էին հայկական սպորտի այնպիսի ճանաչված մասնագետներ, ինչպիսիք էին Մարտին Միքայելի Վեքիլյանը, Ամասիա Մարգարի Մինասյանը, Վարուժան Արշակի Մինասյանը, Անուշավան Մարտինի Ստեփանյանը, Գեորգի Արիստակեսի Պետրոսյանը, Հովհաննես Գալուստի Առաքելյանը, Ռաֆայել Յոլակի Հակոբյանը, որոնց նվիրված աշխատանքի շնորհիվ ամբիոնը հանրապետությունում դարձավ աթլետիկա մարզաձևի գիտամեթոդական կենտրոն՝ խորը գիտելիքներ հաղորդելով ուսանողներին: Սկսած 1956 թվականից՝ ամբիոնի վարիչի պարտականությունները կատարեց հայկական աթլետիկայի վետերաններից մեկը՝ Անուշավան Ստեփանյանը, որը ձգտում էր ամբիոնի երիտասարդ դասախոսներին հնարավորին չափ օժանդակել մասնագիտական գիտելիքները խորացնելու և հնարավորության դեպքում գիտական թեզեր պաշտպանելու գործում: 1966 թվականին ամբիոնի վարիչ նշանակվեց Ռաֆայել Յոլակի Հակոբյանը, որն այդ պաշտոնում աշխատեց մինչև 1977 թվականը: Այդ տարիներին ամբիոնը համալրվեց մի քանի երիտասարդ դասախոսներով: Ռ.Հակոբյանը 1978 թվակա-

նին ընտրվեց մանկավարժական ֆակուլտետի դեկան, իսկ ամբիոնի վարիչ նշանակվեց Սերգեյ Գարեգինի Միքայելյանը, որն այդ պաշտոնում աշխատեց մինչև 2000 թվականը: Այդ տարիներին ևս ամբիոնը իրեն դրսևորեց դրական կողմերով: Ստեղծվել էր կուռ մանկավարժական կոլեկտիվ, որտեղ այնպիսի փորձված մանկավարժների կողքին, ինչպիսիք էին Մ.Վեքիլյանը, Ա.Մինասյանը, Ս.Թորոյանը, Ս.Միքայելյանը, Ռ.Հակոբյանը, Վ.Մինասյանը, աշխատում էին երիտասարդները՝ Ֆ.Ղազարյանը, Ա.Սարգսյանը, Վ.Մամաջանյանը, Կ.Բաբայանը, Մ.Հայրապետյանը, Մ.Կարապետյանը, Վ.Համբարձումյանը, Օ.Խաչատրյանը և ուրիշներ:

ՎԱԼԵՐԻ ՄԱՄԱՋԱՆՅԱՆ

Սկսած 2000 թվականից մինչև օրս՝ ամբիոնի վարիչ է աշխատում հայկական աթլետիկայի ճանաչված մասնագետներից մեկը՝ ԽՍՀՄ սպորտի վարպետ, մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Վալերի Սիերի Մամաջանյանը, որը նույնպես ջանք չի խնայում ամբիոնի աշխատանքները բարելավելու ուղղությամբ:

Անհրաժեշտ է նշել, որ ամբիոնի կազմակերպման հենց առաջին տարվանից, բացի ուսումնամարզական աշխատանքներից, ամբիոնը ծավալուն աշխատանքներ կազմակերպեց մարզաձևի գիտամեթոդական հարցերը լուսաբանելու ուղղությամբ: Եվ բոլորովին էլ պատահական չէր, որ ԽՍՀՄ-ում առաջին անգամ 1948 թ. ամբիոնի վարիչ Ա.Տեր-Հովհաննիսյանը հանդես եկավ համամիութենական գիտաժողովում. «Շուրջտարյա մարզումների առավելությունը աթլետիկայում» թեմայով, որն արժանացավ հավանության և որոշվեց շուրջտարյա մարզումներ անցկացնել ԽՍՀՄ բոլոր հանրապետություններում: Եվ արդեն 1949 թվականի փետրվար ամսին Երևանում առաջին անգամ անցկացվեցին ձմեռային մրցումներ, որտեղ գրանցվեցին ձմեռային առաջին ռեկորդները: Այդ անդրանիկ մրցումների հաղթողներ և ռեկորդակիրներ դարձան ինստիտուտի աշխատողներ Հրաչ Թոփալյանը, Մարգարիտա Կարապետյանը, Նինել Հովհաննիսյանը և ուրիշներ:

Ամբիոնը իր գոյության 60 տարիների ընթացքում բուռն գործունեություն է ծավալել ուսանողության հետ տարվող գիտական և մարզական աշխատանքների ասպարեզում: Բազմաթիվ մասնագետներ գիտական զեկուցումներով հանդես են եկել ինչպես հանրապետական, այնպես էլ համամիութենական, իսկ անկախությունից հետո՝ նաև միջազգային գիտաժողովներում:

Ամբիոնի հաջողությունները մեծ են նաև մարզական ասպարեզում: Ամբիոնի ուսանողներից առաջին խոշոր հաղթանակը ձեռք բերեց գնդահրոդող Վարդան Հովսեփյանը: Նա 1954 թվականին Բուդապեշտում կայացած համաշխարհային ուսանողական խաղերից տուն վերադարձավ հաղթողի ոսկե մեդալով: Այնուհետև ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետը ավելի քան 5 տարի իրեն հավասարը չունեցավ Եվրոպայում՝ սահմանելով մեկ տասնյակից ավել ռեկորդներ, 5 անգամ դառնալով ԽՍՀՄ-ի և Եվրոպայի չեմպիոն:

Հիշատակման են արժանի ամբիոնի ուսանողներ Գենադի Բարսեղյանը, Հովհաննես Մկրտչյանը, Գրիգորի Պետրոսյանը, Պարգև Գրիգորյանը, Արմեն Մարտիրոսյանը և ուրիշներ:

Սակայն ամբիոնի ուսանող-մարզիկներից ոչ ոք չի գերազանցել Ֆաինա Մելնիկի մարզական հաջողությունները: Այդ համառ և գեղեցկատես աղջիկը ոչ միայն սկավառականետումից և գնդի հրումից սահմանեց աշխարհի և ԽՍՀՄ բազմաթիվ ռեկորդներ, այլ նաև 1972 և 1976 թվականներին դարձավ օլիմպիական խաղերի չեմպիոն և մրցանակակիր:

Զգալի է ամբիոնի մասնագետների ներդրումը աթլետիկայի զարգացման գործում: Նրանցից 4-ը դարձել են ԽՍՀՄ վաստակավոր մարզիչներ, 14-ը՝ այլ հանրապետությունների վաստակավոր մարզիչներ, իսկ 34-ը ստացել են հանրապետության վաստակավոր մարզիչի կոչում:

Ամբիոնի դասախոսները, որպես մրցավար սպասարկել են 1980 թ. Մոսկվայի օլիմպիական խաղերը: Նրանցից Սիմոն Թորոյանը, Մար-

գարիտա Կարապետյանը և Ռուբեն Գաբրիելյանը արժանացել են «Պատվավոր մրցավար» կոչմանը:

Մեր ժողովրդի համար փորձությունների ծանր ժամանակներում ամբիոնի շատ մասնագետներ ընդգրկվեցին Արցախի ազատագրման կամավորական ջոկատներում: Նրանցից ոմանք տուն չվերադարձան: Հերոսի մահով ընկավ խիզախ հրամանատար, հանրապետության բազմակի չեմպիոն Գառնիկ Ղուկասյանը, հատուկ հանձնարարություն կատարելիս զոհվեց հանրապետության չեմպիոն Կարեն Գաբրիելյանը:

ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՐԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Ինստիտուտի ստեղծման առաջին իսկ օրերից գործում է մարմնամարզության ամբիոնը: Ամբիոնի անդրանիկ վարիչն է եղել հանրահայտ մարմնամարզիկ, ԽՍՀՄ վաստակավոր մարզիչ Սիմոն Աբրահամի Ղարագյոզյանը, որը մեծ ներդրում ունի ոչ միայն Հայաստանի, այլ նաև համաշխարհային մարմնամարզության զարգացման գործում:

1946թ. Ս.Ա.Ղարագյոզյանին փոխարինեց Գրիգորի Բորիսի Սաֆարովը, որն ավարտել էր Լենինգրադի Պ.Ֆ.Լեսգաֆտի անվան ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտը: Այդ տարիներին ամբիոնը համալրվեց բանակից զորացրված երիտասարդ մասնագետներով՝ Փ.Ե.Բոյախչյան, Մ.Մ.Գուտով և լենինգրադցիներ Ա.Ե.Կսանտուպոլո և Մ.Կաշիրինա: Նրանք մեծ ավանդ ներդրեցին ամբիոնի կայացման գործում:

1947թ ամբիոնի վարիչ նշանակվեց ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ Գեորգի Վասիլի Ալիխանյանը: 16 տարի շարունակ, մինչև 1963թ., նա անփոփոխ ղեկավարում էր ամբիոնը: Իր կազմակերպչական ընդունակություններով և աշխատասիրությամբ Գ.Վ.Ալիխանյանը մեծ ներդրում է ունեցել ոչ միայն ամբիոնի, այլ նաև Հայաստանի մարմնամարզության զարգացման գործում, որի համար նրան շնորհվել է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործչի և Հայաստանի վաստակավոր մարզչի կոչում:

1948 թվականի ինստիտուտի առաջին շրջանավարտներից ամբիոն աշխատանքի ընդունվեցին երիտասարդ մասնագետներ Մ.Բաբայանը, Լ.Քոչարյանը և ուրիշներ, այնուհետև ամբիոնը համալրվեց նոր շրջանավարտներով՝ Կ.Բաբայան, Բ.Ամիրյան, Հ.Ղուկասյան, Լ.Զախարյան, Գ.Մարտիրոսյան, Վ.Հակոբյան և ուրիշներ: 1947-1963 թթ. ժամանակաշրջանում մարմնամարզության ամբիոնը կազմավորվեց և հաստատվեց որպես գիտամեթոդական, կազմակերպչական խորհրդատվական կենտրոն Հայաստանում: Այստեղ են ստացել իրենց մարզական կյանքի ուղեգրերը աշխարհին հայտնի շատ մարզիչներ, մարզիկներ և մանկավարժներ:

ՌՈԲԵՐՏ ԱԶԱՐՅԱՆ

1963-1966 թթ. ամբիոնի վարիչի պարտականությունը կատարեց Մ.Ա. Բաբայանը, այնուհետև՝ Գ.Խ.Մարտիրոսյանը: 1967-1977 թթ. ամբիոնը ղեկավարում էր Կ.Գ.Բաբայանը, 1977-1982 թթ.՝Հ.Վ.Ղուկասյանը, 1982-1989թթ. և 1994-1996թթ.՝ Ռ.Մ.Խիզանցյանը, 1989-1994 թթ. միջև ընկած հատվածում՝ Ս.Ս.Նահապետյանը: 1996-ից ամբիոնը ղեկավարում է մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, սպորտի ԽՍՀՄ վարպետ Ռ.Ն.Ազարյանը:

Ամբիոնի գործունեության 60 տարիների ընթացքում այստեղ աշխատել են 47 դասախոսներ: Իրենց ուրույն լուման են ներդրել նվաստակցողներ Ցողիկ Հանեսօղլյանը, Կիմա Ներսիսյանը և ուրիշներ: Այսօր էլ ամբիոնը համալրված է լավագույն երիտասարդ մասնագետներով՝ ԽՍՀՄ չեմպիոն, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ.Կ.Հարությունյան, սպորտի վարպետ, ԽՍՀՄ չեմպիոն Ն.Վ.Սելումյան, միջազգային կարգի սպորտի վարպետ Մ.Ժ.Մարգարյան, սպորտի վարպետ Ք.Գ.Քեշիշյան և ուրիշներ:

Ամբիոնի պատմության ոսկե էջերն են գրել նրա շրջանավարտները, որոնց առաջին շարքում են օլիմպիական չեմպիոններ Հրանտ Շահինյանը, Ալբերտ Ազարյանը, Էդուարդ Միքայելյանը, աշխարհի չեմպիոն Արթուր Հակոբյանը: Համաշխարհային ճանաչում են ստացել Ալբերտ Ազնավուրյանը, Վաչագան Հակոբյանը, Ռուբեն Միքայելյա-

նը, Ազնիվ Գրիգորյանը, մարզիչներ Սիմոն Ղարագյոզյանը, Հարությունն Գարգալոյանը, Հենրիկ Վանեցյանը, Վարդգես Առաքելյանը և բազմաթիվ վաստակավոր մարզիչներ և սպորտի վարպետներ:

Մեծ ներդրում են ունեցել մարմնամարզության զարգացման գործում անվանի մանկավարժներ Հ.Վ.Ղուկասյանը, Կ.Գ.Բաբայանը, Մ.Ա.Բաբայանը և ուրիշներ:

Ամբիոնը պատրաստել է ավելի քան 30 միջազգային կարգի սպորտի վարպետ, 235 սպորտի վարպետ, 67 վաստակավոր մարզիչ, 28 ԽՍՀՄ չեմպիոն և գավաթակիր:

Ամբիոնը մեծ ավանդ ունի հանրապետության մարմնամարզության մասսայականացման բնագավառում: Բազմաթիվ խոշոր մարմնամարզական զանգվածային ելույթներ են պատրաստվել և ցուցադրվել Հանրապետական հրապարակում և այլուր, որին մասնակցել են հազարավոր պատանիներ և աղջիկներ: Տարբեր ժամանակաշրջաններում այդ ելույթների գեղարվեստական ղեկավարներ են հանդիսացել Գ.Սաֆարովը, Կ.Բաբայանը, Հ.Ղուկասյանը, Ռ.Մարտիրոսյանը և ուրիշներ:

Ամբիոնը հանդիսանում է հանրապետության մարմնամարզական, գիտական գործունեության կենտրոն, ուր մշտապես անցկացվում են գիտաժողովներ, սեմինարներ, խորհրդակցություններ և այլն:

Ամբիոնի աշխատակիցները պատրաստել են 400 գիտական աշխատանքներ, այդ թվում՝ ուսումնական ձեռնարկներ, մենագրություններ, գրքեր, ծրագրեր:

Վերջին տարիներին մեծ ուշադրություն է հատկացվում մայրենի լեզվով մասնագիտական գրականության հրատարակմանը: Լույս են ընծայվել «Մարդիկ, թվեր, փաստեր» (1997), Ռ.Մ. Խիզանցյանի «Մարմնամարզական ցատկեր» (1993), Ն.Վ.Սելումյանի «Զուգային և խմբային ակրոբատիկա, մարմնամարզական բուրգեր» (1998) գրքերը:

Տպագրության է ներկայացված «Մարմնամարզություն» դասագիրքը:

Ամբիոնը պարբերաբար հրատարակում է «Մարմնամարզություն» ամսագիրը:

2003-2004 ուսումնական տարուց ամբիոնը զբաղվում է նաև «Սպորտային պարեր» մասնագիտությամբ:

ԼՈԳԻ ԱՄԲԻՈՆ

Լողի ամբիոնը հիմնադրվել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի հիմնադրման հետ միաժամանակ՝ 1945 թվականին:

Ամբիոնի առաջին վարիչ է նշանակվել Ռուսաստանից հրավիրված մասնագետ, սպորտի վարպետ Ս.Գ.Սավելևը:

1950-1954 թթ. և 1956-ից մինչև 1964թ. ամբիոնի վարիչն էր հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ, սպորտի վարպետ, մարաթոնյան լողի ԽՍՀՄ չեմպիոն Ա.Վ.Սոկրյուկովը: 1954-56 թթ. ամբիոնը ղեկավարել է Ս.Ա.Մալոյանը:

1964-1994 թթ. ամբիոնը ղեկավարել է ֆիզիկական կուլտուրայի վաստակավոր գործիչ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Հ.Կոստանյանը:

Նրանցից յուրաքանչյուրն իր ներդրումն է ունեցել ամբիոնի աշխատանքների բարելավման, բարձր որակավորման մասնագետների և մարզիկների, ամբիոնի նոր սերնդի դասախոսների պատրաստման և դաստիարակման գործում:

1994 թ. մինչ օրս ամբիոնը ղեկավարում է ՀՀ վաստակավոր մարզիչ, մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Ի.Գ.Սաֆարյանը:

Ամբիոնի առաջին դասախոսներից են սպորտի վարպետ Ե.Լ.Գալինսկին, վաստակավոր մարզիչ Վ.Ա.Պողոսյանը: Ավելի ուշ ամբիոնում դասավանդել են ՀՀ վաստակավոր մարզիչ Կ.Ա.Զարգարյանը, դոցենտ Վ.Բ.Մկրտչյանը, Գ.Ա.Պառավյանը, Բելոռուսի վաստակավոր մարզիչ Տ.Պ.Մագոլևան, ՀՀ վաստակավոր մարզիչ Վ.Պ.Օսյանը, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Լ.Վ.Մելինան

և ուրիշները: Այժմ ամբիոնում դասավանդում են պրոֆեսոր Ի.Գ.Սաֆարյանը (ամբիոնի վարիչ), Եվրոպայի և ԽՍՀՄ առաջնությունների մրցանակակիր, սպորտի վարպետ, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ.Ա.Ջիլավյանը, մանկավարժական գիտությունների թեկնածուներ, դոցենտներ Ա.Լ.Հակոբյանը և Վ.Ս.Ավթանդիլյանը, դոցենտ Հ.Հ.Դավթյանը, դասախոսներ Ա.Ս.Առաքելյանը և մարզիչ Ա.Վահանյանը:

Իր գործունեության տարիների ընթացքում լողի ամբիոնը պատրաստել է 850 մասնագետներ՝ ջրային բոլոր մարզաձևերից, ուսուցանել է լող և լողուսուցման հմտություններ ինստիտուտի 12000-ից ավելի շրջանավարտների:



ԻԳՈՐ ՍԱՖԱՐՅԱՆ

Լողի ամբիոնում ձևավորվել են այնպիսի հայտնի մարզիկներ, իսկ հետագայում բարձր որակավորման մասնագետներ, ինչպիսիք էին ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ, ժամանակակից հնգամարտի Աշխարհի առաջնության քառակի չեմպիոն, օլիմպիական խաղերի չեմպիոն Ի.Ա.Նովիկովը, օլիմպիական խաղերի ջրագնդակի կրկնակի չեմպիոն, ԽՍՀՄ վաստակավոր մարզիչ Ա.Ս.Կաբանովը, Եվրոպայի չեմպիոն, օլիմպիական խաղերի մրցանակակիր, ԽՍՀՄ բազմակի չեմպիոն, սպորտի վաստակավոր վարպետ, ջրացատկորդ Դ.Գ.Համբարձումյանը, առագաստային սպորտի աշխարհի չեմպիոններ, սպորտի վաստակավոր վարպետներ Վ.Կլիվերը և Վ. Լեոնտևը, ԽՍՀՄ լողի էքս-ռեկորդակիր, ՀՀ վաստակավոր մարզիչ Վ.Ս.Փիլոյանը, Եվրոպայի առաջնությունների մրցանակակիրներ սպորտի վարպետ Հ.Ա.Ջիլավյանը և Ա.Գ.Կոբիլինը, Եվրոպայի երիտասարդական առաջնության չեմպիոններ, ջրագնդորդներ Ա.Փիլոյանը և Ա.Կոլեսնիկովը, ստորջրյա լողի աշխարհի չեմպիոն և ռեկորդակիր, սպորտի վարպետ Շ.Կարապետյանը:

Ամբիոնի շրջանավարտների շարքերում կան ջրային մարզաձևերի վաստակաշատ մարզիչներ, որոնք պատրաստել են բազմաթիվ բարձրակարգ մարզիկների. ՀՀ վաստակավոր մարզիչներ Ա.Վ.Սոկ-

ոյուկովը, Վ.Ա.Պողոսյանը, Ա.Հ.Կոստանյանը, Ա.Ն.Գրաբովսկին, Դ.Գ.Սարգսյանը, Մ.Ա.Գաբրիելյանը, Կ.Ա.Զարգարյանը, Ի.Գ.Սաֆարյանը, Ռուսաստանի ջրագնդակի հավաքականի ավագ մարզիչ Ա.Ս.Կաբանովը:

Լողի ամբիոնում պաշտպանվել են մեկ դոկտորական ատենախոսություն՝ Ա.Հ.Կոստանյան, 6 թեկնածուական ատենախոսություններ (Ի.Գ.Սաֆարյան, Վ.Ա.Պողոսյան, Լ.Վ.Սելինա, Վ.Ս.Ավթանդիլյան, Ա.Լ.Հակոբյան, Հ.Ա.Ջիլավյան):

Ամբիոնում հրատարակվել են «Լող» (մասնագիտություն) և «Լողի դասավանդման մեթոդիկա» առարկաների ամբողջական կուրսը հայերենով՝ Ա.Հ.Կոստանյանի և Ի.Գ.Սաֆարյանի հեղինակությամբ:

Հրատարակվել են 100-ից ավելի ուսումնամեթոդական ձեռնարկներ՝ «Լող» առարկայի տեսական և գործնական բոլոր հիմնական բաժինների ընդգրկմամբ:

1988թ. հրատարակվել է Ա.Հ.Կոստանյանի «Ֆիզիկական դաստիարակության և սպորտի հոգեբանական ուրվագծերը» վերնագրով մենագրությունը:

Ամբիոնի գործունեության բոլոր տարիներին դասախոսական կազմի, ասպիրանտների և հայցորդների կողմից հրատարակվել են 400-ից ավելի թեզիսներ և 100-ից ավելի գիտական հոդվածներ: Դասախոսները մշտապես հանդես են գալիս գիտական զեկուցումներով, որոնք վերաբերում են ջրային մարզաձևերի տեսության և պրակտիկայի արդի հարցերին:

Ամբիոնի պրոֆեսոր Ա.Հ.Կոստանյանը 20 տարի անընդմեջ ղեկավարել է ԽՍՀՄ ջրագնդակի հավաքական թիմի համալիր գիտական ապահովման խումբը և այդ տարիներին հավաքականը նվաճել է օլիմպիական խաղերի, աշխարհի և Եվրոպայի չեմպիոնների և մրցանակակիրների կոչումները:

Պրոֆեսոր Ի.Գ.Սաֆարյանը 5 տարի աշխատել է Հարավսլավիայի ուժեղագույն ակումբներում, որպես ավագ մարզիչ և մեկ տարի հանդիսացել է այդ երկրի լողի հավաքական թիմի ավագ մարզիչը:

Նա Հարավսլավիայում հրատարակել է «Լողորդների սպորտային մարզման մեթոդիկա» վերնագրով մենագրությունը՝ սերբ-խորվատերեն լեզվով:

Իր գործունեության ընթացքում լողի ամբիոնը պատրաստել է 124 սպորտի վարպետ ջրային տարբեր մարզաձևերից. լողից՝ 36 մարզիկ, ջրագնդակից՝ 3, ջրացատկից՝ 14, ստորջրյա լողից՝ 10, բազմամարտից՝ 15 և առագաստասպորտից ու թիավարությունից՝ 46 մարզիկ:

Ամբիոնի շրջանավարտներն ու ուսանողները ակտիվ մասնակցություն ունեցան Ղարաբաղի ազատագրական պայքարում, և նրանցից չորսը՝ Կ.Դելեյանը, Ա.Մանուկյանը, Ա.Ցականյանը և Գ.Հակոբյանը զոհվել են հանուն հայրենիքի:

Ամբիոնի աշխատակիցները ակտիվ մասնակցություն ունեն հանրապետության ջրային մարզաձևերի ֆեդերացիաների աշխատանքներում:

Պրոֆեսոր Ի.Սաֆարյանը հանդիսանում է ՀՀ լողի ֆեդերացիայի նախագահ, դասախոս Հ.Ջիլավյանը՝ լողի ֆեդերացիայի նախագահության անդամ, դոցենտ Հ.Հ. Դավթյանը՝ ՀՀ ջրագնդակի ֆեդերացիայի մարզչական խորհրդի նախագահ:

Ամբիոնն իր գործունեության տարիներին պատրաստել է բազմաթիվ բարձրակարգ մասնագետներ: Հայաստանի ջրային մարզաձևերի հավաքական թիմերի կորիզը տարիներ շարունակ կազմել են ամբիոնի ուսանող-մասնագետները:

Լողի ամբիոնը մշտապես օգտակար գործնական օգնություն է ցուցաբերում ՀՀ ջրային մարզաձևերի մարզիչներին սպորտի տեսության և պրակտիկայի կարևորագույն հարցերում և բարձրակարգ մարզիկների պատրաստման գործում:

ԾԱՆՐԱՄԱՐՏԻ, ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻ ԵՎ ՍՈՒՍԵՐԱՄԱՐՏԻ ԱՄԲԻՈՆ

Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի ստեղծման օրվանից ծանրամարտի, բռնցքամարտի և սուսերամարտի ամբիոնը տարիների ընթացքում կրել է որոշ կառուցվածքային փոփոխություններ:

1945թ. մինչև 1951թ. ինստիտուտի մյուս ամբիոնների հետ միասին գործել է սուսերամարտի և ձեռնամարտի ամբիոնը, ինչպես նաև ըմբշամարտի, բռնցքամարտի և ծանրամարտի ամբիոնը: 1951թ. մինչև 1954թ. վերոհիշյալ ամբիոններից կազմավորվեց մեկ միացյալ՝ ծանրամարտի, բռնցքամարտի, ըմբշամարտի և սուսերամարտի ամբիոն: Այնուհետև մինչև 1985 թվականը վերը թվարկված մարզաձևերը ևս 3-4 անգամ փոփոխակի տարբերակներով վերամիավորվել են տարբեր ամբիոններում: Այս ամբիոնները ղեկավարել են Կ.Աթոյանը, Հ.Գասպարյանը, Ս.Հարությունյանը, Գ.Ազիզյանը և Վ.Աճեմյանը:

1985թ. ստեղծվում է նոր ամբիոն՝ ծանրամարտի, բռնցքամարտի և սուսերամարտի, որի վարիչ է նշանակվում Գ.Ն.Ազիզյանը, որն այդ պարտականությունները կատարում է մինչև 1989 թ., այնուհետև՝ 1996 թ. մինչև օրս:

1989 թ. ամբիոնի վարիչի պարտականությունները կատարել է Ս. Մ. Հարությունյանը, որը մինչ այդ աշխատում էր որպես մարզչական ֆակուլտետի դեկան, իսկ այնուհետև՝ ինստիտուտի պրոռեկտոր գիտական հարցերով:

Ամբիոնի ստեղծման առաջին իսկ օրերից կազմակերպչական ակտիվ աշխատանքներ ծավալեց Հայաստանում սուսերամարտ մարզաձևի հիմնադիր, Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ, պատվավոր պրոֆեսոր Հ.Գ.Գասպարյանը: Ծանրամարտ մասնագիտության ձևավորման, դասավանդման և աշխատանքների կազմակերպման գործում իրենց ներդրումն ունեցան աշխարհի և ԽՍՀՄ-ի բազմակի չեմպիոն, սպորտի վաստակավոր վարպետ Սերգո Համբարձումյանը, հանրապետության վաստակավոր մարզիչ, պրոֆեսոր՝ Ս.Մ.Հարությունյանը, ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակա-

վոր աշխատող, վաստակավոր մարզիչ, պրոֆեսոր Գ.Ն.Ազիզյանը, ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր աշխատող, դոցենտ Հ. Մ. Վանեսյանը, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Մ.Ս.Աբրահամյանը, Ա.Յայլոյանը և Ա.Առաքելյանը: Բռնցքամարտ մասնագիտության դասավանդման և որակյալ կադրերի պատրաստման ուղղությամբ իրենց անբասիր աշխատանքներով մեծ ծառայություն են մատուցել ՀՀ վաստակավոր մարզիչներ, դոցենտներ Շ. Կ. Երքեցյանը, Կ. Խ. Ենգոյանը, Կ. Գ. Ջաներյանը, ինչպես նաև ԽՍՀՄ վաստակավոր մարզիչ, հանրահայտ մասնագետ Ա. Լ. Անտոնյանը: Վերը նշված վաստակաշատ աշխատողների կողքին իրենց արդյունավետ գործունեությունն են ծավալել նաև երիտասարդ մասնագետներ Ա.Ա.Մադոյանը, Գ.Մ.Սեդրակյանը, Ա.Է.Հարությունյանը, Ռ.Թ.Կարապետյանը և Հ.Շ.Թամիրյանը:

Ամբիոնը անցած 60 տարիների ընթացքում բեղմնավոր աշխատանք է կատարել ուսումնամանկավարժական բնագավառում և անընդհատ կատարելագործելով իր աշխատանքային գործունեությունը պատրաստել է հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի համար բարձրորակ 516 մասնագետներ ծանրամարտից, 435՝ բռնցքամարտից, 292՝ սուսերամարտից, որոնք բարձր են պահել ինստիտուտի և հանրապետության մարզական պատիվը ամենահեղինակավոր մրցումներում:

Նման մարզիկներից կարելի է հիշատակել աշխարհի և ԽՍՀՄ ռեկորդակիր, ԽՍՀՄ բազմակի չեմպիոն, սպորտի վաստակավոր վարպետ, ծանրորդ Սերգո Համբարձումյանին, օլիմպիական խաղերի, աշխարհի, Եվրոպայի չեմպիոն և ռեկորդակիր, սպորտի վաստակավոր վարպետ Հոգսեն Միրզոյանին, օլիմպիական խաղերի արծաթե մեդալակիր, աշխարհի և Եվրոպայի կրկնակի չեմպիոն և ռեկորդակիր, սպորտի վաստակավոր վարպետ Յուրիկ Սարգսյանին, ԵՎրոպայի կրկնակի չեմպիոն, աշխարհի ռեկորդակիր, սպորտի վաստակավոր վարպետ Աշոտ Դանիելյանին, օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր, սպորտի վաստակավոր վարպետ Արսեն Մելիքյանին:

Ծանրորդներից բացի, համաշխարհային մեծ փառքի արժանացան ինստիտուտի այնպիսի շրջանավարտ-բռնցքամարտիկներ, ինչպիսիք են օլիմպիական խաղերի, Եվրոպայի բազմակի չեմպիոն,

սպորտի վաստակավոր վարպետ Վլադիմիր Ենգիբարյանը, աշխարհի չեմպիոն և գավաթակիր, Եվրոպայի եռակի չեմպիոն, սպորտի վաստակավոր վարպետ Իսրայել Հակոբկոխյանը, աշխարհի չեմպիոն և գավաթակիր, Եվրոպայի չեմպիոն, սպորտի վաստակավոր վարպետ Նշան Մունչյանը, Եվրոպայի չեմպիոն Ալբերտ Նիկոլյանը:

Օլիմպիական խաղերի արծաթե և բրոնզե մեդալ է նվաճել աշխարհի չեմպիոն սուպերամարտիկ Աշոտ Կարագյանը, իսկ Վալերի Չերնիկովը արժանացել է օլիմպիական խաղերի բրոնզե մեդալի և աշխարհի չեմպիոնի կոչման:



ԳԱԼՈՒՍՏ ԱԶԻԶՅԱՆ

Անցած 60 տարիների ընթացքում ամբիոնի դասախոսները սիստեմատիկաբար բարձրացրել են իրենց գիտական մակարդակը՝ կատարելով տարբեր հետազոտություններ, պաշտպանելով գիտական թեզեր, գրելով մասնագիտական բազմաթիվ գրքեր, ձեռնարկներ և արժանացել տարբեր գիտական աստիճանների և կոչումների:

Հ.Գ.Գասպարյանն արժանացել է ինստիտուտի վաստակավոր պրոֆեսորի, Ս.Մ.Հարությունյանը և Գ.Ն.Ազիզյանը՝ պրոֆեսորի, Շ.Կ.Երթևցյանը, Կ.Խ.Ենգոյանը, Կ.Գ.Ջաներյանը, Հ.Մ. Վանեսյանը, Վ.Ա.Աճեմյանը, Մ.Ս.Աբրահամյանը և Ա.Լ.Անտոնյանը՝ դոցենտի կոչման:

Ամբիոնի աշխատակիցները հետևողական գործունեություն են ծավալել գիտամեթոդական աշխատանքների կատարման ուղղությամբ: Հրատարակվել են նրանց հեղինակած 25 ուսումնամեթոդական ձեռնարկներ, 23 մեթոդական ցուցումներ, 440 թեզիսներ և այլն: Գ.Ազիզյանը և Հ.Վանեսյանը հրատարակել են երկու մենագրություն: Յուրաքանչյուր տարի ամբիոնի դասախոսները զեկուցումներով հանդես են եկել ինստիտուտի և հանրապետական գիտաժողովներում: Ամբիոնի դասախոսները մասնագիտական տարբեր հարցերի շուրջ բազմիցս հոդվածներով հանդես են եկել հանրապետական թերթերում և ամսագրերում: Ամբիոնի ուսանողները, ընդգրկված լի-

նելով ուսանողական գիտական խմբակներում, պարբերաբար հանդես են եկել ինստիտուտի գիտաժողովներում, նրանցից շատերը արժանացել են խրախուսանքի և պատվոգրերի:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում բեղմնավոր աշխատանքներ կատարելու համար ամբիոնի հինգ շրջանավարտների՝ Վ.Ենգիբարյանին, Գ.Կարապետյանին, Հ.Գասպարյանին, Ռ.Եսայանին, Դ.Գաբրիելյանին շնորհվել է հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչի, իսկ Գ. Ազիզյանին, Հ.Վանեսյանին, Պ.Պողոսյանին, Ա.Ղոչիկյանին, Ֆ.Ալեքսանյանին, Լ.Հովհաննիսյանին, Ա.Գրիգորյանին՝ հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր աշխատողի պատվավոր կոչում:

Բարձրակարգ մարզիկներ պատրաստելու համար ԽՍՀՄ վաստակավոր մարզչի կոչման են արժանացել Ռ. Հարությունյանը, Ա.Վիլասյանը, Ֆ.Ալիևը (ծանրամարտ), Է.Ավագյանը (սուսերամարտ), Ռ.Մեհրաբյանը, Ռ.Ղազարյանը, Ա.Անտոնյանը, Է.Արիստակեսյանը (բռնցքամարտ), իսկ Հայաստանի Հանրապետության վաստակավոր մարզչի կոչմանն արժանացել են ամբիոնի շրջանավարտներից 82-ը (30-ը՝ ծանրամարտից, 18-ը՝ սուսերամարտից, 34-ը՝ բռնցքամարտից):

Ամբիոնի շրջանավարտներից 10-ին շնորհվել է սպորտի վաստակավոր վարպետի պատվավոր կոչում՝Ս. Համբարձումյան, Վ, Ենգիբարյան, Ա. Պապյան, Է. Արիստակեսյան, Ի. Հակոբկոխյան, Յու. Սարգսյան, Հ. Միրզոյան, Ն. Մունչյան, Ա. Մելիքյան, Ա. Դանիելյան, 29-ին՝ միջազգային կարգի սպորտի վարպետի, իսկ 30-ին՝ միջազգային կարգի մրցավարի կոչումներ:

Ամբիոնի դասախոսներ Ս. Հարությունյանը, Գ. Ազիզյանը, Հ.Վանեսյանը (ծանրամարտ), Կ. Ենգոյանը, Շ.Երթեցյանը, Ա. Անտոնյանը, Կ. Ջաներյանը (բռնցքամարտ), Հ. Գասպարյանը, Վ.Աճեմյանը (սուսերամարտ) տարբեր տարիներ աշխատել են հանրապետության հավաքական թիմերի մարզիչներ և ավագ մարզիչներ: Ամբիոնի շրջանավարտները լայն ճանաչում ունեն միջազգային մարզական ասպարեզում: Ս.Մ.Հարությունյանը աշխատել է Կուբայում (1966-68 թթ.), Կոլումբիայում (1971-73 թթ.), Վ.Կիզոդլյանը՝ Թաիլանդում, Ռ.Մեհրաբյանը՝ Հունաստանում (2000-2003 թթ.), Ա.Կարագյանը՝ Նորվեգիայում (1995-99 թթ.), Ա. Վիլասյանը՝

Ռուսաստանի Դաշնությունում (1993-2003 թթ.), Ս. Պետրոսյանը՝ Իրանում (2001թ.), Ա.Անտոնյանը և Ա.Ավետիսյանը՝ Իրանում (1993թ.):

Շրջանավարտները և ամբիոնի աշխատակիցները երկար տարիներ հասարակական աշխատանքներ են կատարում հանրապետության ծանրամարտի, բռնցքամարտի և սուսերամարտի ֆեդերացիաներում՝ Հ.Գասպարյան, Ս.Հարությունյան, Գ.Ազիզյան, Վ.Աճեմյան, Հ. Վանեսյան, Ա.Անտոնյան, Ա.Մադոյան, Կ.Ջաներյան, իսկ Գ.Կարապետյանը, Վ.Ենգիբարյանը, Վ.Ղարագյոզյանը և Դ.Գաբրիելյանը ընտրվել են միջազգային ֆեդերացիաների կազմում:

Ամբիոնի աշխատողները և ուսանողները ակտիվորեն են մասնակցել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային ազատագրման պայքարին:

Ամբիոնի դասախոս Ա.Բազեյանը ծանր վիրավորվեց, իսկ ուսանողներ Վ.Բաղդասարյանը /բռնցքամարտ/, Մ.Մեքիյանը /ծանրամարտ/ հերոսաբար զոհվեցին ԼՂՀ ազատագրության համար մղված մարտերում:

ՄԱՐԶԱԽԱՂԵՐԻ ԱՄԲԻՈՆ

1945 թվականին՝ Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի հիմնադրումից հետո, կազմավորվեց նաև մարզախաղերի ամբիոնը:

Ամբիոնը իր հիմնադրման օրից առանձնակի ուշադրություն է դարձնում ուսումնամեթոդական, գիտական և հատկապես մարզական աշխատանքներին: Ամբիոնը մեծ ուշադրություն է նվիրում ուսանողների հետ տարվող աշխատանքներին, իսկ ամբիոնի ուսանողները շարունակելով բարի ավանդույթները, բարեկամական նոր կապեր են ստեղծում միջազգային կազմակերպությունների հետ: Նրանք ներգրավված են գիտական խորհրդի, ֆակուլտետների և հասարակական ու կառավարման բոլոր մարմինների մեջ:

Իր գոյատևման 60 տարիների ընթացքում ամբիոնը չի անվանափոխվել: Այդ տարիներին ամբիոնը ներառել է բասկետբոլ, վոլեյբոլ, թենիս, ֆուտբոլ, հանդբոլ, շախմատ, սեղանի թենիս, բիլիարդ մասնագիտությունները:

Ամբիոնում աշխատել են Հայաստանի Հանրապետության ֆիզկուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչներ Մուշեղ Մամիկոնյանը, Ալեքսանդր Օգանովը, Կոնստանտին Վարդանյանը, պրոֆեսորներ Կառլեն Մանուկյանը, Նինել Հովհաննիսյանը, հանրապետության վաստակավոր մարզիչներ Բորիս Մելիքյանը, Նիկոլայ Խաչիյանը, Սպարտակ Ծառուկյանը:

Մարզախաղերի ամբիոնում առաջին իսկ օրվանից պատշաճ մակարդակի վրա են դրվել ուսումնամեթոդական աշխատանքները, հրատարակվել են մայրենի լեզվով բազմաթիվ մեթոդական ձեռնարկներ, մենագրություններ, աշխատություններ, որոնք մինչև օրս էլ օգտագործվում են որպես մասնագիտական գրականություն:

Արժեքավոր են Մուշեղ Մամիկոնյանի կողմից հրատարակված մեթոդական ձեռնարկը (1963 թ.), Կոնստանտին Վարդանյանի «Հոգեբանական հարցերը բասկետբոլում» (1967 թ.), Ռաֆիկ Մարգարյանի «Սահմանային մամլիչ պաշտպանությունը բասկետբոլում» (1975 թ.), Նինել Հովհաննիսյանի «Շարժական խաղեր» գրքերը, Կառլեն Մանուկյանի ղեկավարությամբ հրատարակված բասկետբոլի, հանդբոլի, վոլեյբոլի մեթոդական ձեռնարկները (1978 թ.), Գագիկ Հակոբյանի

շախմատի վերաբերյալ շուրջ 15 աշխատությունները, Արտյուշա Տիգրանյանի կողմից հրատարակված հանդբոլի Ռուս-հայերեն բառարանը (1993 թ.), Հարություն Մելքոնյանի կողմից տպագրված «Հանդբոլի պատմական զարգացումը աշխարհում և Հայաստանում» (2001 թ.) «Հանդբոլը դպրոցում» (2004թ.) «Հանդբոլը ԲՈՒՀ-ի ուսանողների համար» (2004թ.) ուսումնական ձեռնարկները և մի շարք մեթոդական հանձնարարականներ:

Մարզախաղերի ամբիոնի առաջին վարիչը եղել է ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ Ալեքսանդր Նիկոլայի Օգանովը (1945-1950թթ): Այնուհետև ամբիոնը ղեկավարել են Մուշեղ Մամիկոնյանը (1950-1960 թթ.), Կառլեն Մանուկյանը (1969-1982,1984-1989,1993-1997թթ.), Հրանտ Սիմոնյանը (1982-1983 թթ.), Նինել Հովհաննիսյանը (1983-1984 թթ.), Եղիշ Դավթյանը (1989-1993 թթ.), իսկ 1997 թ.-ից մինչ օրս՝ Հարություն Մելքոնյանը:

Տարբեր տարիներ ամբիոնում դասավանդել են Արմենակ Ալաջաջյանը, Հրանտ Սիմոնյանը, Աբրահամ Համամջյանը, Ռաֆիկ Մարգարյանը, Դավիթ Սարգսյանը, Էդուարդ Հարությունյանը, Հրաչյա Մարտիրոսյանը (բասկետբոլ), Ալեքսանդր Ամխանիցկին, Սուրեն Թումանյանը, Աղասի Չախմաչյանը, Մարկ Մելիքյանը, Ալեքսան Արևշատյանը, Սերգեյ Գևորգյանը, Ալեքսանդր Պեպանյանը (հանդբոլ), Նիկոլայ Խաչիյանը, Ռոլանդ Մանվելյանը, Սերգեյ Էլեկչյանը, Վալենտին Յուխնևիչը, Հրանտ Նարինջյանը, Արամ Դանգուլովը (ֆուտբոլ), Իվան Ալեքսանյանը, Ռայիկ Ղուկասյանը, Ռոբերտ Բարսեղյանը, Կլիմենտ Նալբանդայնը, Նինա Բուլիչևան, Լարիսա Բեժանովան, Խաչիկ Ասմարյանը, Տանյա Պետրոսյանը, Աշոտ Հարությունյանը, Ռուդիկ Քրմոյանը (վոլեյբոլ), Սուրեն Ղուկասյանը, Վալենտին Դավթյանը, Ռոզա Պրուտնիկովան, Ավետիս Մանուկյանը, Կոնստանտին Ռոստոմյան, Լևոն Անոյանը, Արմեն Մելքումյանը (թենիս), Գագիկ Հակոբյանը, Լորիս Քալաշյանը, Նելլի Փիլոյանը, Աշոտ Անաստասյանը (շախմատ), Աննա Պողոսյանը, Սուսաննա Հովեյանը, Միշա Ոսկանյանը, Էլմիրա Անտոնյանը (սեղանի թենիս), Լյովա Ստեփանյանը (բիլիարդ):

Իր գոյության ընթացքում մարզախաղերի ամբիոնը տվել է 1930 շրջանավարտ, որոնք համալրել են հանրապետության տարբեր

մարզական կազմակերպություններ և այսօր էլ բարձր են պահում իրենց մասնագիտության պատիվը, աշխատում են ժամանակակից պահանջներով: Մեծամասնություն են կազմում այն շրջանավարտները, որոնք լծվել են մատաղ սերնդի ուսուցման և դաստիարակության պատասխանատու գործին: Գոյատևման 60 տարիների ընթացքում մարզախաղերի ամբիոնում մասնագիտացել են 558 ուսանող՝ բասկետբոլից, 531՝ վոլեյբոլից, 377՝ հանդբոլից, 84՝ սեղանի թենիսից, 121՝թենիսից, 112՝շախմատից, 23՝բիլիարդից, 124՝ֆուտբոլից:

60 տարիների ընթացքում ամբիոնի աշխատողներից գիտական աստիճաններ և կոչումներ են ստացել Ալեքսանդր Ամխանիցկին /հանդբոլ/, Լևոն Ներսիսյանը /վոլեյբոլ/, Կառլեն Մանուկյանը /բասկետբոլ/, Աննա Արարատյանը /վոլեյբոլ/, Էռնեստ Սահակյանը /բասկետբոլ/, Էդուարդ Հայկազյանը /բասկետբոլ/, Ռայիկ Ղուկասյան /վոլեյբոլ/, Հենզել Փաշիկյանը /բասկետբոլ/, Ռուդիկ Քրմոյանը /վոլեյբոլ/, Նինա Գրաբովսկայան /վոլեյբոլ/, Հասմիկ Հովհաննիսյանը /բասկետբոլ/, Ստանիսլավ Ղուկասյանը /բասկետբոլ/, Սպարտակ Ծառուկյանը /բասկետբոլ/, Գաբրիել Ղազարյանը

/բասկետբոլ/, Լևոն Անոյանը /թենիս/, Արմեն Մելքումյանը /թենիս/, Վլադիմիր Զաքոյանը /թենիս/:

Ամբիոնի շրջանավարտներից շատերն արժանացել են պատվավոր կոչումների: Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչի կոչում են ստացել Լորիս Քալաշյանը /շախմատ/, Մուշեղ Մամիկոնյանը /հանդբոլ/, Թամարա Աթանեսյան- Գալգալաուրին /թենիս/, Սերգեյ Արաքչյանը /վոլեյբոլ/, Ալեքսանդր Օգանովը /բասկետբոլ/, Աղասի Չարչօղլյանը /թենիս/, Կոնստանտին Վարդանյանը /բասկետբոլ/, Սամիկոն Համբարձումյանը /ֆուտբոլ/:

ՀՀ տարբեր մարզաձևերի ֆեդերացիաներ են ղեկավարել Կառլեն Մանուկյանը /բիլիարդ/, Հարություն Մելքոնյանը /հանդբոլ/, Արեստակես Նավասարդյանը /բասկետբոլ/: Ամբիոնի շրջանավարտներից ՀԱՕԿ-ի անդամներ են ընտրվել 13-ը, ՀՀ հավաքականի մարզիչներ են աշխատել 27-ը, վաստակավոր մարզիչի կոչում են ստացել 97-ը, ԽՍՀՄ վաստակավոր մարզիչի՝ 2-ը, ԽՍՀՄ վաստակավոր և պատվավոր վարպետի՝ 2-ը, ԽՍՀՄ հավաքական թիմերի անդամներ են դարձել 8-ը, միջազգային կարգի մրցավարներ՝ 8-ը, բարձրագույն կարգի մրցավարներ՝28-ը:

ՀԱՐՅՈՒԹՅՈՒՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Մարզական բարձր նվաճումներ են ձեռք բերել հանրաճանաչ բասկետբոլիստներ Արմենակ Ալաջաջյանը, Անահիտ Սարգսյանը, Կառլեն Մանուկյանը, Լյուբով Ալեքսանդրովան, վոլեյբոլիստ Սերոբ Փլավչյանը, հանդբոլիստներ Գայանե Հարությունյանը, Զինաիդա Սարգսյանը, շախմատիստներ, Սմբատ Լպուտյանը, Վլադիմիր Հակոբյանը, Արտաշես Մինասյանը, Աշոտ Անաստասյանը, Կարեն Ասրյանը, Լևոն Արոնյանը, սեղանի թենիսիստներ Աննա Պողոսյանը, Ֆելիքս Սարգսյանը և շատ ուրիշներ:

Ներկայումս ամբիոնում դասավանդում են պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր մարզիչ Հարություն Մելքոնյանը, ՀՀ վաստակավոր մարզիչ Արտյուշա Տիգրանյանը, ասիստենտներ, ՀՀ վաստակավոր մարզիչ Նինա Յասակովան, ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստա-

կավոր աշխատող Անժելա Վարոյանը, մանկավարժական գիտությունների թեկնածու Գաբրիել Ղազարյանը, միջազգային կարգի սպորտի վարպետ Ֆելիքս Սարգսյանը, սպորտի վարպետներ Վահագն Հարությունյանը, Կարեն Ասմարյանը, Ռիմա Բեգոյանը, Երանուհի Կալաջյանը, Լուսինե Մելքոնյանը, Աստղիկ Գյուրջինյանը, Էդուարդ Օհանյանը, ՀՀ վաստակավոր մարզիչ Հարություն Մանուկյանը:

Պրոֆեսիոնալասախոսական կազմի ջանքերով լուրջ աշխատանքներ են տարվում ուսումնական, գիտական և մարզական գործընթացը բարելավելու համար, որին մեծ աջակցություն են ցուցաբերում ամբիոնի ուսումնաօժանդակ կազմի աշխատողներ Գայանե Մաթևոսյանը, Իրինա Հովսեփյանը, Էլլադա Հովհաննիսյանը, Մարգարիտա Պողոսյանը:

Մարզախաղերի ամբիոնը ունի համակարգիչներով, տեսամագնիտոֆոնով և հեռուստացույցով կահավորված սենյակ, ինչպես նաև՝ ինտերնետային կապ, որի միջոցով ստանում է մասնագիտություններին առնչվող ամենաթարմ տեղեկություններ:

Ամբիոնում կահավորված են երեք մասնագիտությունների կաբինետներ՝ իրենց մասնագիտական գրականությամբ, որտեղ մեծ ծավալի աշխատանքներ է կատարում կաբինետի վարիչ Անդրեյ Մանդալյանը:

2002/2003 թթ. ընթացքում էապես վերակառուցվել և թարմացվել են առարկայական ծրագրերը՝ դրանք համապատասխանեցնելով ինստիտուտի կողմից հաստատված ուսումնական պլաններին:

Ամբիոնի լավագույն ավանդույթներից են յուրաքանչյուր տարի անցկացվող բաց առաջնությունները և հուշամրցաշարերը տարբեր մարզաձևերից:

Նախատեսվում է լուծել մի քանի մարզախաղերի վերաբերյալ ուսումնական ձեռնարկների ստեղծման և հրատարակման խնդիրը, հատուկ ուշադրություն դարձնել սփյուռքի համար և սահմանամերձ շրջանների դպրոցները մեկնող շրջանավարտների պատրաստման գործին: Ծրագրվում է դպրոցների հետ մշտական կապ ապահովելու նպատակով ՀՀ մարզերի դպրոցներում, ըստ մարզախաղերի ամբիոնի մասնագիտությունների, ստեղծել բազային խմբեր և վերցնել դրանց շեֆությունը:

ՖՈՒՏԲՈԼԻ ԵՎ ԹԵՆԻՍԻ ԱՄԲԻՈՆ

Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի հիմնադրումից հետո, 1945թ. դեկտեմբերի 10-ին կազմավորվեց մարզախաղերի ամբիոնը՝ ՀՀ ֆիզկուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ, դոցենտ Ա. Օգանովի ղեկավարությամբ: Ամբիոնի կազմում, որպես մասնագիտական առարկա, ընդգրկված էր ֆուտբոլ մարզաձևը:

1968-69 ուս. տարում առանձնանալով մարզախաղերի ամբիոնից՝ ստեղծվեց ֆուտբոլի և թենիսի ամբիոնը, իսկ 1975թ. ամբիոնը ընդլայնվեց նոր մարզաձևով՝ մականախաղով: 1987 թ. թենիս և սեղանի թենիս մասնագիտությունները տեղափոխվեցին մարզախաղերի ամբիոն: 2003 թ. թենիսը նորից վերականգնվեց ամբիոնում:

Ամբիոնի առաջին վարիչ է ընտրվել ՀՀ վաստակավոր մարզիչ, դոցենտ, հանրապետությունում թենիսի հիմնադիրներից մեկը՝ Բորիս Մելիքյանը, որը ամբիոնը ղեկավարել է մինչև 1979 թվականը: 1979-1983 թթ. ամբիոնը ղեկավարել է ՀՀ վաստակավոր մարզիչ, դոցենտ, միջազգային կարգի մրցավար Հրանտ Նարինջյանը: Այնուհետև մեկ տարի ամբիոնի վարիչի պաշտոնակատար է եղել ՀՀ վաստակավոր մարզիչ, դոցենտ Ռոբերտ Բարսեղյանը: 1984 թ. մինչ 2004 թ. ամբիոնի վարիչն է եղել մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ստեփան Տիգրանյանը:

2004 թվականից ամբիոնի վարիչի պարտականությունները ստանձնել է մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Արամ Գրիգորյանը:

Ամբիոնի աշխատակիցների անունների հետ է կապված ամբիոնում ընդգրկված մարզաձևերի զարգացումը Հայաստանում:

Ամբիոնի հնագույն դասախոսներից անհրաժեշտ է հիշատակել Նիկոլայ Խաչիյանին, ՀՀ վաստակավոր մարզիչ Ռոլանդ Սանվելյանին, Սերգեյ Էլեկչյանին, Հրանտ Նարինջյանին, Ռոբերտ Բարսեղյանին:

1970- ական թվականներին ամբիոնը համալրվեց ինստիտուտի շրջանավարտներով՝ Ս.Տիգրանյան, Գ.Պապյան /ֆուտբոլ/, Վ.Դավթյան, Մ. Խումարյան /թենիս/, Ս.Հակոբյան /ֆուտբոլ, մականախաղ/,

Ա.Չատինյան /մականախաղ/:

Ամբիոնում տարբեր տարիներ դասավանդել են ՀՀ վաստակավոր մարզիչներ Ա. Աբրահամյանը, Հ. Դուրգարյանը, Հ. Մանթառյանը, Հ. Միրզոյանը:

1990-ական թվականներից առ այսօր ամբիոնում աշխատում են դասախոսներ՝ ՀՀ վաստակավոր մարզիչ, ՀՀ ֆիզկուլտուրայի վաստակավոր աշխատող, դոցենտ Ս.Գ.Մելքոնյանը, Գ.Մ. Թադևոսյանը, Լ.Վ.Թադևոսյանը, Ռ.Ֆ.Պրուդնիկովան, Վ.Մ. Շմավոնյանը:

Ամբիոնի չորս դասախոսներ տարբեր տարիների պաշտպանել են գիտական թեզ, որի արդյունքում նրանց շնորհվել է մանկավարժական գիտությունների թեկնածուի կոչում /Ս. Գ. Տիգրանյան, 1977 թ., Գ. Գ. Պապյան, 1981 թ., Ա.Ա. Չատինյան, 1992 թ., Ս.Ս. Հակոբյան, 1995 թ./:

Տասնամյակներ շարունակ ամբիոնը մեծ ուշադրություն է դարձնում ուսումնադաստիարակչական և մեթոդական աշխատանքների կազմակերպմանը և կատարելագործմանը:

Ամբիոնի դոցենտներ Հ. Հ. Նարինջյանի և Բ. Ա. Մելիքյանի կողմից հրատարակվել են 3 ուսումնամեթոդական ձեռնարկներ: Դասախոսների ուժերով պատրաստվել և հրատարակվել են շուրջ 15 մեթոդական նամակներ, հանձնարարականներ և 200 թեզիսներ:

Ուսումնական գործընթացը բարելավելու նպատակով 2004 թ. հրա-

տարակվել է Ս.Ս.Հակոբյանի և Ա.Ա.Չատինյանի «Ֆուտբոլ» դասագիրքը մայրենի լեզվով: Վերանայվել, թարմացվել և հարստացվել են ուսումնական ծրագրով նախատեսված բոլոր դասախոսությունները:

Տարիներ շարունակ ակտիվորեն գործել է ուսանողական գիտական խմբակը, որն իր մասնակցությունն է ունեցել ֆակուլտետի, ինստիտուտի, հանրապետական և համամիութենական գիտաժողովներին՝ շահելով մրցանակային տեղեր:

Ամբիոնի աշխատակիցներ Ս.Ս.Հակոբյանը /ՀՀ մականախաղի ֆեդերացիայի պատասխանատու քարտուղար/, Ս.Գ.Մելքոնյանը /ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիայի տեսչական կոմիտեի անդամ/ իրենց ակտիվ մասնակցությունն են բերում մարզական ֆեդերացիաների աշխատանքներին:

Ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքներին զուգահեռ ամբիոնում զգալի աշխատանքներ են կատարվել մարզական գործունեության առումով:

ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ամբիոնի հիմնադրման օրից ի վեր ՖԻՍԱ-ի ֆուտբոլի հավաքական թիմերն իրենց մասնակցությունն են բերել Երևան քաղաքի, հանրապետության, ԽՍՀՄ առաջնություններին՝ բազմիցս ճանաչվելով գավաթակիր և առաջնությունների հաղթող:

Աննախադեպ հաջողության հասավ ՖԻՍԱ-ի ֆուտբոլի հավաքական թիմը 1958 թ. Մոսկվայում կայացած ՀԱՄԽ-ի առաջնությունում՝ նվաճելով հաղթողի կոչումը: Թիմի ավագ մարզիչն էր Հայկ Անդրեասյանը:

1970-80 թվականներին ՖԻՍԱ-ի մականախաղի հավաքական թիմը մասնակցել է ԽՍՀՄ առաջնություններին, իսկ 1981 թ. թիմը հանդես է եկել «Բուրեվեստնիկ» անվան տակ: Այդ տարիներին թիմը ղեկավարել են ՀՀ վաստակավոր մարզիչներ Ա. Ա. Չատինյանը և Հ. Հ. Նարինջյանը: Թիմի կազմի գերակշռող մասը ՀՀ հավաքականի անդամներ էին, որոնք մասնակցել են ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադաներին և համամիութենական մրցաշարերին:

Աննախադեպ հաջողության են հասել թենիսիստները և սեղանի թենիսիստները: Վերջիններս մասնակցելով հանրապետության, ԽՍՀՄ-ի, Եվրոպայի, աշխարհի առաջնություններին և գավաթի խաղարկություններին, բազմիցս նվաճել են մրցանակային տեղեր:

Ամբիոնն իր գոյության ընթացքում տվել է շուրջ 1500 որակյալ շրջանավարտներ, որոնցից 73-ը ունեն ՀՀ վաստակավոր մարզիչի կոչում և այսօր էլ մարզում են ՀՀ հավաքական և հանրապետության առաջատար թիմերը:

Ամբիոնի 120 շրջանավարտներ արժանացել են ԽՍՀՄ սպորտի վարպետի, իսկ մականորդ Սոս Հայրապետյանը ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետի կոչման, նա օլիմիական խաղերի բրոնզե մեդալակիր է, ԽՍՀՄ բազմակի /12 անգամ/ չեմպիոն, 9-ակի գավաթակիր, Եվրոպական երկրների չեմպիոնների կրկնակի հաղթող: Ֆուտբոլիստ Արկադի Անդրիասյանը միջազգային կարգի սպորտի վարպետ է, օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր, ԽՍՀՄ չեմպիոն, կրկնակի գավաթակիր, Խորեն Հովհաննիսյանը միջազգային կարգի սպորտի վարպետ է, օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր, սեղանի թենիսիստուհիներ Նարինե և Էլմիրա Անտոնյանները միջազգային կարգի սպորտի վարպետներ են, Եվրոպայի, ԽՍՀՄ առաջնությունների հաղթողներ և գավաթակիրներ:

Ամբիոնի անվանի մարզիկ-շրջանավարտներից են Լևոն Իշտոյանը, Աննա Պողոսյանը, Անիտա Զախարյանը, Աննա Խալաթյանը և շատ ուրիշներ:

Արցախի ազատագրական պայքարի առաջին իսկ օրվանից ամբիոնի շրջանավարտներից շատերը ընդգրկվեցին երկրապահ ջոկատներում: Նրանցից Վազգեն Մարգսյանը խոշոր ծառայություն մատուցեց Արցախի ազատագրման, ՀՀ ազգային բանակի ստեղծման, հանրապետության քաղաքական և հասարակական գործունեության բարելավման գործում: Իր փայլուն գործունեության համար հայ ազգը նրան «շնորհեց» Սպարապետի պատվավոր կոչումը, իսկ հետմահու արժանացավ Հայաստանի Հանրապետության հերոսի կոչման:

Հայրենիքի պաշտպանության մարտերում հերոսի մահով ընկավ Նելսոն Գասպարյանը:

Ամբիոնում իրականացվող ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու գործում մեծ է ամբիոնի

օժանդակ կազմի աշխատակիցներ, կաբինետի վարիչ Ռ. Ա. Սեգուլյանի և ավագ լաբորանտ Գ. Հ. Պետրոսյանի դերը:

Ներկայումս ինստիտուտի ռեկտոր, պրոֆեսոր Վ.Առաքելյանի և ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ, Ազգային ժողովի պատգամավոր Ռ. Հայրապետյանի նախաձեռնությամբ պլանավորված է վերակառուցել ֆուտբոլի ամբիոնի մասնաշենքը և ֆուտբոլի խաղադաշտը:

ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԱՐԶԱՖԵՎԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Ինստիտուտի տարեկից դահուկասպորտի ամբիոնի կողմից առաջին միջոցառումը անցկացվեց 1945թ. դեկտեմբերին, երբ Մուշեղ Մամիկոնյանի ղեկավարությամբ Ծաղկաձորում կազմակերպվեց Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի ուսանողների դահուկասպորտի անդրանիկ ուսումնամարզական հավաքը: Այն դարձավ ավանդական և անցկացվեց ամեն տարի, մինչև 1991թ. և վերսկսվեց 2004 թվականից: Այդ կարևոր միջոցառումը իրականացնում էին Կ.Վարդանյանը, Հ.Կերսելյանը, Ա.Կոստանյանը և այլ ճանաչված մասնագետներ:

Եվ եթե ուսումնական պլանով նախատեսված առարկաներից շատերի համար Երևանում ժամանակավորապես հնարավոր էր ստեղծել սեփական մարզաբազաներ, ապա դահուկասպորտի պարապմունքները կազմակերպելու համար անհրաժեշտ էր ընտրել մի տարածաշրջան, որը հարմար լիներ դահուկաճամբարային հավաքների անցկացման համար: Ընտրվեց Ծաղկաձոր ավանը: Եվ չնայած մեծ դժվարություններին, տարեցտարի հավաքների կազմակերպման որակը բարելավվեց, իսկ ինստիտուտի շրջանավարտների դահուկային պատրաստության ցուցանիշները դարձան ավելի քան գոհացուցիչ:

Սակայն, ընդհուպ մինչև 50-ական թվականների վերջը, Ծաղկաձորում դահուկային մարզումներ էին անցկացնում միայն ֆիզկուլտուրայի ինստիտուտի ուսանողները: Հարկավոր էր հասնել այն բանին, որ Ծաղկաձորը դառնար հանրապետության աշխատավորության ձմեռային ակտիվ հանգստի ամենասիրելի վայրը: Հենց այդ նպատակով էլ 1960 թվականին «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ» թերթում ինս-

տիտուտի ռեկտորատը մի հայտարարություն զետեղեց այն մասին, որ հունվար-փետրվար ամիսներին՝ ամեն կիրակի օր, Ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի դահուկասպորտի ամբիոնը Ծաղկաձոր է հրավիրում դահուկասպորտի բոլոր սիրահարներին և բոլոր նրանց, ովքեր ցանկանում են դահուկներով սահել սովորել: Ընդ որում ընդգծվում էր, որ բոլոր ցանկացողներին անվճար կտրվի համապատասխան մարզագույք, նրանց հետ կպարապեն դահուկասպորտի ամբիոնի դասախոսները և մասնագիտացողները: Ավելին, դահուկասպորտի ամբիոնը հասարակական հիմունքներով ծաղկաձորցի երեխաների համար կազմակերպում էր դահուկասպորտի պարապմունքներ: Հատկապես նրանց համար ինստիտուտի ռեկտորատը ձեռք բերեց դահուկասպորտի մանկական մարզագույք: Ծաղկաձորում կանոնավորապես սկսեցին անցկացնել դահուկասպորտի մրցումներ: Ինստիտուտի շնորհիվ Ծաղկաձորը հետզհետե դարձավ դահուկասպորտի զարգացման հանրապետական կենտրոն և երևանցիների ձմեռային հանգստի ամենասիրելի վայրը:

ԳԱՌՆԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

1945-1948 թթ. դահուկասպորտի ամբիոնը ղեկավարել են Մուշեղ Մամիկոնյանը և Հակոբ Կերսելյանը: 1948թ. «Դահուկասպորտ» մասնագիտությունը միացվեց աթլետիկայի ամբիոնին, որը ղեկավարում էր Ալեքսանդր Միրզոյանը: Այդ տարիներին դահուկասպորտի առաջին դասախոսներն են եղել Ս.Մելքոնյանը, Տ.Ստեփանյանը, Ա.Միրզոյանը, Լ.Կարապետյանը, Հ.Առաքելյանը և ուրիշներ:

1952թ. ստեղծվեց դահուկասպորտի և ալպինիզմի ամբիոն /վարիչ՝ Մ.Վեքիլյան/: Տարբեր տարիներ ամբիոնի աշխատանքները գլխավորել են Ա.Միրզոյանը /1954-73թթ./, Վ.Մելոյանը /1973-87թթ./, Ա.Չատինյանը /1987-95թթ./: 1995թ. մինչ օրս ամբիոնը ղեկավարում է ՀՀ վաստակավոր մարզիչ, ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր աշխատող, պրոֆեսոր Գ.Հակոբյանը:

Ամբիոնի կազմավորման և զարգացման գործում մեծ լումա են ներդրել Ա.Օգանովը, Ի.Գալուստովը, Ե.Գալինսկին, Գ.Պետրոսյանը,

Ա.Չատինյանը, Ս.Հարությունյանը, Վ.Մելոյանը, Ա.Մինասյանը, Լ.Ղուկասյանը, Յու.Կուպալյանը, Հ.Նարինջյանը, Ռ.Մանվելյանը, Հ.Թոփալյանը, Գ.Հակոբյանը, Է.Բուտուլովը, Հ.Հայրապետյանը, Վ.Մինասյանը, Հ.Սիմոնյանը, Ա.Սերգոյանը, Կ.Կարապետյանը, Յու.Հարոյանը, Ա.Տիրացույանը, Ա.Մինասյանը, Վ.Սկրտչյանը, Հ.Թորոսյանը, Օ.Չալիկյանը, Մ.Սահակյանը, Մ.Հայրապետյանը, Վ.Համբարձումյանը, Հ.Մելքոնյանը, Վ.Դավթյանը և ուրիշներ:

Խորհրդային Միության ճանաչված ալպինիստ Վ.Գալուստովի նախաձեռնությամբ, որն ի դեպ մեծ աշխատանք է կատարել ինստիտուտում և հանրապետությունում ալպինիզմի զարգացման գործում, 1950-ական թվականներին կազմակերպվեցին դահուկային դժվարին արշավներ՝ Երևան-Բակուրիանի, Երևան-Գորի, Երևան-Օրջոնիկիձե երթուղիներով:

1961թ. Ա.Չատինյանի նախաձեռնությամբ ամբիոնում դասավանդվում է նոր մարզաձև՝ ժամանակակից ձմեռային երկամարտ կամ ինչպես ընդունված է անվանել՝ բիաթլոն:

Իր գոյության տարիներին ինստիտուտի դահուկորդները /դահուկավազք, բիաթլոն և լեռնադահուկային սպորտ/ հանրապետության հավաքական թիմերի կազմում մասնակցել են ձմեռային օլիմպիական խաղերին /Ա.Հարությունյան/, աշխարհի առաջնություններին /Վ.Խաչատրյան, Ա.Հարությունյան, Մ.Ներսիսյան, Վ.Հարությունյան, Է.Խաչատրյան/, ԽՍՀՄ ժողովուրդների ձմեռային բոլոր սպարտակիադաներին, համաշխարհային ուսանողական խաղերին:

1948-1963 թթ. ինստիտուտում դասավանդվել է «Ալպինիզմ» առարկան, որի առաջին դասախոսն է եղել Ի.Գալուստովը, այնուհետև 1952 թվականից Ա.Չատինյանը և Ս.Հարությունյանը, իսկ 1956թ.՝ Վ.Գ.Մելոյանը: Այնուհետև «Ալպինիզմ» առարկան փոխարինվել է բավականին հարուստ ավանդույթ ունեցող «Տուրիզմ» առարկայով և ամբիոնը վերանվանվել է դահուկասպորտի և տուրիզմի ամբիոն: Այդ տարիներին ամբիոնի կողմից կազմակերպվում ու անց էին կացվում բացօթյա տուրիստական արշավներ, դժվարին վերելքներ ինչպես հանրապետության սահմաններում, այնպես էլ Կենտրոնական ու Արևելյան Կովկասում: Հատկանշական են հատկապես 50-ական թվականներին կազմակերպված զանգվածային ավանդական վերելքները դեպի Արագած լեռ /4095 մ/, որին մասնակցեցին ինստիտուտի բոլոր ուսանողները: Ինստիտուտի նախաձեռնությամբ հանրապե-

տությունում առաջին անգամ 1948թ. անցկացվեցին ժայռամագլցման մրցումներ: Հետագա տարիներին ինստիտուտի ուսանողները հան-

ռապետության հավաքական թիմի կազմում մասնակցել են Անդրկովկասի և ապա Կովկասի առաջնության մրցումներին: Ինստիտուտի ուսանողներ Ա.Չատինյանը /1950, 1952, 1954 թթ./ և Մ.Սահակյանը /1952թ./ դարձել են Կովկասի չեմպիոններ:

Հեծանվասպորտ մասնագիտությունը ամբիոնում դասավանդվում է 1970 թվականից:

Մարզաձևի գոյության ընթացքում պատրաստվել են 231 բարձրակարգ մասնագետներ, այդ թվում՝ մեկ սպորտի վաստակավոր վարպետ, 7 միջազգային կարգի սպորտի վարպետ, 30 սպորտի վարպետ, 62 վարպետության թեկնածու: Ուսանող-հեծանվորդները հաջող են հանդես եկել միութենական և միջազգային առաջնություններում: Օ.Կլևցովը 1989թ. նվաճել է երիտասարդների, իսկ 1990թ. մեծահասակների աշխարհի չեմպիոնի կոչումը: Մ.Շաբոյանը 1991թ. դարձավ երիտասարդների աշխարհի չեմպիոն, Կ.Սոլոյանը՝ 1996թ. աշխարհի առաջնության 4-րդ մրցանակակիր, ԱՊՀ երկրների կրկնակի և Ռուսաստանի Դաշնության հնգակի չեմպիոն, իսկ Ա.Ղազարյանը մասնակցել է 1996 թ. Ատլանտայի օլիմպիական խաղերին: Միջազգային և համամիութենական մրցումների հաղթողներ և մրցանակակիրներ են եղել Ն.Ավետիսյանը, Տ.Ավագյանը, Ա.Գալստյանը, Վ.Կարապետյանը, Մ.Գալստյանը, Ա.Սարգսյանը, Ա.Ավետիսյանը, Ա.Ալվանդյանը, Ա.Արևշատյանը, Ս.Այվազյանը և ուրիշներ:

Տարբեր ժամանակներում ամբիոնում դասավանդել են Տ.Ավագյանը, Գ.Գյոզալյանը, Մ.Սահակյանը, Գ.Թոփալյանը, Ա.Ավետիսյանը, Ա.Ասատրյանը և Ա.Սոլոյանը:

1971-72 ուսումնական տարվանից ինստիտուտի դահուկասպորտի և տուրիզմի ամբիոնում սկսվեց դասավանդվել «Հրաձգություն» առարկան:

Անցած ժամանակահատվածում ինստիտուտում ուսանել են այնպիսի հանրաճանաչ հրաձիգներ, ինչպիսիք են՝ ԽՍՀՄ, Եվրոպայի, աշխարհի և օլիմպիական խաղերի չեմպիոն, սպորտի վաստակավոր վարպետ Հրաչյա Պետիկյանը, ԽՍՀՄ, Եվրոպայի և աշխարհի չեմպիոնուհի, միջազգային կարգի սպորտի վարպետ Երջանիկ Ավետիսյանը և ուրիշներ:

Ներկայումս «Հրաձգություն» առարկան բարձր մակարդակով դասավանդելու համար ինստիտուտում ստեղծված է օդամղիչ հրաձգության հարմարավետ հրաձգարան:

Առարկան դասավանդելու գործում իրենց մեծ ներդրումն են ունեցել դասախոսներ՝ սպորտի վարպետ Ռ.Սահակյանը, միջազգային կարգի սպորտի վարպետներ Գ.Մուրադյանը, Կ.Գասպարյանը և սպորտի վարպետ Մ.Օհանջանյանը:

1992 թ. ամբիոնում բացվել է նոր՝ «Փրկարարական գործ» մասնագիտությունը, որի հիմնական նպատակն է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասնագետ պատրաստելուն զուգընթաց ուսուցանել փրկարարի մասնագիտություն, որի կարիքը արդի պայմաններում զգացվում է հանրապետությունում: Ինչպես ցույց է տալիս վերջին տասնամյակների փորձը, հանրապետությունում զգալիորեն մեծացել է աղետների, վթարների և դժբախտ պատահարների թիվը: Եվ քանի դեռ հանրապետությունը չուներ բազմապրոֆիլային փրկարարներ, որոնք անհրաժեշտության դեպքում կարողանային առաջին օգնություն ցույց տալ բնակչությանը, բնականաբար զգացվեց այդ մասնագիտության պահանջը: Ներկայումս ամբիոնը սերտորեն համագործակցում է ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչության, նույն վարչության ուսումնական կենտրոնի Ճգնաժամային կառավարման պետական ինստիտուտի, Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության, «Սպիտակ» փրկարարական ուսումնական կենտրոնի և Ստեփանավանի «Լոռի» փրկարարական ջոկատի հետ:

Ներկայումս առարկան դասավանդում են հանրապետության լա-

վագույն մասնագետները, այդ թվում՝ պրոֆեսոր Ա.Չատինյանը, մանկավարժական գիտությունների թեկնածու Գ.Շիրինյանը, մանկավարժական գիտությունների թեկնածու Ս.Դանիելյանը, դոցենտ Ս.Հարությունյանը, սպորտի վարպետ Ս.Բիձյանը, Ճգնաժամային կառավարման ինստիտուտի ռեկտոր, տեխնիկական գիտությունների թեկնածու Հ.Մաթևոսյանը, տեխնիկական գիտությունների թեկնածու Ա.Բաղալյանը, Հայաստանի Կարմիր խաչի ընկերության հրահանգիչներ և այլն:

1969 թ. Ա.Չատինյանի և Հ.Նարինջյանի ջանքերով հանրապետությունում առաջին անգամ ստեղծվեց մականախաղի թիմ, որտեղ ընդգրկված էին հիմնականում դահուկորդներ: 1970թ. թիմը մասնակցեց ԽՍՀՄ առաջնությանը, իսկ 1971-1972 թթ. 16 թիմերի մեջ զբաղեցրեց 8-րդ տեղը: Երեք մականորդներ ընդգրկվեցին Խորհրդային Միության ազգային հավաքականի կազմում: 1975թ. ինստիտուտի ֆուտբոլի և թենիսի ամբիոնում բացվում է «Մականախաղ» մասնագիտություն և դահուկասպորտի ամբիոնից այն տեղափոխվում է այդ ամբիոն: Դահուկասպորտի ամբիոնում իր գոյության տարիներին մականախաղից 67 ուսանողներ դարձել են սպորտի վարպետության թեկնածու, որոնցից 12-ը հետագայում ստացել են սպորտի վարպետի կոչում:

1995 թ. ինստիտուտի Գիտական խորհրդի որոշմամբ ամբիոնը վերանվանվեց Կիրառական մարզաձևերի ամբիոն /դահուկասպորտ, հեծանվասպորտ, փրկարարական գործ, տուրիզմ և հրաձգություն/:

Իր գոյության 60 տարիների ընթացքում ամբիոնը տվել է 764 բարձրորակ շրջանավարտներ, այդ թվում՝ դահուկասպորտից՝ 429, հեծանվասպորտից՝ 231 և փրկարարական գործ՝ 104, որոնք հաջողությամբ աշխատում են հանրապետությունում և նրա սահմաններից դուրս:

Շրջանավարտներից շատերը այսօր մեծ հաջողությամբ աշխատում են հանրապետության հանրակրթական դպրոցներում, բուհերում, մանկապատանեական մարզադպրոցներում, նրանց մի մասը բարձր պաշտոնյաներ են տարբեր ոլորտներում, այդ թվում՝ նաև արտասահմանում:

Գիտամանկավարժական բեղմնավոր գործունեության համար պրոֆեսորի կոչման են արժանացել Գ.Պետրոսյանը, Լ.Պետրոսյանը, Ա.Չատինյանը, գիտության թեկնածուի աստիճանի Վ.Մելոյանը, Ա.Սերգոյանը, Է.Բուտուլովը, Հ.Թումանյանը, Ս.Դանիելյանը, Գ.Սարգսյանը, Դ.Դյակովը, դոցենտի կոչում է շնորհվել Գ.Հակոբյա-

նին, Ս.Հարությունյանին, Մ.Սահակյանին, Ա.Տիրացույանին և այլն:

Միայն վերջին վեց տարիների ընթացքում ամբիոնի շրջանավարտներից ասպիրանտուրա են ընդունվել 4-ը (Ս.Դանիելյան. փրկարարական գործ, Գ.Սարգսյան. դահուկասպորտ, Ս.Հովհաննիսյան. հեծանվասպորտ և Ա.Վահրամյան. փրկարարական գործ): Առաջին երկուսը հաջողությամբ պաշտպանել են թեկնածուական թեզը, Ս.Հովհաննիսյանի աշխատանքը պատրաստ է պաշտպանության, իսկ Ա.Վահրամյանը դեռևս շարունակում է ուսումը: Ամբիոնի դասախոսների կողմից հրատարակվել է 6 ուսումնական, 12 ուսումնամեթոդական ձեռնարկ, 13 մեթոդական նամակ և ցուցում, մեկ հեղինակային իրավունքով ուսումնական ծրագիր /մականախաղ/, 21 գիտական հոդված, 278 գիտամեթոդական թեզիս:

Ամբիոնի դասախոսները պարբերաբար զեկուցումներով հանդես են եկել ինչպես ինստիտուտի, այնպես էլ հանրապետական և միջազգային գիտաժողովներում:

Ամբիոնի դասախոսները ակտիվորեն մասնակցում են հանրապետության մարզական կյանքին և կատարում լայնածավալ հասարակական աշխատանք: Ա.Չատինյանը /բիաթլոն և մականախաղ/, Գ.Հակոբյանը և Կ.Կարապետյանը /դահուկավազք/, Ա.Տիրացույանը /լեռնադահուկային սպորտ/, Գ.Գյոզալյանը /հեծանվասպորտ/ տարբեր տարիների եղել են հանրապետության հավաքական թիմերի մարզիչներ և ավագ մարզիչներ: Տարբեր մարզաձևերի ֆեդերացիաների նախագահության անդամներ են Գ.Հակոբյանը, Ա.Տիրացույանը, Մ.Սահակյանը, Գ.Գյոզալյանը և Կ.Կարապետյանը: Ա.Չատինյանը Ազգային օլիմպիական կոմիտեի պատվավոր անդամ է: «Սպիտակ» փրկարարական ջոկատի անդամներ են Ա.Չատինյանը, Ա.Տիրացույանը և Ս.Դանիելյանը:

Ամբիոնի շրջանավարտները և ուսանողները անմասն չեն մնացել հանրապետության առօրյա կյանքից:Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային ազատագրական պայքարի ժամանակ նրա սահմանները պաշտպանելիս զոհվել են սպորտի վարպետներ Սամվել Գևորգյանը /«Մարտական խաչի» առաջին աստիճանի ասպետ/, Սերգեյ Ջավադյանը /հեծանվասպորտ/ և նետաձիգ, սպորտի վարպետ Նունե Աբրահամյանը:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնը ստեղծվել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի հիմնադրման օրից:

60 տարի առաջ՝ 1945թ., մարզական բնագավառի երեք նվիրյալներ՝ ինստիտուտի առաջին դիրեկտոր և ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի վարիչ Հայկ Փարսադանյանը, Քնարիկ Մարգարյանը և Ազատ Գալուստյանը, նվիրվեցին ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի ստեղծմանը, գիտամանկավարժական կադրերի ընտրմանը, ամբիոնի նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը:

Գործի հաջողությունը պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ Հայկ Փարսադանյանը և Քնարիկ Մարգարյանը հանդիսանում էին Մոսկվայի ֆիզիկական կուլտուրայի կենտրոնական ինստիտուտի առաջին հայազգի շրջանավարտները: Հայկ Փարսադանյանը նաև առաջիններից մեկն էր Հայաստանում, որը ֆիզիկական դաստիարակություն մասնագիտությունից պաշտպանեց մանկավարժական գիտությունների թեկնածուական թեզ:

1950-1970-ական թվականներին ամբիոնը համալրեցին մի խումբ բանիմաց մասնագետներ՝ Ս.Մալոյանը, Լ.Ղուկասյանը, Յու.Կուպալյանը, Ֆ.Ղազարյանը, Ա.Գուլոյանը, Ռ.Մելիքսեթյանը, Մ.Մամիկոնյանը, Փ.Բոյախչյանը, Վ.Թաթյանը, Ս.Ենգոյանը, հետագայում՝ 1970-1990 թվականներին ամբիոնում աշխատել են Ա.Գրիգորյանը, Մ.Աբրամովը, Հ.Կիրակոսյանը, Ե.Նահապետյանը, Ն.Նուշիկյանը, Գ.Մալոյանը, Հ.Բաբայանը, Հ.Մելքոնյանը, Ն.Գրաբովսկայան, Է.Հովակիմյանը, Ա.Եղիազարյանը, Բ.Ամիրյանը, Ֆ.Խաչատրյանը, Ա.Պետրոսյանը, Ե.Հակոբյանը, Ա.Մկրտչյանը, Գ.Հակոբյանը, Ս.Եղիկովը, իսկ վերջին 13 տարիներին ամբիոնը համալրվել է ինստիտուտը գերազանցությամբ ավարտած բարձրակարգ մարզիկ-շրջանավարտներով՝ Ս.Հովեյան, Ա.Պողոսյան, Դ.Փարվանյան, Ք.Բաղդասարյան, Ա.Ստեփանյան, Ա.Պապիկյան, որոնք մեծ ներդրում ունեցան ուսումնական գործընթացի կատարելագործման մեջ: Նրանք բոլորն

էլ իրենց մասնակցությունը բերեցին հանրապետության և հատկապես Երևան քաղաքի աշակերտների ֆիզիկական զարգացման և ֆիզիկական պատրաստականության վիճակի վերաբերյալ գիտամեթոդական մշակումներին:

Լինելով ինստիտուտի կարևորագույն օղակներից մեկը՝ ամբիոնը պատրաստել է ոչ միայն բարձրորակ կադրեր, այլև նպաստել է հանրապետությունում մարզական գիտության զարգացմանը: Չափազանցություն չէ, որ այս ամբիոնում են ծնունդ առել և զարգացել ֆիզիկական դաստիարակության և սպորտի մասին գիտությունները: Ամբիոնում պատրաստվել են գիտությունների երկու դոկտոր (Ֆ.Ղազարյան, Ռ.Մելիքսեթյան), հինգ պրոֆեսոր (Ֆ.Ղազարյան, Ռ.Մելիքսեթյան, Ա.Եղիազարյան, Է.Հովակիմյան, Յու.Կուպալյան), գիտությունների տասից ավելի թեկնածուներ և դոցենտներ: Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի առաջին դոկտորական թեզը Անդրկովկասում և Միջինասիական հանրապետություններում պաշտպանել է ամբիոնի դոցենտ Ֆ.Ղազարյանը, որը եղել է նաև Կիևի, Թբիլիսիի ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտների և Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մասնագիտական գիտական խորհուրդների անդամ: Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռ.Մելիքսեթյանը ընտրվել է ԽՍՀՄ մանկավարժական գիտությունների ակադեմիայի՝ «Սովորողների հիգիենայի և ֆիզիկական դաստիարակության հիմնախնդիրները» գիտական խորհրդի անդամ:

Բազմաթիվ գիտական հիմնահարցերի լուծման շնորհիվ ամբիոնի որոշ աշխատակիցներ ճանաչման են արժանացել նախկին ԽՍՀՄ-ում: Դրա խոսուն վկայությունն են պատկառելի թիվ կազմող (ավելի քան հազար) մենագրությունները, ուսումնական ձեռնարկները, գիտական ժողովածուները, ամսագրային և պարբերական մամուլում հրապարակված հոդվածները: Արժանահիշատակ է հատկապես «Ֆիզիկական կուլտուրայի տեսության և մեթոդիկայի ընդհանուր հիմունքները» աշխատությունը (հեղինակներ՝ Ռ.Մելիքսեթյան, Ֆ.Ղազարյան, 1987թ.), որը հայ իրականության մեջ ֆիզիկական դաստիարակության տեսության առաջին ուսումնական ձեռնարկն է: Մեծ արժեք է ներկայացնում «Սպորտային պատրաստության հիմունքները» դասագիրքը (հեղինակ՝ Ֆ.Գ.Ղազարյան, 1993թ), «Ֆիզիկական դաստիարակության տեսություն» դասագիրքը և «Ֆիզիկական դաստիա-

ռակության հիմնական ուղղությունները» ձեռնարկը (հեղինակներ՝ Ֆ.Գ.Ղազարյան, Ա.Ա. Գրիգորյան): Հ.Փարսադանյանը, Մ.Մամիկոնյանը, Փ.Բոյախչյանը, Ֆ.Ղազարյանը, Ռ.Մելիքսեթյանը, լինելով Հայկական ազգային հանրագիտարանի ֆիզկուլտուրայի և սպորտի գիտաճյուղային խորհրդի անդամներ, մեծապես նպաստել են ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պրոպագանդմանը հանրապետությունում: Հանրապետական, միութենական և միջազգային գիտաժողովներում զեկուցումներով հանդես են եկել Ֆ.Ղազարյանը, Յու. Կուպալյանը, Ն.Գրաբովսկայան, Ա.Եղիազարյանը, Մ.Աբրամովը, Ե.Հակոբյանը, Հ.Բաբայանը, Ա.Գրիգորյանը, Ռ.Մելիքսեթյանը և ուրշներ: Ամբիոնի աշխատողները գրախոսել են տասնյակ գիտական թեզեր, մենագրություններ, հոդվածներ, տարբեր գիտխորհուրդներում հանդես են եկել որպես ընդդիմախոսներ, իսկ Ֆ.Ղազարյանը ոչ միայն ղեկավարել, այլև ընդդիմախոսել է բազմաթիվ ատենախոսություններ տարբեր գիտխորհուրդներում (Մոսկվա, Թբիլիսի, Կիև, Երևան և այլն):

Պետական քննական հանձնաժողովները ղեկավարելու նպատակով հաճախ ֆիզիկական կուլտուրայի այլ ինստիտուտներ են հրավիրվել (Մոսկվա, Թբիլիսի, Կիև, Մինսկ և այլն) Ֆ.Ղազարյանը, Մ.Աբրամովը, Ռ.Մելիքսեթյանը և Է.Հովակիմյանը: Միայն այն, որ Ֆ.Ղազարյանը նախկին ԽՍՀՄ ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտների համար պրոֆեսոր Լ.Մատվեևի կողմից կազմված «Ֆիզիկական դաստիարակության տեսություն և մեթոդիկա» դասագրքի առանձին գլուխների հեղինակ է, խոսում է ամբիոնի բարձր հեղինակության մասին: Ֆ.Ղազարյանը և Ռ.Մելիքսեթյանը երկար տարիներ ընդգրկված են եղել «Ֆիզիկական դաստիարակության տեսություն և մեթոդիկա», ինչպես նաև «Մանկավարժական պրակտիկայի մեթոդիկա» համամիութենական առարկայական հանձնաժողովների նախագահությունների կազմում: Ռ.Մելիքսեթյանը տարիներ շարունակ եղել է նաև ԽՍՀՄ Լուսմինիստրության «Ֆիզիչեսկայա կուլտուրա վ շկոլե», ՀԽՍՀ Լուսմինիստրության «Մանկավարժ» ամսագրերի խմբագրական կոլեգիաների անդամ:

Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի հիմնադրման օրից ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնը անփոփոխ ղեկավարում է մանկավարժական և արտադրական պրակտիկան:

Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչներ, կինեզիոլոգներ և մարզական լրագրողներ պատրաստելու համակարգում պրակտիկայի դերը հանրահայտ է: Դա այն պատասխանատու օղակն է, որտեղ ստուգվում, ձևավորվում և կատարելագործվում են ուսանողների առարկայական, մեթոդական, մանկավարժական գիտելիքները, գործնական կարողությունների կիրառումը ուսուցման և դաստիարակության իրական պայմաններում:

Տարիների ընթացքում ամբիոնի դասախոսական անձնակազմի (Ք.Մարգարյան, Ա.Գուլոյան, Ս.Մալոյան, Մ.Մամիկոնյան, Փ.Բոյախչյան, Վ,Թաթյան, Ռ.Մելիքսեթյան, Ա.Գրիգորյան, Օ.Կիրակոսյան, Կ.Մելքոնյան, Հ.Բաբայան, Ե.Նահապետյան, Ա.Պողոսյան, Ս.Հովեյան, Յու. Գրիգորյան) անբասիր աշխատանքի շնորհիվ պրակտիկան բարի համբավ ձեռք բերեց հանրապետությունում:

Շարունակական անցկացվող մեթոդական սեմինարների, խորհրդակցությունների, գիտաժողովների, պրակտիկայի ամփոփումների, լավագույն փորձի ներդրումների շնորհիվ ինստիտուտում ձևավորվում է պրոֆեսիոնալ մեթոդիստի մոդելը:

Ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի դասախոսների, մեթոդիստների և ուսանողների կողմից մշտապես պլանավորվել է պրակտիկայի ընթացքում հանրակրթական դպրոցներում անցկացնել գիտահետազոտական աշխատանքներ:

Բազմաթիվ հետազոտությունների, ուսումնասիրությունների հեղինակներ են ամբիոնի աշխատողները: Դրանք նվիրված են նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական կուլտուրայի պարապմունքների արդյունավետության բարձրացմանը (Հ.Փարսադանյան, Ք.Մարգարյան, Ռ.Մելիքսեթյան), սպորտային մարզմանը, շարժողական ընդունակությունների դրսևորմանը (Ֆ.Ղազարյան, Ս.Մալոյան, Է.Հովակիմյան, Ա.Գրիգորյան), մեծահասակների ֆիզիկական դաստիարակության հարցերին (Լ.Ղուկասյան, Ա.Եղիկով, Եվ. Հակոբյան): Տարիներ շարունակ անցկացվող հետազոտական և ուսումնադաստիարակչական աշխատանքներին իր մասնակցությունն է ունեցել ամբիոնի ուսումնաօժանդակ անձնակազմը՝ Ս.Ենգոյան, Գ.Մալոյան, Ե.Նահապետյան, Հ.Կիրակոսյան, Ն.Նուշիկյան: Տասնամյակներ շարունակ հանրապետության հանրակրթական դպրոցների աշակերտների ֆիզիկական դաստիարակության ծրագրերը կազմվել են Ռ.Մելիքսեթյանի ղեկավարությամբ:

Ամբիոնը հանդես է բերել նաև նախաձեռնություններ, կազմակերպել ֆիզիկական կուլտուրային ու սպորտին, մարզական տերմինաբանությանը և արդիական այլ խնդիրներին նվիրված քննարկումներ, բանավեճեր, օլիմպիադաներ: Տեխնիկական միջոցներով, դիդակտիկ նյութերով, մայրենի լեզվով գրականությամբ ու ծրագրերով հագեցած է ամբիոնի գործող կաբինետը, ուր պահվում են աշխատակիցների հեղինակած շուրջ 160 դասախոսություններն ու մեթոդական մշակումները:

Ամբիոնի աշխատակիցներն իրենց կարողությունները դրսևորել են նաև արտերկրում: Ռ.Մելիքսեթյանը աշխատանքի հրավիրվելով Կուբա և Իրան՝ դասավանդել է «Ֆիզիկական դաստիարակության տեսություն և մեթոդիկա» առարկան, իսկ Ա.Եղիազարյանը մարզել է Եգիպտոսի ըմբշամարտի հավաքականը):

Ամբիոնի աշխատակիցների ծառայությունները բարձր են գնահատվել: Հ.Փարսադանյանը, Ք.Մարգարյանը և Մ.Մամիկոնյանը ար-

ժանացել են հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործչի, Ա.Գրիգորյանը և Յու.Կուպալյանը՝ ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր աշխատողի, Լ.Ղուկասյանը, Ռ.Մելիքսեթյանը, Ֆ.Ղազարյանը, Փ.Բոյախչյանը՝ հանրապետության վաստակավոր մարզիչի կոչումների: Ֆ.Ղազարյանը ընտրվել է ՄԱԿ-ին առընթեր Միջազգային ինֆորմատիզացիայի և ՀՀ մանկավարժական գիտությունների ակադեմիաների իսկական ան-

դամ: Յու.Կուպալյանը ՀՀ ֆիլատելիստների միության նախագահության անդամ է, օլիմպիական ֆիլատելիստների համաշխարհային ստուգատեսների մեդալակիր:

Ամբիոնն առողջարարական ուղղվածություն ունեցող խմբերի համար ծառայել է որպես գիտամեթոդական կենտրոն: Չորս տասնամյակ առաջ ամբիոնի ավագ դասախոս, Հայաստանի վաստակավոր մարզիչ Լյուդմիլա Ղուկասյանի նախաձեռնությամբ հիմնվեց կանանց առողջարարական առաջին խումբը: Հետագայում այդ գործը շարունակեց ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ել.Հակոբյանը, որը մինչև օրս էլ շարունակում է այդ շնորհալի աշխատանքը:



ՅՈՒՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ամբիոնը ղեկավարվել է բազմափորձ մասնագետների կողմից՝ Հ.Փարսադանյան (1945-72թթ), Ֆ.Ղազարյան (1972-76թթ), Ռ.Մելիքսեթյան (1977-87թթ), Յու.Կուպալյան (1987-89թթ), Ա.Եղիազարյան (1989-95թթ), Է.Հովակիմյան (1995-2001թթ), Ա.Գրիգորյան (2001-2003թթ), Յու.Գրիգորյան (2003թ. մինչ օրս):

Բնագավառի մասնագետներին, հատկապես ֆիզկուլտուրայի ուսուցիչներին խորհրդատվական օգնություն ցուցաբերելուց զատ, ամբիոնի աշխատակիցները մասնակցում են միջազգային կոնֆերանսների, համաժողովների, մշակում գիտական թեմաներ, սեփական ուժերով ամեն տարի հանրապետության տարածաշրջաններում անցկացնում «Օլիմպիական գաղափարներ՝ յուրաքանչյուրին» թեմայով ընթերցումներ:

Միայն վերջին տարիներին պրոֆեսորադասախոսական անձնակազմի ղեկավարությամբ պաշտպանվել է ավելի քան տասը ատենախոսություն, այդ թվում և արտերկրի 2 ասպիրանտների: Ներկայումս ամբիոնի դասախոսները ղեկավարում են շուրջ 20 ատենախոսական աշխատանքներ:

Ամբիոնի դասախոսների ղեկավարությամբ (Ֆ.Ղազարյան, Է.Հովակիմյան, Ա.Գրիգորյան) ատենախոսական թեզեր են պաշտպանել

ֆիզկուլտուրայի բնագավառի մի քանի տասնյակ աշխատողներ: ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի որոշմամբ միայն ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնին է իրավունք վերապահված ընդունելու մասնագիտության որակավորման քննություն՝ «Ֆիզիկական դաստիարակության տեսություն, սպորտային մարզում և առողջարարական ֆիզիկական կուլտուրա» ԺԳ 0002 մասնագիտությունից:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵՆԵՋՄԵՆԹԻ ԱՄԲԻՈՆ

Ֆիզիկական կուլտուրայի պատմության և ֆիզիկական կուլտուրայի և սպորտի կառավարման դասընթացները դասավանդվում էին Ֆիզիկական դաստիարակության մեթոդիկայի և պատմության ամբիոնում:

Ֆիզիկական կուլտուրայի պատմություն առարկայի դասավանդման գործում մեծ է 1947 թ. Մոսկվայից հրավիրված հայտնի գիտնական, մանկավարժական գիտությունների թեկնածու Ա.Գալուստյանի դերը: Նա Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի պատմությանը վերաբերող բազմաթիվ գիտական աշխատանքների հեղինակ էր:

1953 թ. ֆիզիկական դաստիարակության մեթոդիկայի և պատմության ամբիոնից առանձնացավ ֆիզիկական կուլտուրայի պատմության և ֆիզիկական կուլտուրայի շարժման կազմակերպման ամբիոնը, որն իր գոյության առաջին օրից մինչև 1960 թվականը ղեկավարում էր ինստիտուտի տնօրեն Ա.Չարչողլյանը: Նրա ղեկավարությամբ ամբիոնը առաջին քայլերը կատարեց գաղափարադաստիարակչական, ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքների ասպարեզում:

Ամբիոնի առաջին դասախոսներն էին Գ.Սաֆարովը, Հ.Ենգիբարյանը, որոնք վարում էին ֆիզիկական կուլտուրայի կազմակերպում դասընթացը և Գ.Բուտանը, որը դասավանդում էր ֆիզիկական կուլտուրայի պատմություն դասընթացը:

1959 թվականին Հայաստանում Ֆիզիկական կուլտուրայի պատ-

մությանը նվիրված թեզի համար մանկավարժական գիտությունների թեկնածուի աստիճան ստացավ Ա.Չարչօղլյանը: 1965 թ. մանկավարժական գիտությունների թեկնածուի աստիճան ստացավ Գ.Բուտաևը: Նրա թեզը նվիրված էր 19-20-րդ դարի սկզբի հայ ժողովրդի ֆիզիկական կուլտուրայի պատմության հարցերին:

Այդ ժամանակահատվածում ամբիոնի դասախոսները պատրաստեցին և հրատարակեցին ուշադրության արժանի մի շարք մենագրություններ և ուսումնամեթոդական ձեռնարկներ: 1956-1958 թթ. Ա.Չարչօղլյանի, Գ.Բուտաևի և Յ.Սիմոնյանի համահեղինակությամբ գրվեց երկհատոր ձեռնարկ ֆիզիկական կուլտուրայի պատմության վերաբերյալ: 1968 թ. լույս տեսան Գ.Սաֆարովի՝ «Հայաստանը ՍՍՀՄ ժողովուրդների երեք սպարտակիադաներում» և Ա.Չարչօղլյանի՝ «Ֆիզիկական կուլտուրան և սպորտը Հայկական ԽՍՀ-ում» գրքերը: 1971-1977 թթ. Հ.Ենգիբարյանը հրատարկեց երկու ուսումնական ձեռնարկ ֆիզիկական կուլտուրայի կազմակերպման վերաբերյալ:

1960 թ. ամբիոնը ղեկավարում էր մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Գ.Բուտաևը, որի օրոք էապես ակտիվացան ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքները, կատարելագործվեցին ուսումնական ծրագրերը, կազմակերպվեց ուսանողների արտադրական պրակտիկան արդյունաբերական ձեռնարկություններում, կամավոր մարզական ընկերություններում, սպորտկոմիտեներում, ընդլայնվեցին կապերը գիտական կենտրոնների և երկրի ֆիզկուլտուրային բուհերի հեղինակավոր գիտնականների հետ, առավել կոնկրետ ուղղվածություն ստացավ ամբիոնի գիտական հետազոտությունները, ամբիոնին կից ստեղծվեց գիտահետազոտական կաբինետ: 1967, այնուհետև 1968, 1977 թվականներին Երևանում Գ.Բուտաևը կազմակերպեց և անցկացրեց առաջին ընդլայնված համամիութենական միջբուհական գիտական կոնֆերանսները ֆիզիկական կուլտուրայի պատմությունից: Դրանք էական նշանակություն ունեցան այս գիտության հետագա զարգացման համար: Նրա ղեկավարությամբ ամբիոնի հետազոտական աշխատանքների առանցքն են կազմում Հայաստանի գյուղական շրջաններում կուլտուր-մարզական համալիրների, հանրապետության բնակչության ֆիզիկական դաստիարակության կատարելագործման համակարգի, մարզիչների աշխատանքի կազմակերպման, արտադրական կոլեկտիվներում ֆիզիկական կուլտուրայի զարգացման մասին հարցերը: Վաստակաշատ

գիտնականը հրատարակել է ավելի քան 90 գիտամեթոդական աշխատանք:

70-ական թվականներին ամբիոնը համալրվեց նոր, փորձառու մասնագետներով: Ամբիոնում ֆիզիկական կուլտուրայի պատմություն դասընթացը սկսեց վարել Լ. Ակոպովը, որը միաժամանակ Ֆիզիկական կուլտուրայի տեխնիկումի տնօրենն էր: Մարզակառույցներ առարկան դասավանդում էր մարզական հմուտ աշխատող, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Վ.Եղիգարյանը, որը նաև ինստիտուտի վերապատրաստման ֆակուլտետի դեկանն էր:

Ամբիոնի աշխատանքները զգալիորեն բարելավվեցին, երբ 1972 թ. ինստիտուտ հրավիրվեց մանկավարժական գիտությունների թեկնածու Է.Սահակյանը, որին 1977 թ. շնորհվեց դոցենտի, 1993 թ.՝ պրոֆեսորի, իսկ 2003 թ.՝ վաստակավոր պրոֆեսորի կոչում: Է.Սահակյանի բազմակողմանի գիտելիքները, մանկավարժական փորձը և աշխատունակությունը մեծապես նպաստեցին այդ առարկայի դասավանդման մակարդակի բարձրացմանը և ուսանողության լիարժեք ուսուցմանը և դաստիարակությանը:

Նրա կողմից պատրաստվել և հրապարակվել են մի շարք ուսումնամեթոդական ցուցումներ և երաշխավորություններ դասախոսու-

թյունների դասավանդման մեթոդիկայի կազմակերպման, գործնական պարապմունքների վարման, ուսանողների կողմից ֆիզիկական կուլտուրայի պատմությունից ինքնուրույն աշխատանքների կատարման վերաբերյալ: Ամենաէականը 1992 թվին Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի պատմության դասագրքի հրատարակումն էր: Նա միաժամանակ բեղմնավոր հետազոտական աշխատանք է կատարել Հայաստանի և Անդրկովկասի ֆիզիկական կուլտուրայի պատմության, սպորտի սոցիոլոգիայի և ֆիզկուլտուրային շարժման կառավարման վերաբերյալ:

1979 թվին Է.Սահակյանը ընտրվեց ֆիզիկական կուլտուրայի պատմության և կառավարման ամբիոնի վարիչ: Միաժամանակ 1972 թվից առայսօր Է.Ե.Սահակյանը աշխատում է որպես ինստիտուտի գիտական քարտուղար:

Նա մեծ վաստակ ունի ինստիտուտի պատմության թանգարանի ստեղծման գործում:

ԱՆԱՀԻՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2003 թ. ամբիոնի վարիչի պարտականությունները կատարում է Անահիտ Հարությունյանը:

90-ական թվականների սկզբին գործնական ամբիոններից ֆիզիկական կուլտուրայի պատմության և կառավարման ամբիոն տեղափոխվեցին ինստիտուտի բարձրորակ, գիտա-մանկավարժական աշխատանքի մեծ փորձ ունեցող մասնագետներ, մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր, ինստիտուտի նախկին ռեկտոր Հ.Գ.Թոփալյանը և պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կ.Աթոյանը:

Հ.Թոփալյանը հեղինակ է 100 ավելի գիտամեթոդական աշխատանքների, այդ թվում մենագրության՝ «Օլիմպիական խաղերը և սոցիալական պրոբլեմները» (1990 թ.):

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կ.Աթոյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ հայ ժողովրդի ֆիզիկական կուլտուրայի պատմությունը, ընդգրկում էր հնագույն ժամանակներից մինչև 20-րդ դարը:

Հայտնի են նրա «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հնագույն ակունքները Հայաստանում», «Ռազմասպորտային մենամարտերը Հայաստանում», «Կլասիկ ըմբշամարտ» գրքերը:

Ամբիոնում գիտամանկավարժական և հետազոտական բեղմնավոր գործունեություն է ծավալել ինստիտուտի պրոռեկտոր (մինչև 2003 թ.) մանկավարժական գիտությունների թեկնածու, հետագայում՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ Մ.Իսպիրյանը:

Ամբիոնում աշխատելու ժամանակ նա հետազոտական լայնածավալ աշխատանք կատարեց Հայաստանի և սփյուռքահայերի օլիմպիական շարժման պատմությունից: Նրա կողմից հրապարակվել են 12 մենագրություն և մի շարք գիտամեթոդական աշխատանքներ, այդ թվում դասագրքեր ֆիզիկական կուլտուրայի պատմությունից, օլիմպիզմից և իրավագիտությունից: Լայն հասարակությանը հայտնի են Մ.Իսպիրյանի «Մարզանունների բացատրական բառարան», «Օլիմպիական շարժման պատմություն», «Հայաստանը և հայերը օլիմպիական շարժման ոլորտում», «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պատմություն», «Իրավունքի հիմունքներ» և բազմաթիվ այլ գրքեր: Մ.Իսպիրյանի ամենաարժեքավոր աշխատություններից է Մարզական հանրագիտարանը պրոֆեսոր Վ.Առաքելյանի համահեղինակությամբ, որը հրատարակվել է 2003 թ.:

Անցած տարիներին ամբիոնում աշխատել են փորձառու մասնագետներ Ռաֆայել Հակոբյանը, Յուրի Գրիգորյանը և Արայիկ Մեհրաբյանը:

Ներկայումս ամբիոնում աշխատում են պրոֆեսորներ Մ.Իսպիրյանը, Է.Սահակյանը, Ռ.Հակոբյանը, դոցենտ՝ Ա.Հարությունյանը, մանկավարժական գիտությունների թեկնածու, ասիստենտ՝ Գ.Սարգսյանը, ասիստենտներ Լ.Մեծոյանը, Գ.Սարգսյանը, Մ.Պողոսյանը, Ա.Գյոզալյանը, Ն.Մկրտչյանը: Դասախոսական գործունեության հետ միասին վերջին տարիներին ամբիոնում կատարվում է պլանավորված գիտամեթոդական աշխատանք՝ նվիրված Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի պատմությանը, Հայաստանի և սփյուռքի օլիմպիական շարժման պատմությանը, նախադպրոցական և կրտսեր դպրոցական հասակի երեխաների կյանքում ֆիզիկական կուլտուրայի սոցիալական հարցերի ուսումնասիրմանը:

Նպատակասլաց գիտական աշխատանք է տարվում և ուսանողության շրջանում: Ամբիոնի գոյության ընթացքում դասախոսները հրատարակել են գիտամեթոդական ավելի քան 400 աշխատանք, այդ թվում 16 մենագրություն, 4 դասագիրք, 18 ուսումնա-մեթոդական ձեռնարկ, գիտական հոդվածներ և զեկուցումներ, գիտական թեզիսներ: Գիտական աշխատանքների արդյունքում պաշտպանվել են 2 դոկտորական և 10 թեկնածուական թեզեր: Ամբիոնի առաջատար դասախոսները զեկուցումներով պարբերաբար հանդես են գալիս միջազգային և հանրապետական գիտաժողովներում:

Ուսումնական, գիտական, հասարակական աշխատանքների և մարզական նվաճումների համար տարբեր տարիների ընթացքում ամբիոնի դասախոսներն արժանացել են պատվավոր կոչումների. ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր աշխատող, հանրապետության վաստակավոր մարզիչ, ինչպես նաև պարգևատրվել են զանազան շքանշաններով ու մեդալներով: Այսպես, պրոֆեսոր Մ.Իսպիրյանը արժանացել է Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործչի և ԽՍՀՄ վաստակավոր մարզիչի կոչումների, 1990թ. հանդիսանում է Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի փոխնախագահ, ընտրվել և երկար ժամանակահատված հասարակական կարգով աշխատել է ԽՍՀՄ ֆուտբոլի ֆեդերացիայի փոխնախագահ, համամիութենական «Ֆուտբոլ» շաբաթաթերթի խմբագրական խորհրդի անդամ, Հայաստանի «Համառոտ հանրագիտարանի» գիտական խորհրդատու, Հայաստանի Լեզվի պետական կոմիտեի հայերենի բարձրագույն խորհրդի մարզական տերմինների հանձնաժողովի նախագահ, պարգևատրվել է ԽՍՀՄ «Պատվո նշան» երկու շքանշաններով, մեդալներով և բազմաթիվ այլ պարգևներով:

Տարբեր տարիների ամբիոնում ուսումնամեթոդական աշխատանքները կազմակերպել են լաբորանտներ Ե.Սարգսյանը, Գ.Մալոյանը, Ս.Ղազարյանը, Ա.Անդրեասյանը, Ա.Միքայելյանը, Գ.Սահակյանը, Մ.Ասատրյանը, Ջ.Արևշատյանը, Զ.Մկրտչյանը, Կ.Հովհաննիսյանը, Ա.Ղարիբյանը, թանգարանի վարիչներ Մ.Մխիթարյանը, Ա.Գրիգորյանը և ուրիշներ:

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի տարեգրությունը սկսվում է 1951 թվականից: Հիմնադրման տարվանից մինչև 1983թ. ամբիոնը ղեկավարել է բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալեքսանդր Լալայանը: Առաջին աշխատակիցներն են եղել դոցենտ Յ. Սիմոնյանը, հոգեբանության լաբորատորիայի վարիչ Լ. Ներսիսյանը, ավագ լաբորանտ Մ. Ներսիսյանը, լաբորանտներ Մ.Ուռլյանը և Գ.Մալոյանը:

Տեսական մյուս ամբիոնների հետ մեկտեղ ամբիոնը լծվել է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասնագետներ պատրաստելու կարևոր գործին:

Ամբիոնում դասավանդվել են ընդհանուր և սպորտի հոգեբանություն, ընդհանուր մանկավարժություն և հայ մանկավարժության պատմություն առարկաները, ինչպես նաև հատուկ դասընթացներ՝ մասնագիտական կողմնորոշում, մարզիկի հոգեբանական պատրաստություն, մանկավարժական վարպետության հիմունքներ:

Ա. Լալայանի հեղինակությամբ, ամբիոնի աշխատակիցների համատեղ ուժերով հրատարակվել են մի շարք ուսումնամեթոդական ձեռնարկներ՝ «Սպորտի հոգեբանություն». 1976թ., «Մարզիչը և սպորտսմենը». 1962թ., «Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչը». 1969թ., «Ակնարկներ բասկետբոլիստի հոգեբանության վերաբերյալ». 1960թ., «Սպորտային մրցման հոգեբանական առանձնահատկություններ». 1963թ., «Պրոֆեսիոնալ կողմնորոշում». 1973թ., «Հոգեբանության մի քանի հարցեր». 1980թ., ինչպես նաև գիտամեթոդական աշխատություններ:

1964թ. ամբիոնին կից հիմնադրվեց հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիան:

Ամբիոնի դոցենտ Յ.Սիմոնյանի ջանքերով պատրաստվել են մի շարք մեթոդական և ուսումնական ձեռնարկներ /«Հայ մանկավարժության պատմություն հնագույն ժամանակներից մինչև 18-րդ դարը». 1969թ., «Ակնարկներ հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմության». 1971թ., «Մանկավարժություն և մանկավարժության պատմություն». 1973թ./:

Ամբիոնը լուրջ ներդրում ունի հանրապետությունում սպորտի հոգեբանության բնագավառում և հանրապետության հավաքական թիմերի պատրաստության գործում:

Ամբիոնի դասախոսները /Ք. Մարգարյան, Ա. Արարատյան և Վ. Քարամյան/ կազմել են ուսումնամեթոդական ձեռնարկներ, ընդհանուր և սպորտի հոգեբանության լաբորատոր աշխատանքների մեթոդական ցուցումներ: Ամբիոնի աշխատակիցները զեկուցումներով բազմիցս հանդես են եկել ինստիտուտային, հանրապետական, ինչպես նաև միջազգային գիտաժողովներին:

Ամբիոնի աշխատակիցները Ա. Լալայանի նախաձեռնությամբ կազմել են սպորտի հոգեբանության մատենագիտական տեղեկատուներ, որտեղ ընդգրկված են 1921–1983 թ.թ. հրատարակված տարբեր մարզաձևերին վերաբերվող նյութերը:

Տարիների ընթացքում ամբիոնը համալրվել է նոր աշխատակիցներով /Ք. Մարգարյան, Ա. Արարատյան. Է. Չաքրչյան, Ս. Չաթալբաշյան, Վ. Քարամյան, Լ. Օստրովսկայա, Ս. Ջամալյան, Գ. Բատիկյան, Հ. Բաբայան, Մ. Մկրտումյան, Կ. Չարյան, Լ. Անդրիասյան, Ի. Հարությունյան, Ա. Ամիրխանյան, Հ. Ավանեսյան,Ա. Չատինյան, Մ. Վարդանյան, Ա. Գրիգորյան, Ա. Ստեփանյան/: Թվարկվածների մի մասը ավարտել է ասպիրան-

տուրան և պաշտպանել թեկնածուական գիտական թեզեր: Ամբիոնը գիտական արժեքավոր առաջարկներով ու աշխատանքներով մեծ հեղինակություն է վայելել ԽՍՀՄ սպորտի հոգեբանության բնագավառում: Ա. Լալայանը եղել է Սպորտի հոգեբանության եվրոպական և միջազգային ֆեդերացիայի անդամ և իր գործունեության համար պարգևատրվել է այդ ֆեդերացիայի մեդալով:

Մեկ տարի՝ 1983թ., համատեղության կարգով ամբիոնը ղեկավարել է պրոֆեսոր Ա.Կոստանյանը: Ամբիոնը ղեկավարել են 1984 – 1990թ.թ. հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա.Արարատյանը, 1990թ. – 2003 թ. հոգեբանական գիտությունների դոկտոր Հ.Մ. Ավանեսյանը:

ՀԱՐՅՈՒԹՅՈՒՆ ԲԱԲԱՅԱՆ

2003 թվականին ամբիոնի վարիչ է ընտրվել ամբիոնի դոցենտ, հոգեբանական գիտությունների թեկնածու Հ.Բաբայանը: Ներկայումս ամբիոնում աշխատում են գիտությունների 5 թեկնածու, դոցենտներ,

Անցած աշխատանքային ժամանակաշրջանում ամբիոնի 5 աշխատակիցներ պաշտպանել են թեկնածուական թեզեր, որոնցից երեքը՝ հոգեբանական գիտությունների թեկնածու, երկուսը՝ մանկավարժական գիտությունների թեկնածու:

Ամբիոնում գիտական թեզեր են պատրաստում տեղացի և արտասահմանցի ասպիրանտներ ու հայցորդներ: 2003թ. հաջողությամբ պաշտպանեցին գիտական թեզերը Սիրիայի Արաբական Հանրապետության քաղաքացի Իմադ Ալմանսուրը /գիտ. ղեկավար՝ Հ. Բաբայան/, Ս. Աբրահամյանը /գիտ. ղեկավար՝ Հ. Ավանեսյան/: Ամբիոնում գիտամեթոդական բարձր մակարդակով են ղեկավարում ուսանողների դիպլոմային և կուրսային աշխատանքները: Ուսանողների և աշխատակիցների համար արտասահմանյան մասնագետների մասնակցությամբ պարբերաբար կազմակերպվում են գիտագործնական պարապմունքներ և զեկուցումներ:

Դոցենտներ Հ. Ավանեսյանը, Հ. Բաբայանը, Ա. Արարատյանը, Մ. Վարդանյանը մեկնել են արտագնա ծառայողական աշխատանքների, գիտաժողովների, ֆորումների և կոնգրեսների /ԱՄՆ, Ֆրանսիա, Գերմանիա, Ռուսաստան, Լիտվա, Հնդկաստան, Ավստրիա, Հունաստան, Բուլղարիա, Չեխոսլովակիա, Իսրայել, և այլն/:

Ամբիոնի դասախոսները ակտիվորեն են մասնակցում օլիմպիական կրթությանը նվիրված հանրապետական սեմինարներին, տարբեր մարզերում հանդես են գալիս դասախոսություններով և զեկուցումներով: Ամբիոնը մշակել է նոր ուսումնական ծրագրեր հոգեբանություն և մանկավարժություն առարկաներից, Հ. Ավանեսյանի հեղինակությամբ մշակվել է նոր դասընթաց՝ հոգեբանամանկավարժական պրակտիկում 4-րդ կուրսի ուսանողների համար:

Ամբիոնի աշխատակիցները գիտամանկավարժական գործունեությանը զուգընթաց ակտիվ մասնակցում են ինստիտուտի և հանրապետության հասարակական կյանքին: Հ.Մ. Ավանեսյանը ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր աշխատող է, Սպորտի հոգեբանության միջազգային ֆեդերացիայի անդամ, ՀՀ Սպորտի հոգեբանության ֆեդերացիայի նախագահ: Քանիցս նշանակվել է տարբեր բուհերի պետական քննությունների հանձնաժողովների նախագահ:

Հ.Բաբայանը Ազգային օլիմպիական ակադեմիայի դեկանն է, Սպորտի հոգեբանության ասիական ֆեդերացիայի անդամ, բազմիցս նշանակվել է հանրապետության տարբեր բուհերի պետական քննությունների հանձնաժողովների նախագահ:

Ա.Չատինյանը սպորտի վարպետ է, մականախաղի հանրապետական ֆեդերացիայի նախագահ, հանրապետական կարգի մրցավար:

Ամբիոնի գիտական աշխատանքներում մշտապես ընդգրկվում են ինչպես համապատասխան կուրսերի ուսանողները, այնպես էլ ասպիրանտներն ու հայցորդները:

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնը ստեղծվել է 1945 թվականին: Այն անվանվել է Մարքսիզմ-լենինիզմի ամբիոն: Ամբիոնի առաջին վարիչը եղել է Վարդգես Հարությունյանը: Տարիներ անց նախկին ամբիոնի բազայի վրա ստեղծվեցին երկու առանձին ամբիոններ՝ Փիլիսոփայության և քաղաքատնտեսության ու ՍՄԿԿ պատմության և գիտական կոմունիզմի: Այնուհետև՝ 1975 թ. ամբիոնները վերանվանվեցին ՍՄԿԿ պատմության ու քաղաքատնտեսության և Փիլիսոփայության ու գիտական կոմունիզմի ամբիոններ:

1994 թ. սեպտեմբերի 1-ից մինչև այսօր ամբիոնն անվանվում է Հասարակագիտության:

Ամբիոնում դասավանդվում են հայ ժողովրդի պատմություն, փիլիսոփայություն, քաղաքագիտություն, տնտեսագիտության և ֆիզիկական կուլտուրայի և սպորտի էկոնոմիկա առարկաները:

Ամբիոնի գործունեության 60 տարիների ընթացքում ամբիոնի վարիչներ են եղել Վ.Հարությունյանը, Մ.Ադոնցը, Լ.Քալաշյանը, Ա.Եղիազարյանը, Ռ.Վարդանովը, Ս.Քոչարյանը, Մ.Նիկողոսովը, Հ.Մկրտչյանը, Վ.Սահարյանը և Է.Հարությունյանը:

Տարբեր տարիներին ամբիոնի դասախոսները պաշտպանել են վեց դոկտորական և տասից ավելի թեկնածուական ատենախոսություններ, նրանցից յոթը արժանացել են պրոֆեսորի, իսկ տասը՝ դոցենտի կոչման:

ՎՐԵԺ ԲԱԲԱՅԱՆ

Անցած 60 տարիների ընթացքում ամբիոնի աշխատակիցները հրատարակել են բազմաթիվ մենագրություններ, հոդվածներ, գիտամեթոդական աշխատանքներ և գիտական թեզիսներ, որոնց մի մասը առնչվում է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերին, իսկ մյուսները նեղ մասնագիտական բնույթի են: Անչափ գնահատելի է ամբիոնի դասախոս Վրեժ Բաբայանի «Սպորտի փիլիսոփայություն» արժեքավոր ձեռնարկը:

Ամբիոնի աշխատողները գիտա-

կան զեկուցումներով հանդես են եկել միջազգային և ԽՍՀՄ համամիութենական գիտաժողովներում: Այսօր էլ ամբիոնի դասախոսները կատարում են մեծ ծավալի գիտահետազոտական աշխատանք, որն անմիջապես առնչվում է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հիմնահարցերին, մասնավորապես՝սպորտի էկոնոմիկայի, բիզնեսի, մարքեթինգի, փիլիսոփայության և քաղաքականության հետ կապված հարցերին:

60 տարի շարունակ ամբիոնի նպատակն է եղել դաստիարակել բազմակողմանի զարգացած ու լայն մտահորիզոն ունեցող մասնագետներ: Դրա վառ ապացույցն է այն, որ ինստիտուտի շատ շրջանավարտներ այսօր ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում վարել ու վարում են պատասխանատու պաշտոններ:

Ներկայումս ամբիոնում աշխատում են երկու պրոֆեսոր, մեկ դոցենտ, երկու ասիստենտ: Ամբիոնի վարիչ Վ.Բաբայանը աշխատում է 1980 թվականից, պրոֆեսոր Հ.Աբրահամյանը՝ 1975 թվականից, պրոֆեսոր Է.Հարությունյանը՝1976 թվականից, ասիստենտ Ա.Շահուվարյանը՝ 1968 թվականից, ասիստենտ Վ.Բաբայանը՝ 1980 թվականից, Ա.Հովհաննիսյանը՝ 1989 թվականից, Կ.Թարջումանյանը՝ 1969 թվականից և այլն:

Ամբիոնում երկար տարիներ աշխատել կամ աշխատում են Զ.Զոհրաբյանը, Լ.Կարախանյանը, Բ.Մանուկյանը, Ա.Բրուտյանը, Հ.Հարությունյանը, Ի.Զաքարյանը, Ա.Ղազարյանը, Մ.Իսպիրյանը, Ա.Եկմալյանը, Ի.Հակոբյանը, Ռ.Սահակյանը և ուրիշներ:

ՖԻԶԻՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

1945 *թվականին Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի հետ մեկտեղ ստեղծվեց նաև ֆիզիոլոգիայի և կենսաքիմիայի ամբիոնը: Ամբիոնը ղեկավարում էր Երևանի բժշկական ինստիտուտի դոցենտ Գ. Մուշեղյանը: Կես տարի անց ամբիոնի ղեկավար ընտրվեց դոցենտ Համբարձում Ստեփանյանը, որի ջանքերով ամբիոնն ամրապնդվեց և համալրվեց նոր կադրերով:*

Այդ ժամանակահատվածում ամբիոնում են աշխատել դասախոսներ Ռ. Ղամբարյանը, է. Հովհաննիսյանը, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռաֆայել Հարությունյանը, դոցենտ Շ. Ալոյանը, ավագ դասախոս Բ. Ավագյանը, դասախոս Հ. Բաղդոյանը, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Թ.Մանուկյանը, բժշկական գիտությունների թեկնածուներ, դոցենտ Է. Կիրակոսյանը և Է. Թադևոսյանը, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Լ. Իշխանյանը:

1979 թ. ամբիոնը բաժանվեց երկու ինքնուրույն՝ ֆիզիոլոգիա և կենսաքիմիա ու հիգիենա ամբիոնների: Վերջինիս վարիչն էր կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Է. Հայկազյանը: Ամբիոնում դասավանդում էին քիմիական գիտությունների թեկնածու, դոցենտ Վ. Նիկոլյանը, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ջ. Աբգարյանը, քիմիական գիտությունների թեկնածու, ավագ դասախոս Հ. Արսենյանը, դասախոս Ա. Շեգիրյանը, բժշկական գիտությունների թեկնածու, ավագ դասախոս Ռ. Մաթևոսյանը, ավագ դասախոսներ Ջ. Գալոյանը, Ի. Խաչատրյանը:

Այդ ժամանակահատվածում ամբիոնը իր ուրույն տեղը գրավել ինստիտուտի ուսումնական, գիտական և մարզական գործունեության մեջ: Ստեղծվեց կենսաքիմիայի լաբորատորիան՝ հագեցած նորագույն սարքավորումներով: Աշխատակիցների ուժերով հրատարակ-

վեցին շուրջ 10 ուսումնամեթոդական ձեռնարկներ: Բավական է նշել, որ ամբիոնի դոցենտ Վ. Նիկոլյանը ընդգրկված էր ամբիոնի ԽՍՀՄ ջրագնդակի օլիմպիական հավաքական թիմի համալիր գիտական խմբի կազմում, իսկ դոցենտներ Է. Հայկազյանը, Զ. Աբգարյանը, Ռ. Մաթևոսյանը և ավագ լաբորանտ Մ. Ասատրյանը իրականացնում էին Հայաստանի ձմեռային մարզաձևերի հավաքական թիմերի բժշկակենսաբանական սպասարկումը:

1984 թ. Ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ նշանակվեց կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռ.Հարությունյանը: Ամբիոնում աշխատում էին գիտությունների թեկնածուներ, դոցենտներ Է.Կիրակոսյանը և Է.Թադևոսյանը, կենսաբանական գիտությունների թեկնածուներ, դոցենտներ Լ.Իշխանյանը և Ռ.Ղազարյանը, ավագ դասախոս Ռ.Բաղդասարյանը, լաբորատորիայի վարիչ Լ.Աղաքարյանը, լաբորանտներ Ա.Սարգսյանը, Ա.Խաչատրյանը, Ռ.Բեզիրգանովան և Ա.Մանվելյանը:

1980-85 թթ. ֆիզիոլոգիայի ամբիոնը Խորհրդային Միության մասշտաբով եղել է բազային ամբիոն և մարզական ֆիզիոլոգիայի գծով համամիութենական մի քանի օլիմպիադաներ են կազմակերպվել ինստիտուտում:

Նշված օլիմպիադաների արդյունքում 5-6 ուսանողներ և ամբիոնի բոլոր աշխատակիցները արժանացել են համապատասխան մեդալների, պարգևների և դիպլոմների:

1992 թվականից ամբիոնում դասավանդվում է «էկոլոգիա» առարկան, որը նորամուծություն էր ինստիտուտի համար:

1996 թ. ֆիզիոլոգիայի և կենսաքիմիայի ամբիոնին միացավ անատոմիայի և կենսամեխանիկայի ամբիոնը, որը մինչև 1998 թ. ղեկավարում էր կենսաբանական գիտությունների թեկնածու, ԷՄԱ-ի թղթակից անդամ, դոցենտ Զ. Աբգարյանը:

Անցած տարիների ընթացքում ամբիոնի 9 աշխատողներ ստացել են դոցենտի, իսկ մեկը՝ պրոֆեսորի գիտական կոչումներ:

Մայրենի լեզվով մասնագիտական գրականություն ստեղծելու նպատակով ամբիոնում գրվել և թարգմանվել են ավելի քան 40 ուսումնական ձեռնարկներ, մեթոդական ցուցումներ և այլ ուսումնական նյութեր՝ կենսաբանությունից, կենսաքիմիայից և ֆիզիոլոգիայից:

Ամբիոնում կատարված գիտահետազոտական աշխատանքների թեմաներից ուշադրության են արժանի մարզիկի օրգանիզմի կլիմա-

յավարժման մեխանիզմներին, թերշարժունության ազդեցության, միջկիսագնդային փոխազդեցություններին, սպորտային ժառանգականությանը վերաբերող թեմաները:

Նշված թեմաներով ամբիոնի աշխատակիցների կողմից գրվել և հրատարակվել են 50-ից ավել գիտական հոդվածներ, թեզիսներ, աշխատանքներ, մենագրություններ, որոնց արդյունքները բազմիցս ներկայացվել են տարբեր գիտաժողովներում, այդ թվում նաև Ռուսաստանի տարբեր քաղաքներում, Ալմա-Աթայում, Տարտուում, Բաքվում, Քիշինևում, Բիշկեկում, ինչպես նաև՝ Չեխոսլովակիայում, Գերմանիայում, Բուլղարիայում, Աթենքում, Բոստոնում:

ԱՆԱՀԻՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

1999-2004 թթ. ամբիոնը ղեկավարել է դոցենտ Ռ. Ղազարյանը: 2005 թվականից ամբիոնը վերանվանվել է ֆիզիոլոգիայի և սպորտային բժշկության ամբիոն, որը ղեկավարում է կենսաբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Ա.Հարությունյանը:

Ամբիոնում դասավանդվում են ֆիզիոլոգիա, կենսաքիմիա, սպորտային բժշկություն, հիգիենա և էկոլոգիա առարկաները:

Ամբիոնի ուսումնական և գիտամեթոդական աշխատանքները ներկայումս կատարում են բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ.Աղաջանյանը, կենսաբանական գիտությունների թեկնածուներ, դոցենտներ Ջ.Աբգարյանը, Է.Հարությունյանը, Ռ.Թորոյանը, գիտությունների թեկնածուներ Մ.Եղիազարյանը և Կ.Ղազարյանը, ասիստենտներ Մ. Ասատրյանը, Ի.Եղիազարյանը, Մ.Ճշմարիտյանը, Կ.Դանիելյանը, Ն.Տեր-Մարգարյանը, լաբորանտներ Ա.Սարդարյանը և Ա.Սարգսյանը:

Կենսաքիմիա առարկայից լայն կիրառում է ստացել ստուգափորձերի մեթոդը: Այս բոլորն ուղղված է ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

2003 թ. ամբիոնի ավագ դասախոս Անահիտ Հարությունյանը պաշտպանել է թեկնածուական թեզը, ստացել կենսաբանական գիտությունների թեկնածուի աստիճան և 2004 թ. ստացել է դոցենտի կո-

չում: Նույն թվականին նա ընտրվել է մարզաառողջարարական ֆակուլտետի դեկան:

Ա.Հարությունյանի «Սպորտային պատրաստության հոգեֆիզիոլոգիական հիմունքները» մենագրությունը չափազանց արժեքավոր, առաջին և միակ ձեռնարկն է բնագավառում: Իր բեղմնավոր գիտամանկավարժական գործունեության համար նա արժանացել է ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր աշխատողի կոչման:

Ամբիոնի անձնակազմը ընդգրկված է նաև հասարակական աշխատանքներում: Ջ.Աբգարյանը ինստիտուտի խմբագրական կոլեգիայի անդամ է, ԷՄԱ-ի թղթակից անդամ: Նա մարզաառողջարարական ֆակուլտետի գիտքարտուղարն է: 2004 թ. դոցենտ Ջ.Աբգարյանին ինստիտուտի Գիտական խորհուրդը առաջինը շնորհեց վաստակավոր դասախոսի կոչում: Կենսաքիմիայի առարկայի ասիստենտ Մ.Ասատրյանը հանդիսանում է ինստիտուտի ռեկտորատի և Գիտխորհրդի քարտուղարը:

Ամբիոնը հովանավորում է Երևանի քաղաքապետարանի թիվ 45 միջնակարգ դպրոցի կենսաբանության և քիմիայի կաբինետին:

Ամբիոնը ներկայումս շարունակում է մայրենի լեզվով ուսումնական նյութերի կազմումը սպորտային ֆիզիոլոգիայի տարբեր բաժիններից:

ԱՆԱՏՈՄԻԱՅԻ ԵՎ ԿԵՆՍԱՄԵԽԱՆԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

1945 թ. *դեկտեմբերին դոցենտ Հ.Հակոբյանի կողմից կազմավորվեց ինստիտուտի անատոմիայի ամբիոնը: Մայրենի լեզվով դասագրքի բացակայության պատճառով ամբիոնի կողմից կազմվեցին դասախոսություններ, որոնք հետագայում խմբագրվեցին և բազմացվեցին՝ դառնալով ուսումնական ձեռնարկներ:*

Նոր ձևավորված ամբիոնում չկային ցուցադրական նյութեր, դրանց ձեռք բերման գործում մեծ վաստակ ունի ամբիոնի կաբինետի առաջին վարիչը՝ բժիշկ Վ.Ղազանչյանը: Նրա պատրաստած ցուցադրական նյութերը այսօր էլ գործածվում են ուսումնական գործընթացներում:

1959 թ., ամբիոնի վարիչ ընտրվեց դոցենտ Ի.Շաքարյանը: Նրա

ղեկավարությամբ ամբիոնում հիմնադրվեց ուսումնական թանգարանը, որը կարևոր դեր խաղաց անատոմիա առարկան ուսումնասիրելու գործում: Անհրաժեշտություն դարձավ անատոմիայի մայրենի լեզվով դասագիրք ունենալը, և այն հրատարակվեց Ի.Շաքարյանի և Հ.Ավագյանի համահեղինակությամբ, որը ընդգրկում էր ոսկրահոդաբանության և մկանաբանության բաժինները: Ավագ դասախոս Շ.Մարտիրոսյանի կողմից թարգմանվեց և հրատարակվեց Մ.Ֆ.Իվանիցկու «Մարդու մարմնի շարժումների մասին» գիրքը: 1969 թ. տպագրվեց Ի.Շաքարյանի «Մարդու անատոմիա» դասագիրքը: 1970-1981 թթ. ամբիոնը ղեկավարում էր դոցենտ Հ.Ավագյանը: Այդ տարիներին ամբիոնը դարձավ ինստիտուտի առաջատար ամբիոններից մեկը: Ընդարձակվեց ամբիոնի տարածքը, հատկացվեցին մշտական լսարաններ դասախոսությունների և լաբորատոր պարապմունքների համար՝ հագեցված ցուցադրական նյութերով:

Ամբիոնի աշխատակիցները մեծ աշխատանք կատարեցին դիդակտիկ նյութերի ձեռքբերման, պատրաստման և միջանցքների կահավորման գործում: Պատրաստվեցին լուսատախտակներ, մուլյաժներ, ուրվագծային նկարներ և այլն:

Այդ տարիներին ամբիոնի գիտական աշխատանքները նվիրված էին նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական զարգացվածության ուսումնասիրությունից մինչև բարձրակարգ մարզիկների հիմնահարցերին: Ամբիոնի աշխատակիցները զեկուցումներով հանդես եկան տարբեր գիտաժողովներում:

Ամբիոնի աշխատակիցներից թեկնածուական թեզ են պաշտպանել Հ.Ավագյանը, Հ.Փաշիկյանը և Ա.Մարտիրոսյանը:



ՀԵՆՉԵԼ ՓԱՇԻԿՅԱՆ

Անատոմիայի ամբիոնը մինչև օրս հրատարակել է 5 դասագիրք, 2 ուսումնական ատլաս և 6 մեթոդական ձեռնարկ: Ամբիոնի աշխատակիցները բազմաքանակ թեզիսներով և զեկուցումներով մասնակցել են գիտաժողովներին, ունեցել են 3 գիտական ներդրում, իսկ Հ.Փաշիկյանը ստացել է հեղինակային վկայական՝ շարժական ռենտգեն պատրաստելու համար:

Ներկայումս ամբիոնում դասավանդվող անատոմիա և կենսամեխանիկա առարկաներից վերանայվել են ուսումնական ծրագրերը, դասախոսությունները, որոնք նախատեսված են ինստիտուտի ստացիոնար ու հեռակա ֆակուլտետներում և ֆուտբոլի մրցավարների դպրոցում սովորող ուսանողների համար:

Այս տարիների ընթացքում ամբիոնում դասախոսել են դոցենտներ Հ.Հակոբյանը, Ի.Շաքարյանը, բժշկական գիտությունների թեկնածուներ Հ.Ավագյանը, Ս.Հակոբյանը, բժիշկներ Շ.Մարտիրոսյանը, Կ.Աբրահամյանը, կենսաբանական գիտությունների թեկնածու Լ.Մանուկյանը, մանկավարժական գիտությունների թեկնածու. Ա.Պետրոսյանը, դասախոսներ Լ.Պողոսյանը, Գ.Հարությունյանը, Ս.Ղազարյանը, Լ.Մեծոյանը, Մ.Պողոսյանը:

Ուսումնական օժանդակ աշխատակիցներ են եղել Մ.Ղազանչյանը, Ս.Ավագյանը, Ք.Խոնդկարյանը, Վ.Ղազարյանը, Ժ.Դիոնեսյանը, Ա.Իսկանդարյանը, Ա.Հովհաննիսյանը, Ա.Մանվելյանը, Ա.Մարուքյանը, Հ.Թադևոսյանը, Շ.Ավագյանը, Ք.Ենգիբարյանը, Ա.Գալստյանը, Ա.Թադևոսյանը, Հ.Թովմասյանը, Ժ.Խաչատրյանը, Ա.Բաբայանը և Ս.Հարությունյանը:

Ներկայումս ամբիոնում աշխատում են կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Լ.Մանուկյանը, ասիստենտներ Ա.Հովհաննիսյանը, Վ.Գրիգորյանը, դասախոսներ Գ.Նալբանդյանը, Ն.Մկրտչյանը, ավագ լաբորանտ Ա.Սարգսյանը և լաբորանտ Լ.Խաչատրյանը:

Սկսած 1982 թ. անատոմիայի և կենսամեխանիկայի ամբիոնը ղեկավարում է ինստիտուտի շրջանավարտ, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ.Ռ.Փաշիկյանը:

ԿԻՆԵԶԻՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԱԴԱՊՏԻՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնը հիմնադրվել է 1945 թ. որպես հիգիենայի և բուժվերբահսկողության ամբիոն: 1947 թ. միավորվել է բուժական ֆիզկուլտուրայի ամբիոնի հետ՝ անվանվելով բուժվերբահսկողության և բուժական ֆիզկուլտուրայի ամբիոն, որից հետո վերանվանվել է սպորտային բժշկության ամբիոն:

Տարբեր ժամանակաշրջաններում ամբիոնը ղեկավարել են դոցենտ Գ.Մինասյանը (1945-47թթ.), դոցենտ Գ.Սիմոնյանը (1948-50 թթ.), դոցենտ Լ.Գևորգյանը (1951-68 թթ.), դոցենտ Ձ.Գալոյանը (1969-70 թթ.), դոցենտ Ռ.Ջուգանյանը (1970-78 թթ.), դոցենտ Հ. Մանուկյանը (1978-97 թթ.), դոցենտ Հ. Բաղդասարյանը (1997-98 թթ.), դոցենտ Ս. Գրիգորյանը 1998 թ-ից մինչ օրս:

Ամբիոնի առաջին աշխատակիցներն էին Լ.Գևորգյանը, Ի.Օգանովան, Ռ.Մարգարյանը, Է.Պողոսյանը, Ձ.Գալոյանը, Մ.Պողոսյանը, Դ.Մախմուդովան, Ի.Խաչատրյանը, Լ.Իշխանովը, Դ.Սիմոնյանը:

1995 թ. ամբիոնում բացվեց «Կինեզիոլոգիա» մասնագիտությունը, որը մինչև օրս ավարտել են 166 շրջանավարտներ:

Գիտամանկավարժական գործունեությամբ ամբիոնում զբաղվում են ամբիոնի վարիչ, բժշկական գիտությունների թեկնածու Ս.Վ.Գրիգորյանը, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ.Գ.Աղաջանյանը, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ. Զ. Մանուկյանը: Ներկայումս ամբիոնում պատրաստվում են մեկ դոկտորական և երեք թեկնածուական ատենախոսություններ:

60 տարիների ընթացքում ամբիոնում հրատարակվել է 362 գիտական հոդված, 7 դասագիրք և 35 մեթոդական ցուցում: Ամբիոնի աշխատակիցների կողմից հրատարակվել են բազմաթիվ հոդվածներ և թեզիսներ հանրապետական և միջազգային մամուլում /Հայաստան, Ռուսաստան, ԱՄՆ, Հունաստան, Իսպանիա, Հոնկոնգ, Պակիստան, Լեհաստան և այլն/:



ՍՏԵՓԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ամբիոնի վարիչ, բժշկական գիտությունների թեկնածու Ս.Վ.Գրիգորյանը միութենական կարգի մրցավար է:

Ամբիոնի աշխատակիցները գիտական և մեթոդական օգնություն են ցուցաբերում ՀԱՕԿ-ին և մարզական ֆեդերացիաներին /ըմբշամարտ, ծանրամարտ, աթլետիկա, բասկետբոլ և այլն/:

Ամբիոնում հիմնվել է նոր մասնագիտություն «Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա», որի շրջանակներում կպատրաստվեն մասնագետներ՝ տարբեր կարգի հաշմանդամների հետ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցներով աշխատելու համար:

Այժմ ամբիոնում աշխատում են ամբիոնի վարիչ, բժշկական գիտությունների թեկնածու Ստեփան Գրիգորյանը, դոցենտ, կենսաբանական գիտությունների թեկնածու Հենրիկ Մանուկյանը, ասիստենտներ և դասախոսներ Անահիտ Մարտիրոսյանը, Հասմիկ Ղուլյանը, Քրիստինա Նեբոգովան, Գագիկ Պապայանը, Արփինե Մուրադյանը, կաբինետի վարիչ Միլվա Հակոբյանը, ավագ լաբորանտ Արևիկ Ղարիբյանը և լաբորանտ Ալինա Գևորգյանը:

ԼԵԶՈՒՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտում լեզուների դասավանդումը սկսվել է նրա հիմնադրման առաջին իսկ օրից: Հենց առաջին տարում էլ ստեղծվել է լեզուների ամբիոնը: Ամբիոնի առաջին վարիչն է եղել Մարկ Լեոնը, որն այն ղեկավարեց մինչև 1950 թվականը: Առաջին երախտավորներից էին ռուսաց լեզվի դասախոսներ Սոսիա Հակոբյանը, Էմմա Բաղդասարյանը, Անահիտ Ղազարյանը, անգլերեն լեզվի մասնագետ Թամարա Մելիք-Փաշաևան, գերմաներենի դասախոս Աիդա Մակինյանը:

ԿԱՐԻՆԵ ՍԱՐԱՖՅԱՆ

1950 – 1981 թթ. ամբիոնը ղեկավարել է ավագ դասախոս Անահիտ Ղազարյանը, իսկ 1981 – 1994 թթ. ամբիոնի վարիչ է ընտրվել մանկավարժական գիտությունների թեկնածու Քնարիկ Չերնովան: 1994 – 2003 թթ. ամբիոնի ղեկավարն է եղել դոցենտ Ստելլա Ալավերդյանը, իսկ 2003 – 2004 ուսումնական տարվա սկզբից ամբիոնի վարիչ է ընտրվել Կարինե Սարաֆյանը:

Տարիներ շարունակ ամբիոնում դասավանդվել են մայրենի, ռուսաց և օտար լեզուներ: Ամբիոնի կոլեկտիվի ջանքերով ստեղծվել և շարունակաբար կիրառվել ու զարգացել է լեզուների յուրացման առաջավոր և արդյունավետ մեթոդիկան: Դասախոսները մեծ ներդրում ունեն ուսումնական գործընթացի բարելավման, դասավանդման մեթոդիկայի կատարելագործման հարցում: Ամբիոնի աշխատակազմը ձգտել է ուսումնական նյութը առավելագույնս մոտեցնել ուսանողների հաղորդակցման իրական ու կոնկրետ պահանջներին՝ մշտապես նկատի ունենալով ուսանողին ներկայացվող գործնական պահանջները: Դասախոսների ուշադրության կենտրոնում միշտ եղել է լեզուների ուսուցման սերտ կապը ինստիտուտի մասնագիտական ուղղվածության հետ: Ռուսաց լեզվի տիրապետման կատարելագործումն ուսանողներն իրականացնում են դասագրքերի, մասնագիտական տեքստերի հարուստ բազայի հիման վրա:

Երկար տարիներ ամբիոնում աշխատել են բարձր որակավորում

ունեցող մասնագետներ, այդ թվում՝ գիտությունների թեկնածուներ Ք. Չերնովան և Ռ.Ղուլյանը: Ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը լրջորեն նպաստել են այնպիսի փորձված, առաջատար դասախոսներ, ինչպիսիք են Լ.Եղիազարյանը, Ն. Խաչատրյանը, Ս.Ասլանյանը, Մ.Ղազանչյանը, Մ.Օդաբաշյանը (հայոց լեզու), Ն. Վարդանյանը (անգլերեն), Ռ. Տեր-Մարգարյանը (գերմաներեն):

60 տարվա ընթացքում ամբիոնը հրատարակել է 100-ից ավելի գիտամեթոդական աշխատանքներ, սպորտին վերաբերող գեղարվեստական տեքստերի 8 ձեռնարկ, 6 մեթոդական ցուցում, 8 մեթոդական հանձնարարական:

Տարիներ շարունակ ամբիոնի ուշադրության կենտրոնում են եղել գիտամեթոդական աշխատանքները:

Մեծ ուշադրություն է դարձվել ուսանողների ինքնուրույն աշխատանքների կազմակերպմանը: Երկար տարիներ ամբիոնում գործում է թարգմանական և ռեֆերատիվ բնույթի աշխատանքների ուսանողական խմբակ, որում ընդգրկված են առաջին և երկրորդ կուրսերի ուսանողները: Նրանք ծանոթանում են հետազոտական աշխատանքի հիմնական սկզբունքներին, հմտանում գրավոր խոսքի շարադրման մեջ: Ավանդական են դարձել ամենամյա ուսանողական գիտաժողովները, որտեղ լսվում ու քննարկվում են առավել աչքի ընկած աշխատանքները: Խմբակի գործունեությունը հաճախակի քննարկվում է ամբիոնի

նիստերում և որոշումներ ընդունվում նրա հետագա գործունեության բարելավման ուղղությամբ:

Ուսումնական գործընթացի էլ ավելի կատարելագործման նպատակով ամբիոնում ստեղծվեց մեթոդական բաժանմունք, որի նիստերում հանդես են գալիս ամբիոնի դասախոսները: Զեկուցումներում և հաղորդումներում ներկայացվում են հայոց, ռուսաց և օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի վերջին նորույթները, որոնք հետագայում օգտագործվում են մեթոդական նոր ցուցումներ և հանձնարարականներ մշակելիս: Օտար լեզուների ուսուցմանը մեծապես նպաստում է ամբիոնի ձայնալսման կաբինետի օգտագործումը: Այն կազմավորվեց 1980-1981 թթ. և հենց այդ ժամանակ էլ ստեղծվեցին համապատասխան գործնական – ուսուցողական նյութեր: Առաջին անգամ ոչ պրոֆիլային բուհում ներդրվեց ուսուցման նորագույն մեթոդիկան, որի հիմքում ընկած է կրկնության սկզբունքը:

Ռուսաց լեզվի դասավանդման ժամանակ հաշվի են առնվում ազգային յուրահատկությունները: Լայնորեն կիրառվում են համապատասխան մեթոդիկաները և ուսումնական ձեռնարկները:

Տարիներ շարունակ ամբիոնի դասախոսները որակավորման բարձրացման դասընթացներ են անցել Երևանի պետական համալսարանում (Ս. Ալավերդյան, Ռ. Ղուլյան) և Մոսկվայում (Լ.Գարգալոյան, Կ. Սարաֆյան): Փորձի փոխանակման նպատակով դասախոսները գործուղվել են Մինսկ, Թբիլիսի, մասնակցել տարբեր գիտաժողովների:

Ներկայումս ռուսաց լեզվի դասավանդումն իրականացնում են փորձառու և առաջատար դասախոսներ Ս. Ալավերդյանը, Լ.Գարգալոյանը, Կ.Սարաֆյանը, Զ. Գրիգորյանը, Ա. Բարսեղյանը, Կ. Դանիելյանը, Ի. Գրիգորյանը:

1993 թ. ՀՀ կառավարության որոշմամբ ծրագրում մտցվել է հայոց լեզու առարկան, որը դասավանդում են Ծ. Քեշիշյանը, Ա. Բաղասյանը, Ն. Ավետիսյանը:

Անգլերեն լեզվի դասավանդումը կազմակերպված է նորագույն մեթոդիկայով, ուսումնական գործընթացը շարունակաբար հարստացվում է տարբեր մարզաձևերին վերաբերող նյութերով: Դասավանդումն իրականացնում են Ն. Դանիելյանը, Լ.Սամվելյանը, Ա. Հովսեփյանը, Ա. Մարությանը, իսկ օտար լեզվի հանձնախումբը ղեկավարում է փորձառու մասնագետ Գ. Սահակյանը:

Լեզուների ուսումնասիրումն ունի մեծ դաստիարակչական նշանակություն՝ նպաստելով ուսանողի մտավոր ունակությունների զարգացմանը և բարոյական կերպարի ձևավորմանը: Լեզուներն ուսանողին հաղորդակից են դարձնում համամարդկային արժեքներին, ընդլայնում մտահորիզոնը, հնարավորություն տալիս մշտապես իրազեկ լինել համաշխարհային քաղաքական, մշակութային, մարզական և այլ նորույթներին:

Լեզուների ամբիոնը զգալի ներդրում ունի գրագետ, բազմակողմանիորեն զարգացած մասնագետների ձևավորման ու կայացման գործում:

ՄԱՐԶԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԱԽՄԱՏԻ ԱՄԲԻՈՆ

2000թ. *ինստիտուտի ռեկտոր, պրոֆեսոր Վ. Առաքելյանի և ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարար Ռ. Շառոյանի նախաձեռնությամբ և համատեղ ջանքերով ինստիտուտում բացվեց մարզական լրագրության բաժին: Առաջին 3 տարիների ընթացքում բաժինը գտնվում էր ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնում: Մարզական լրագրողների 1-ին կուրսը կազմավորվել է տարբեր մասնագիտություններով ինստիտուտ ընդունված բարձրակարգ և գերազանցիկ 11 ուսանող-մարզիկներից, որոնք ուսումնառության տարիներին ցուցաբերել էին բարձր առաջադիմություն և մեծ հետաքրքրություն դեպի նոր ընտրած մասնագիտությունը:*

Իսկ 3 տարի անց այս բաժինը տվեց իր առաջին շրջանավարտներին՝ գերազանց առաջադիմությամբ: Նրանք այսօր էլ շարունակում են հմտանալ իրենց հոգեհարազատ այդ մասնագիտության մեջ՝ աշխատելով հանրապետության տարբեր լրատվամիջոցներում: Այս ամենը հուշում էր, որ ժամանակն է բացել մարզական լրագրության ամբիոն, որն էլ սկսեց գործել 2003 թ.-ից:

ՌՈԼԱՆԴ ՇԱՌՈՅԱՆ

Մարզաառողջարարական ֆակուլտետի մեջ ընդգրկված նորաբաց մարզական լրագրության և շախմատի ամբիոնը ղեկավարում է գրող, հրապարակախոս, լրագրող, ամբիոնի դոցենտ, պատվավոր պրոֆեսոր՝ Ռոլանդ Շառոյանը:

Ամբիոնի բացման առաջին իսկ օրվանից այստեղ աշխատում են հանրապետությունում ճանաչում գտած այնպիսի մասնագետներ, ինչպիսիք են՝ Միհրան Ստեփանյանը, Մուշեղ Հովսեփյանը, Արսեն Բաբայանը, Տանյա Հարությունյանը, Սպարտակ Ղարաբաղցյանը, Կարո Վարդանյանը՝ դասավանդելով համապատասխանաբար՝ մամուլի ժանրեր, էկոլրագրություն, մամուլի տեսություն, հեռուստառադիոժուռնալիստիկա, խոսքի կուլտուրա, ոճաբանություն, էթիկա, մենեջմենթ և ժուռնալիստիկա, թարգմանչական գործ, սղագրություն, ֆոտոլուսանկարչություն և մասնագիտական այլ առարկաներ: Նորաստեղծ ամբիոնում որպես դասախոս աշխատում են նաև այդ բաժնի առաջին գերազանց շրջանավարտներ Գոհար Խաչխաչյանը և Մերի Ահարոնյանը:

Ամբիոնը համալրվել է ժամանակակից բոլոր նյութատեխնիկական սարքավորումներով, մարզական լրագրության և շախմատի ամբիոնին անհրաժեշտ օժանդակ նյութերով և գրականությամբ: Ամբողջ դասախոսական կազմը լիովին նվիրված է իր աշխատանքին և մեծ բավականությամբ կատարում է մանկավարժի իր պարտականությունները:

Մասնագետները համոզված են, որ այս ամբիոնի շրջանավարտներն իրենց ծանրակշիռ խոսքը կասեն մարզական լրագրության բնագավառում, որն արդեն իսկ իրականություն է դարձել:

ԳՐԱԴԱՐԱՆ

Ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի հիմնադրումից մեկ տարի հետո՝ 1946 թ., ստեղծվեց ինստիտուտի գրադարանը:

Գրադարանի հիմնադրման գործում մեծ է եղել ինստիտուտի առաջին ռեկտոր Հայկ Փարսադանյանի օգնությունը: Ինստիտուտի գրադարանն իր գրական ֆոնդերի բազմազանությամբ ոչ միայն հանրապետության, այլև Խորհրդային Միության ֆիզկուլտուրայի ինստիտուտների լավագույն գրադարաններից մեկն է: Գրադարանում պահվում են բժիշկ Զախարովի նվիրատված սպորտային և բժշկական գրականության անձնական հավաքածուն: Այն կազմված է նախախորհրդային շրջանի հրատարակություններից: Չորս լեզվով՝ ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, այդ հազվագյուտ, եզակի հավաքածուն (մոտ 2350 կտոր) հանդիսանում է գրադարանի «ոսկե ֆոնդը»: Այս անչափ կարևոր գրքերի հետ մեկտեղ գրադարանում պահվում է նաև Միքայել Չամչյանի «Պատմություն Հայոց» գրքի I և II մասերը (1754-1785 թթ.)՝ հրատարակված Վենետիկում:

Ֆոնդերի բազմազանությամբ գրադարանը հանրապետությունում համարվում է լավագույններից մեկը, իսկ որպես մասնագիտական՝ միակն է: Ինստիտուտի գրադարանի ընդհանուր ֆոնդի 1/3-ը մարզական բնույթի է: Գրադարանն ունի բժշկության, մանկավարժության, հոգեբանության վերաբերյալ, ինչպես նաև գեղարվեստական, արվեստի, տեղեկատու բնույթի (բառարաններ, հանրագիտարաններ) հարուստ գրականություն: Գրադարանի ֆոնդը, որը հարուստ է նաև եվրոպական գրականության հայերեն թարգմանություններով, օգնում և նպաստում է ընթերցողների բազմակողմանի զարգացմանը: Գրադարանի ընթերցասրահը համալրված է անհրաժեշտ գրականությամբ, դասագրքերով, գիտական աշխատություններով, սեղմագրերով, տեղեկատուներով և մարզական մամուլի հավաքածուներով:

Գրադարանը պարբերաբար ցուցադրում է «Նոր գրքեր» ցուցափեղկը, կազմակերպում «Տեղեկատվության օրեր», որի ընթացքում ցուցադրվում են գրադարանում ստացված նորությունները:

Ինստիտուտի գրադարանը ժամանակին (1970-1990 թթ.) սպասարկել է 3200 ընթերցողների: Գրադարանի ֆոնդը այդ տարիներին կազմել է 220.000 կտոր գիրք:

Չորս տասնամյակից ավելի ինստիտուտի գրադարանի աշխատանքը ղեկավարել է գրադարանային գործի քաջ գիտակ Մարո Սողոմոնյանը: Ավարտելով համալսարանի բանասիրական ֆակուլտետը՝ նա անմիջապես աշխատանքի է անցել Ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի գրադարանում: Մ.Սողոմոնյանը ջանք ու եռանդ չի խնայել գրադարանի աշխատանքը բարձր մակարդակով կազմակերպելու համար: Մեծ է նրա ավանդը գրադարանային ֆոնդի հարստացման գործում: Մ.Սողոմոնյանի նախաձեռնությամբ գրադարանում բացվել է նոր բաժին՝ տեղեկատու-մասնագիտական, ինչպես նաև ընդլայնվել են մշակման և կոմպլեկտավորման բաժինները:

2000 թ. գրադարանի տնօրեն է աշխատում Նվարդ Սաֆարյանը:

Այժմ ինստիտուտի գրադարանում աշխատում են տասը գրադարանավար: Գրադարանի մշակման և կոմպլեկտավորման բաժնում աշխատում են Նինա Առաքելյանը, Սուսաննա Ամատունին և Գյուլնարա Սահակյանը:

Գրապահոցում և սպասարկման բաժնում աշխատում են գրադարանային գործին քաջատեղյակ աշխատողներ Մերի Զաքարյանը, Սիլվա Հովհաննիսյանը, Շուշան Թերզյանը, Արաքսյա Հովհաննիսյանը և Ծովինար Սողոմոնյանը: Նա սպորտային ամսագրերից ընտրում և կազմում է մատենագիտական ցանկեր: Ընթերցարանի աշխատանքը սիրով կատարում է Նելլի Չալաբյանը:

Խորհրդային Միության փլուզումից հետո մեծ փոփոխություններ տեղի ունեցան նաև գրադարանում: Հանվեց քաղաքական արդիակա-

նությունը կորցրած գրականությունը: Հարկ եղավ մանրամասն խմբագրել գրադարանի գրացուցակները և քարտարանները: Բաժին առ բաժին դրանք ստուգվեցին՝ համեմատվելով ֆոնդերի հետ: Վերահաշվառումից հետո գրադարանի ֆոնդը կազմում է մոտ 182 հազար միավոր գրականություն: Ներկայումս Մոսկվայից ստացվում է 7 անուն մարզական ամսագիր: Գրադարանի ֆոնդը սիստեմատիկաբար համալրվում է նաև ինստիտուտի դասախոսների կողմից տպագրված մարզական գրականությամբ:

ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Ինստիտուտի պատմության թանգարանը բացվել է 1985 թ. հոկտեմբերին, երբ ինստիտուտը նշում էր իր 40-ամյակը: Թանգարանի ստեղծման նախաձեռնությունը պատկանում է ինստիտուտի նախկին ռեկտոր՝ Հ.Թոփալյանին:

Թանգարանի թեմատիկ էքսպոզիցիոն պլանը կազմել է պրոֆեսոր Է.Սահակյանը: Թանգարանում ներկայացված են չորս թեմատիկ էքսպոզիցիաներ՝ ինստիտուտի նախապատմությունը, ինստիտուտի պատմությունը, օլիմպիական չեմպիոնները և զոհված ուսանող-ազատամարտիկները:

Առաջին էքսպոզիցիան պատմում է հանրապետությունում ֆիզկուլտուրայի կադրերի պատրաստման մասին մինչև ֆիզկուլտուրայի ինստիտուտի կազմավորումը (1920-1945 թթ.): Յուցադրատախտակների վրա ներկայացված են լուսանկարներ, նյութեր, գրականություն և այլն:

Երկրորդ էքսպոզիցիան նվիրված է 1945 թ. մինչև ներկա ժամանակների ինստիտուտի կյանքի և գործունեության հիմնական փուլերին: Բազմաթիվ լուսանկարներով, փաստաթղթերով, բազմազան առարկաներով և նյութերով ներկայացված է առաջատար դասախոսների, աշխատողների, ֆիզիկական կուլտուրայի վաստակավոր գործիչների գործունեությունը, արտացոլված են ուսումնական, գիտահետազոտական, մարզական, հասարակական-քաղաքական մեծածավալ աշխատանքները, ինստիտուտի միջազգային մարզական կապերը, նյութատեխնիկական բազան և այլն:

Թանգարանում ցուցադրված են այն հուշանվերները, որոնք ինստիտուտին են նվիրել տարբեր պատվիրակություններ, հայտնի մարզիկ-շրջանավարտներ, վետերաններ, արտասահմանյան հյուրեր:

Թանգարանի երրորդ էքսպոզիցիան նվիրված է ինստիտուտն ավարտած հայտնի մարզիկներին՝ օլիմպիական խաղերի, աշխարհի և Եվրոպայի չեմպիոններին:

Յուցափեղկում ցուցադրված են մարզիկների անձնական իրերը՝ մարզահագուստը, մեդալները, շքանշանները, արխիվային նյութերը, պատվոգրերը, փաստաթղթերը և այլն:

Թանգարանի չորրորդ էքսպոզիցիան նվիրված է Ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի ուսանող-շրջանավարտներին, որոնք կամավոր ջոկատների շարքերում հերոսաբար կռվել են Արցախի անկախության և ազատության համար մղվող պայքարում:

Բազմաթիվ ցուցափեղկերում ցուցադրված են նաև գծապատկերներ, սլայդներ և այլն: Թանգարանի նյութերի հավաքման համար մեծ աշխատանքներ են կատարել ֆիզիկական կուլտուրայի պատմության և մենեջմենթի ամբիոնի դասախոսները և աշխատակիցները: Թանգարանի ֆոնդերի կոմպլեկտավորման և ձևավորման համար մեծ եռանդ է ներդրել թանգարանի նախկին վարիչ Մ.Մխիթարյանը: Ներկայումս թանգարանի վարիչն է Ա.Գրիգորյանը:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում գիտահետազոտական աշխատանքները բարելավելու նպատակով 1961 թվականին Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտին առընթեր ստեղծվեց սպորտային մարզման տեսության և մեթոդիկայի պրոբլեմային գիտահետազոտական լաբորատորիա՝ պրոֆեսոր Ա.Լալայանի ղեկավարությամբ:

Հետագայում լաբորատորիայի ղեկավարությունը, տարբեր տարիների, ստանձնեցին պրոֆեսոր Ա.Կոստանյանը, դոցենտներ Գ.Բուտանը, Ռ.Ջուգանյանը, որոնց ստեղծագործական և երկարատև աշխատանքի շնորհիվ լաբորատորիան շուտով կազմավորվեց և ճանաչում ստացավ մարզական գիտության ասպարեզում:

Լաբորատորիայի տնօրենի պաշտոնում իրենց արդյունավետ ավանդն են ներդրել նաև գիտությունների թեկնածուներ Հ.Մանուկյանը, Ռ.Թորոյանը և Հ.Ավանեսյանը:

Սկզբնական շրջանում լաբորատորիան ստիպված եղավ հաղթահարել լուրջ կազմակերպչական և կադրային հիմնահարցեր: Լիարժեք և համալիր հետազոտություններ անցկացնելու համար անհրաժեշտ էր ընդգրկել սպորտին առնչվող այլ բնագավառների մասնագետներ և այդ նպատակով լաբորատորիայում ստեղծվեցին սպորտային մարզման մեթոդիկայի, սպորտային հոգեբանության, սպորտային ֆիզիոլոգիայի, սպորտային բժշկության և ինժեներական բաժիններ: Այս բաժինները ղեկավարելու համար հրավիրվեցին հանրապետության առաջատար մասնագետներ՝ սրտաբան, պրոֆեսոր Ռ.Պ.Ստամբոլցյանը, ֆիզիոլոգ, պրոֆեսոր Գ.Գ.Դեմիրչօղլյանը և հոգեբան, պրոֆեսոր Մ.Ա.Մազմանյանը:

Մարզիկների ֆիզիկական կարողությունները գնահատելու համար մշակվեցին ավանդական և ոչ ավանդական մեթոդներ: Ըմբշամարտիկների, աթլետների և հեծանվորդների դիմացկունությունը որոշելու համար մշակվեցին հատուկ բեռնվածության թեստեր: Ստեղծվեց պոլիէրգոգրաֆ, որի շնորհիվ հնարավոր դարձավ կազմել տարբեր մարզաձևերի մարզիկների հիմնական մկանախմբերի, ուժի, ստատիկ և

դինամիկ աշխատունակության տոպոգրաֆիան: Ուսումնասիրվել են նաև մարզիկների տեսադաշտի, հավասարակշռության զգացողության զարգացման հնարավորությունները՝ սպորտային կատարելագործմանը զուգընթաց:

Ֆիզիոլոգների աշխատանքները ուղղված էին ուղեղի, վեստիբուլյար ապարատի և նյարդամկանային ապարատի ուսումնասիրմանը՝ մարզիկների մոտ բարձր բեռնվածության, հոգնածության, հոգեկան ընկճվածության, ստրեսային և այլ պայմաններում:

Հոգեբանության բաժինը ընտրեց մարզիկ-հետազոտվողի հոգեվիճակին բնորոշ ամենահատկանշական ցուցանիշները: Կատարելագործվեցին և մշակվեցին փորձարարական նոր տեխնիկական միջոցներ, հարցաթերթիկային թեստեր, ներշնչման և ինքնակառավարման մեթոդիկաներ: Մշակված համալիր հետազոտումը արդյունավետորեն պարզում է անհատի և խմբակայինի (թիմի) հոգեվիճակը՝ անհրաժեշտության դեպքում ժամանակին ուղղումներ մտցնելու համար: Կահավորվեց մարզիկների հոգեբանական վերականգնման սենյակը, որը հետագայում լիարժեքորեն օգտագործվեց 1988 թ. Սպիտակի աղետալի երկրաշարժից տուժածների հոգեվիճակը վերականգնելու համար:

Սպորտային բժշկության բաժինը մասնագիտացավ մարզիկների գործարարական (ֆունկցիոնալ) վիճակը ախտորոշելու գործում: Յուրացրեցին սիրտանոթային և սիրտթոքային համակարգերի հետազոտման առաջավոր մեթոդիկաներ (սրտագրություն, անոթազարկագրություն, սրտի էխոսրտագրություն և արտաքին շնչառության պարամետրերի որոշում), իսկ կենսաքիմիայի խումբը՝ արյան և մեզի բաղադրիչների փոփոխությունների վերլուծման տեխնիկան:

Վերը նշված ֆիզիոլոգիական, հոգեբանական, բժշկակենսաբանական հետազոտական բոլոր մեթոդիկաները օգտագործվել են բնա-

կան պայմաններում (անմիջապես մարզման գործընթացում): Լաբորատոր հետազոտական փորձերի ընթացքում օգտագործվել են Հարվարդյան թեստը, PWC170 աշխատունակության որոշման թեստը, Կուպերի թեստը, լաբորատորիայում մշակված մի շարք մարզաձևերի համար այլ յուրահատուկ թեստեր:

Ինժեներատեխնիկական բաժինը ապահովում էր բոլոր բաժինների հետազոտությունների տեխնիկական կողմը: Հատուկ սարքավորման բացակայման դեպքում հաճախ լաբորատորիայի սարքերը հարմարեցվում էին տվյալ փորձը իրագործելու համար: Բայց մեծ մասամբ ստեղծվում էին նոր և յուրահատուկ սարքեր, որոնք այժմ էլ շարունակում են կիրառվել սպորտային հետազոտություններում:

Լաբորատորիայի ինժեներական բաժնի կողմից մշակված մի շարք գիտահետազոտական սարքեր Մոսկվայում կազմակերպվող գիտահետազոտական սարքերի ցուցահանդեսներում շահել են առաջին տեղեր և պարգևատրվել պատվոգրերով:

Լաբորատորիան, կատարելով անհրաժեշտ գիտական փորձեր և տիրապետելով ժամանակակից բազմաթիվ հետազոտական մեթոդների, հետազոտեց և գիտական բարձր մակարդակով կատարեց միջին լեռնային կլիմայական պայմաններում մարզիկների կլիմայավարժումը և այդ պայմաններում մարզման արդյունավետությունը և մարզիկների դիմացկունությունը բարձրացնելու ուղիների որոշման թեման: Կազմակերպվեցին բազմաթիվ գիտահետազոտական արշավներ (Արագած-Ծաղկաձոր-Երևան, Երևան-Ծաղկաձոր-Արագած, Ծաղկաձոր-Ալուշտա, Ծաղկաձոր-Օդեսա, Ծաղկաձոր-Ռիգա), ուր հավաքվեցին արժեքավոր գիտական տվյալներ, որոնք ծառայեցին, այժմ էլ ծառայում են հանրապետության հավաքական թիմերի նախապատրաստմանը միջազգային պատասխանատու մրցումներին:

Գիտահետազոտական աշխատանքներից բացի, պրոբլեմային լաբորատորիան ապահովել է ոչ միայն հանրապետության բոլոր հավաքական թիմերի գիտական սպասարկման ծառայությունը, այլև ակտիվորեն մասնակցել է համամիութենական հավաքներին, օլիմպիական խաղերին և միջազգային մրցումներին նախապատրաստվելու գործին: Երկար տարիներ ջրագնդակի ԽՍՀՄ հավաքական թիմի գիտական սպասարկումը վստահված էր լաբորատորիայի աշխատակիցներին: Հաշվի առնելով գիտական սպասարկման

գործի ծավալի աճը՝ 1979 թ. լաբորատորիայի հիման վրա ստեղծվեց գիտամեթոդական և բժշկակենսաբանական սպասարկման կենտրոն:

Պրոբլեմային լաբորատորիայի գիտահետազոտական աշխատանքների արդյունքները ամփոփվել են բազմաթիվ գիտական աշխատանքներում, այդ թվում շուրջ 1200 թեզիսներում, 84 կիրառական ակտերում:

Լաբորատորիայի աշխատակիցներ Ռ.Ջուղանյանը, Դ.Մախմուտովան, Ի.Օգանովան, Մ.Աղաջանյանը, Ֆ.Բուրյակինը, Հ.Ավանեսյանը, Ռ.Թորոյանը, Հ.Կարապետյանը, Տ.Ասատրյանը զեկուցումներով հանդես են եկել Ռուսաստանում, Մերձբալթյան երկրներում, Սկանդինավյան երկրներում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Լեհաստանում, Հունաստանում, ԱՄՆ-ում, Մեքսիկայում, Կանադայում և այլ երկրներում:

Լաբորատորիան իր հերթին կազմակերպել է բազմաթիվ համամիութենական և հանրապետական գիտաժողովներ, որտեղ ելույթ են ունեցել տարբեր քաղաքներից հրավիրված բազմաթիվ անվանի գիտնականներ:

Պատահական չէ, որ լաբորատորիան համարվում է ինստիտուտի և հանրապետության գիտական կադրերի դարբնոցը: Լաբորատորիայում բարենպաստ պայմաններ է ստեղծվել բազմաթիվ ուսանողական գիտափորձերի համար, մշակվել են կուրսային և դիպլոմային բազմաթիվ աշխատանքներ: Գիտաշխատողների և ինստիտուտի դասախոսների մեծ մասը իրենց թեկնածուական և դոկտորական աշխատանքները կատարել են լաբորատորիայում: Արդյունքում՝ պաշտպանվել է 38 թեկնածուական և 3 դոկտորական թեզ:

Լաբորատորիան օգնում է ինստիտուտի ամբիոններին՝ իրագործելու իրենց գիտական մտահղացումները: Լաբորատորիայի գիտական աստիճան ստացած մի շարք աշխատակիցներ անցել են դասախոսական գործունեության: Ամբիոնների և պրոբլեմային լաբորատորիայի համագործակցությունը բարենպաստ ազդեցություն ունեցավ ինստիտուտի դասավանդման մակարդակի վրա:

Գիտական գործունեությանը զուգընթաց՝ պրոբլեմային լաբորատորիայում կատարվել են գյուտարարական որոնումներ: Այժմ լաբորատորիան ունի 5 հեղինակային վկայական:

Պրոբլեմային լաբորատորիայի կոլեկտիվը ակտիվորեն մասնակ-

ցել է այնպիսի հասարակական կազմակերպությունների աշխատանքներին ինչպիսիք են Հայաստանի սպորտային հոգեբանության, սպորտային բժշկության ֆեդերացիաները, Ֆիզիոլոգների ասոցիացիան և «7-ը դեկտեմբերի, 88» բարեգործական կազմակերպությունների աշխատանքներին: 1989-1994 թթ. հոգեբանության բաժանմունքի ղեկավար և «7-ը դեկտեմբերի, 88» բարեգործական կազմակերպության նախագահ Հ.Ավանեսյանի նախաձեռնությամբ գործել է երկրաշարժից, պատերազմից տուժածների և փախստականների հոգեբանական վերականգնման կենտրոնը:

Պրոբլեմային գիտահետազոտական լաբորատորիան 1966-1989 թթ. անմիջականորեն մասնակցություն է ունեցել ԽՍՀՄ Ժողովուրդների սպարտակիադաներին հանրապետության հավաքական թիմերի նախապատրաստման գործին:

1995 թ. հուլիսի 1-ից պրոբլեմային գիտահետազոտական լաբորատորիան վերանվանվեց ֆիզիկական կուլտուրայի և սպորտի գիտահետազոտական կենտրոն:

Այսօր էլ գիտահետազոտական կենտրոնը շարունակում է իր գործունեությունը և իրականացնում հանրապետության հավաքական թիմերի գիտական սպասարկումը:

ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՄԱՐԶԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ

Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի մարզական ակումբը (ՖԻՄԱ) կազմավորվել է 1946թվականին՝ «Բոլշևիկ» կամավոր սպորտային ընկերությանը կից:

ՖԻՄԱ-ն ինստիտուտի մարզական և տեսական ամբիոնների հետ համատեղ զբաղվում է ուսանողության մարզական վարպետության բարձրացման, ներինստիտուտային մարզական և զանգվածային տարբեր միջոցառումների կազմակերպման, հանրապետական մարզական միջոցառումներին, ինստիտուտի հավաքական թիմերի նախապատրաստման և մրցումների մասնակցության հարցերով: 1959թ. կառուցվեց ինստիտուտի նոր, հարմարավետ շենքը, իր մարզաբազաներով՝ մարմնամարզության, մարզախաղերի, ծանրամարտի դահլիճներ,

լողավազան, հարակից մարզական հրապարակներ, որոնք բավարարում էին ինստիտուտի մարզական և զանգվածային միջոցառումների կազմակերպման և անցկացման պահանջները: Ստեղծված պայմանները հնարավորություն ընձեռեցին ուսանող-մարզիկների սպորտային վարպետությունը բարձրացնելու, հանրապետության առաջնություններին լավագույնս մասնակցելու և հանրապետության հավաքական թիմերը ուսանող-մարզիկներով համալրելու համար:



Մարզական ակումբի գործունեությունը ավելի բուռն թափ ստացավ, երբ 1969թ. հանրապետության Սպորտկոմիտեի կոլեգիայի որոշմամբ ՖԻՄԱ-ին իրավունք տրվեց հանրապետական մրցումներին մասնակցել մարզական ընկերության կարգավիճակով, որը խթան հանդիսացավ ինստիտուտի հավաքական թիմերի աճի և սպորտային վարպետության բարձրացման համար:

Այդ տարիներին ինստիտուտի աթլետիկայի, մարմնամարզության, ծանրամարտի, ֆուտբոլի, հանդբոլի, բասկետբոլի, վոլեյբոլի, ըմբշամարտի, բռնցքամարտի, թիավարության, տուսերամարտի, լողի, ջրագնդակի և այլ մարզաձևերի հավաքական թիմերը, որպես կանոն, նվաճում էին հանրապետության ուժեղագույնների կոչումը: Բացի ուսանող-մարզիկների մարզական վարպետության բարձրացումը, մարզական ակումբի գործունեությունը նպատակաուղղված էր աշխատակիցների և բնակչության առողջարարական խմբերի աշխատանքների կազմակերպմանը:

1954թ. անց են կացվում ինստիտուտի սպարտակիադաներ 18 մարզաձևերից, որոնց, ընդհանուր առմամբ, մասնակցում է ուսանողության 70-75%-ը: Անցկացվող սպարտակիադաները, որպես կանոն, վեր են ածվում յուրահատուկ տոնի, որը հանդիսանում է մարզական և տեսական ամբիոնների կողմից կատարված մարզական աշխատանքների ստուգատես: Յուրաքանչյուր կիսամյակը մեկ ան-

գամ ՖԻՄԱ-ի և ամբիոնների ջանքերով անց են կացվում տարբեր մարզաձևերի առաջնություններ:

Ինստիտուտում բարձր հիմքերի վրա են դրված զանգվածային մարզական միջոցառումները՝ նվիրված վաստակաշատ աշխատակիցների, զոհված ազատամարտիկների հիշատակին:

Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի հիմնադրման օրվանից ուսանող-մարզիկները մասնակցել են օլիմպիական խաղերի, աշխարհի և Եվրոպայի առաջնությունների և միշտ բարձր են պահել հայկական սպորտի պատիվը: Նրանցից արժանի են հիշատակման Հրանտ Շահինյանը, Ալբերտ Ազարյանը, Արթուր Հակոբյանը, Էդուարդ Միքայելյանը, Էդուարդ Ազարյանը (մարմնամարզություն), Վլադիմիր Ենգիբարյանը, Ալբերտ Նիկոյանը, Նշան Մունչյանը, Իսրայել Հակոբկոխյանը (բռնցքամարտ), Նորայր Մուշեղյանը, Բենուր Փաշայանը, Ռուբեն Կարապետյանը, Գառնիկ Հովհաննիսյանը, Գուրգեն Բաղդասարյանը, Պավել Մալյանը, Նազար Ալբարյանը, Արմեն Մկրտչյանը, Արայիկ Գևորգյանը (ըմբշամարտ), Սերգո Համբարձումյանը, Յուրի Սարգսյանը, Հոգսեն Միրզոյանը (ծանրամարտ), Իգոր Նովիկովը (ժամանակակից հնգամարտ), Հրաչյա Պետիկյանը, Երջանիկ Ավետիսյանը (հրաձգություն), Ֆաինա Մելնիկը, Վարդան Հովսեփյանը (աթլետիկա), Դավիթ Համբարձումյանը (ջրացատկ), Շավարշ Կարապետյանը (ստորջրյա լող), Օլեգ Կլովցովը, Մեսրոպ Շաբոյանը (հեծանվային սպորտ) և շատ ուրիշներ:

Ինստիտուտի պրոֆեսորադասախոսական անձնակազմը ակտիվորեն է մասնակցում հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում տարվող գիտական, մեթոդական և ժամանակակից մարզման մեթոդների կիրառման աշխատանքներին:

Ինստիտուտի աշխատակիցներից ՀԱՕԿ-ի անդամներ են 8-ը, տարբեր ֆեդերացիաների նախագահության անդամներ են 29-ը: Հանրապետության մրցավարական հանձնաժողովներում ընդգրկված մրցավարների զգալի մասը ինստիտուտի աշխատողներ են:

Ներկայումս ավելի լայն հնարավորություններ են ստեղծվել միջազգային մրցումներում հանրապետության հավաքական թիմերի մասնակցության համար, որտեղ անմասն չեն մնում նաև ինստիտուտի ուսանող-մարզիկները:

Վերջին տարիներին հանրապետության մարզական պատիվը բարձր են պահել ինստիտուտի ուսանողներ Աշոտ Դանիելյանը, Արսեն

Մելիքյանը, Գևորգ Ալեքսանյանը (ծանրամարտ), Լևոն Արոնյանը, Լիլիթ Մկրտչյանը (շախմատ), Կարեն Մնացականյանը, Ռոման Ամոյանը, Մարտին Բերբերյանը, Սուրեն Մարկոսյանը (ըմբշամարտ), Գոհար Գևորգյանը, Քրիստինե Նաջարյանը (սամբո), Մարիամ Գրիգորյանը (կարատե), Արմեն Նազարյանը (ձյուդո), Վահագն Ստեփանյանը (մարմնամարզություն), Արամ Անդրեասյանը (թիավարություն) և շատ ուրիշներ:

Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի մարզական ակումբի նախագահներ են ընտրվել Կ.Վարդանյանը (1946-47թթ.), Բ.Մելիքյանը (1947-49թթ.), Ա.Կոստանյանը (1951-52թթ.), Հ.Ենգիբարյանը (1952-54թթ.), Գ.Սաֆարյանը (1954-69թթ.), Մ.Վեքիլյանը (1969-79թթ.), Բ.Ամիրյանը (1979-87թթ.), Հ.Մելքոնյանը (1987-98թթ.), Կ.Կարապետյանը (1998թ. մինչև օրս):

ԲՈՒԺԿԵՆՏՐՈՆ

Ինստիտուտի հիմնադրման օրից սկսել է գործել բժշկական կաբինետը, որն իրականացնում է ուսանողների առաջին բուժական օգնությունը, ինչպես նաև բժշկական վերահսկումը:

1959 թվականին ինստիտուտը տեղափոխվեց նոր մասնաշենք, որը լայն հնարավորություններ ստեղծեց բժշկական ծառայության համար: Կաբինետին տրամադրվեցին հարմարավետ և ընդարձակ սենյակներ: Կազմակերպվեցին վնասվածքաբանական և ռենտգենաբանական ծառայություններ, ինչպես նաև բժշկական այլ ծառայություններ: Առաջին տարիներին ինստիտուտի բժշկական ծառայությունները ղեկավարվում էր սպորտային բժշկության ամբիոնի կողմից: Բժշկական ծառայությունների պրոֆեսիոնալ մակարդակը բարձրացնելու գործում մեծ ավանդ ունեն ամբիոնի գիտական աշխատողները և բժիշկները՝ Կ.Աբրահամյանը, Ջ.Գալոյանը, Ռ.Մարգարյանը, Դ.Սիմոնյանը և ուրիշներ: Բժշկական գիտությունների թեկնածու Լ.Գևորգյանի և Ռ.Ջուգանյանի ջանքերով ուսանողների բժշկական վերահսկողության գործը դրվեց գիտական հիմքերի վրա:

1968 թվականին բժշկական ծառայությունը առանձնացվեց ամբիոնից՝ որպես ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում: Գլխավոր բժիշկ նշանակվեց Ա.Մելիք-Հակոբյանը, որի ղեկավարությամբ

կազմակերպվեց ուսանողների պարտադիր դիսպանսերացումը, ինչպես նաև ներդրվեց ֆիզիոթերապևտիկ բուժման մեթոդը:

1979 թվականից մինչև օրս ամբուլատորիան ղեկավարում է բժիշկ-վնասվածքաբան Գ.Սարգսյանը: Նրա ղեկավարության ներքո բժշկական ծառայությունը հասել է որոշակի հաջողությունների: Վնասվածքաբանական ծառայությունը գտնվում է պատշաճ մակարդակի վրա, մեծ աշխատանք է կատարվել վնասվածքների ախտականխման ուղղությամբ՝ նվազեցնելով վնասվածքների քանակը:

Բժիշկ Լ.Ա.Չելեբյանի նախաձեռնությամբ ներդրվեցին ուսանողների բուժման նոր ֆիզիոթերապևտիկ մեթոդներ:

Պատշաճ մակարդակի վրա դրվեց նաև դիմորդների ընտրությունը բժշկական հանձնաժողովի կողմից:

Ինստիտուտի բժշկական ծառայության ոլորտում իրենց ներդրումն են ունեցել նախկին գլխավոր բժիշկ Յու.Պողոսյանը, բուժքույրեր Հ.Հարությունյանը, Ն.Սողոմոնյանը և Ա.Ավետիսյանը:

Ներկայումս բուժկենտրոնում աշխատում են իրենց գործին նվիրված բժիշկներ Էվելինա Գրիգորյանը, Զոյա Գասպարյանը, ինչպես նաև փորձառու բուժքույրեր Հռիփսիմե Մալխասյանը, Անատոլյա Բաբայանը, Ռուզաննա Գևորգյանը, Աննա Արզաքանյանը:

Բուժկենտրոնը շարունակում է արդյունավետ օգնություն ցույց տալ ինստիտուտի ուսանողներին և աշխատողներին:

Գիրքը հրատարակվում է

Կարեն Շահինյանի

հովանավորությամբ

Վ.Բ.ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

(Համառոտ տարեգրություն)

Գլխավոր խմբագիր՝ Մ.Իսպիրյան

Խմբագրական խորհուրդ՝ Ռ.Շառոյան, Ֆ.Ղազարյան, Է.Սահակյան, Ա.Բաղասյան, Լ.Մեծոյան

Ստորագրված է տպագրության 03.05.2005: Չափը՝ 60 x 84 1/32: Թուղթը՝ օֆսեթ - 1: Տառատեսակը՝ «Times Armenian»: Տպագրությունը՝ օֆսեթ: Ծավալը՝ 7.625 տպ. մամուլ:

Տպագրվել է «Գևորգ - Հրայր» ՍՊԸ-ի

հրատարակչությունում

Երևան, Գրիգոր Լուսավորիչ 6:
Հեռ.՝ 52-79-74, 52-79-47:
Էլ. փոստ lusakn@rambler.ru